ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

Անվիճելի Ճշմարտություն է, որ մարդը ճանաչողությամբ է
կապվում, սիրում, նվիրվում, ուսում, որպեսզի իրապես ունենանք
հայրենասեր հասարակություն, այսօր պարտավոր ենք մասաղ սերնդին
ընձեռել հայրենիքը ճանաչելու հնարավորություն: Ընդ որում,
հայրենասիրությունը երբեւէ կոչերով չի սերմանվում,
այլ միայն ու միայն ճանաչողությամբ:

Սամվել Կարապետյան

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑ

ՈՒՊԵՇՈՒՅՇ

Ուղեցույցը հրատարակության է պատրաստվել

«Հայաստան» համահայկական հիմնադրամի

հովանավորությամբ

Տպագրվել է

«Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան»

հովանավորությամբ

ՀՏԴ 502.4:94(479.25)
ԳՄԴ 28.088խ6+63.3(5Հ)
Կ294

Կարապետյան Սամվել
Կ294 Խոսրովի արգելոց / Ս. Կարապետյան: ՀԵՈՒ հիմնադրամ.-Եր.:
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2022.-128 էջ:

Բնության և պատմության հուշարձաններով հարուստ Հայաստանի գողտրիկ անկյուններից են Խոսրովի արգելոցը և նրան հարակից գոտին: Այս ուղեցույցը կարող է օգտակար լինել այն զբոսաշրջիկների համար, ովքեր ցանկություն ունեն ծանոթանալու արգելոցի բուսական, կենդանական աշխարհին, երկրաբանությանը և պատմական հուշարձաններին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

www.armenianarchitecture.am, www.raa.am, www.raa-am.org
raayer@sci.am

ՀՏԴ 502.4:94(479.25)
ԳՄԴ 28.088խ6+63.3(5Հ)

ISBN 978-9939-843-52-0
© ՀԵՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2022

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿ՝
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 2002 Թ.

ՎԵՐԱԽՄԲԱԳՐՎԵԼ Է 2022 Թ.

ԵՐԵՎԱՆ - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՆԱԽԱԲԱՆ 5

ՄԱՌԼԵՆ ՍԱԹՅԱՆ
ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 15

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅ. ԵՐԹՈՒՂԻՆԵՐ ԳԱՌՆՈՒՅ 26

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅ. ԵՐԹՈՒՂԻՆԵՐ ՈՒՐՅԱՁՈՐՒՅ.....33

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՏՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ.....40

ԷԼԵՈՆՈՐԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 99

ՄԱՐՏԻՆ ԱԴԱՄՅԱՆ, ՀՐԱՉՅԱ ՂԱՁԱՐՅԱՆ
ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 110

ՆԱԽԱԲԱՆ

ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հնագույն ժամանակներում Հայոց աշխարհի տարածքը, մանավանդ լեռնային և նախալեռնային շրջանները ծածկված են եղել անտառներով: Ի հավելումն դրա՝ հայոց թագավորների նախաձեռնությամբ տնկվել են արհեստական անտառներ: Հայրենի բնությունը հարստացնելու, երկիրը շենացնելու և տնտեսությունն ուժեղացնելու նպատակով դրական միջամտությունները՝ մեր բնությանն ու շրջակա միջավայրին, բնորոշ են Հայոց պատմության հզոր ժամանակափուլերին: Դրա վկայությունն են բազմաթիվ այգետնկումները, բուծարանները և այլն:

Ըստ պատմահայր Մովսես Խորենացու՝ մ.թ.ա. Ա հազարամյակի առաջին կեսին մայրաքաղաք Արմավիրի մոտ տնկվել է Սոսյաց անտառը, որը նվիրված էր Արա Գեղեցիկի որդուն՝ Անուշավան Սոսանվերին: Հնում անտառի սոսիների սաղարթների սոսափյունից, ըստ քամու ուժի և ուղղության, հմայություններ և գուշակություններ էին անում Հայոց աշխարհում:

Երվանդ Դ արքան Շիրակում տնկել է Ծննդոց անտառը մ.թ.ա. Գ դարի վերջին: Այն գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արշարունիք գավառում՝ Ախուրյան գետի աջ կողմում՝ տարածվելով Բագարան քաղաքի շրջանում՝ Կապույտ լեռան ստորոտից մինչև Երասխի ափերը՝ Երվանդակերտ բերդաքաղաքի մոտ: Անտառը պարսպապատ էր և լցված որսի կենդանիներով (այծյամ, եղնիկ, եղջերու, ցիռ, վարազ): Ըստ ավանդության՝ քրմերը նորածինների՝ ինչ աստղի տակ ծնված լինելու մասին գուշակություններ էին անում այնտեղ: Այստեղից էլ այս անտառի անունը՝ Ծննդոց:

Սակայն թե՛ Սոսյաց, թե՛ Ծննդոց անտառները, որպես այդպիսիք, մեզ չեն հասել: Հայաստանի անտառները կիսել են իրենց երկրի բնիկ ժողովրդի ճակատագիրը՝ կրելով բազմաթիվ հարվածներ: Դրանք դեռ վաղ ժամանակներում, նաև միջին դարերում ոչնչացվել են օտարերկրյա զանազան ասպատակությունների հետևանքով:

ԳՐԱՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երբ երկիրն առժամանակ խաղաղվում է, Խոսրով Կոտակը (թագավորել է 330-338 թթ.) զբաղվում է շինարարական գործերով: Արտաշատ մայրաքաղաքի կլիմայական և տեղանքի աննպաստ պայմանների պատճառով նա արքունական պալատներ է կառուցում նրանից հյուսիս՝ մի բարձրադիր վայրում, որի շուրջը հետագայում ծավալվում է Դվին մայրաքաղաքը: Միաժամանակ նրա հրամանով տնկվում է կաղնիների՝ այն օրերի համեմատությամբ բավականին մեծ մի անտառ: Այն սկսվում էր Գառնի բերդի մոտից, տարածվում էր Ազատ գետի ձորով մինչև Դվինի Տիկնունի ապարանքը, այնտեղից էլ՝ մինչև Արտաշատ և Արաքս: Անտառի առաջին մասը կոչվում էր Տաճար մայրի, իսկ երկրորդը՝ Խոսրո-

վակերտ: Նրանց մեջ թագավորական որսի համար պահվում էին զանազան բազմաթիվ կենդանիներ:

Խոսրովի անտառի մասին առաջին հիշատակությունը գտնում ենք Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատության մեջ. Փոքր Խոսրովը *«...անտառ տնկեց Ազատ գետի մոտ, որ մինչև այսօր էլ կոչվում է նրա անունով: Նաև արքունիքը փոխադրում է անտառից վերև՝ մի բլուրի վրա և շինում է արևից պատսպարված ապարանք. (այն տեղը) պարսկական լեզվով կոչվում է Դվին, որ նշանակում է բլուր»*[1]:

Փավստոս Բուզանդը «Հայոց պատմություն» երկում գրում է. *«Երբ Հայոց երկիրն առ ժամանակ խաղաղացավ, ապա Հայոց Խոսրով թագավորը հրամայեց պարգևներ տալ այն քաջ մարդկանց, որոնք նրա համար աշխատեցան և պատերազմի ճակատամարտերում իրենց անձը դրին Մեծ Հայքի աշխարհի համար: Նա Վաչե զորավարին տվեց Ջանջանակի ակունքները, Ջրաբաշխը և Ցլու Գլուխը բոլոր փոքր գավառներով, նույնպես և մեծամեծ պարգևներ մյուս նախարարներին:*

Եվ հրաման տվեց թագավորն իր զորավարին՝ աշխարհից բազմաթիվ մշակներ հավաքել, անտառներից վայրի կաղին հանել ու բերել, տնկել Արարատյան գավառում, սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես մերի տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև՝ մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս մերին կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: (Մերին) աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ երեներ ու գազաններ ժողովել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի՝ զբոսանքի և ուրախության տեղեր դառնան: Վաչեն անմիջապես կատարեց թագավորի ասածները»[2]:

Խոսրովի անտառը ստեղծվեց խաղաղ ժամանակ: Այդ խաղաղությունը, սակայն, կարճ է տևում: Խոսրովակերտն էլ անմասն չի մնում պատերազմից, ինչի մասին կարդում ենք Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մեջ: Նա Խոսրովակերտը հիշատակում է ճակատամարտի առնչությամբ. *«Եվ Հազարավուխտն ու նրա հետ եկած ավագներն ...առավոտյան շտապ դիմեցին Հայոց զորավար Վահան Մամիկոնյանի ու այն ժամին նրա հետ գտնվող զորքերի վրա: Եվ հասնելով Դվին քաղաքի մոտ՝ Հազարավուխտը ճակատ հարդարեց ըստ պատերազմական գործի օրենքների և, զորքը դասավորելով այն անտառի մեջ, որ Խոսրովակերտ է կոչվում...»*[3]:

Սեբեոսի «Պատմութիւն» աշխատության մեջ կարդում ենք. *«Եւ հասեալ թշնամին (Բուշայն) ի կամուրջն Մեծամաւրի ոչ կարաց անցանել: Բայց ունէին առաջնորդ իւրեանց զՎարդիկ իշխան Մոկաց, որ կոչէր Ակնիկ: Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամաւրի՝ հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և*

1 **Մովսես Խորենացի**, Հայոց Պատմություն, Երևան, 1997, էջ 216:

2 **Փավստոս Բուզանդ**, Հայոց Պատմություն, Երևան, 1987, էջ 31, 33:

3 **Ղազար Փարպեցի**, Հայոց Պատմություն, Երևան, 1982, էջ 351:

եկեալ բանակեցան ի յեզր մայրոյն Խոսրովակերտի»[4]:

Առաքել Դավրիժեցին իր աշխատության մեջ հիշատակում է Խոսրովի անտառի որոշ վայրեր: Որպես ականատես փաստելով 1604 թ. Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթը Հայաստանից՝ 350.000 հայերի բռնի տեղահանությունը «ոչ թե մեկ կամ երկու, այլ բազում գավառներից» համարում է «աշխարհակործան»: Նկարագրելով տեղահանվողների տառապանքը, սաստիկ նեղությունները՝ ծեծ, տանջանք, սպանություն՝ պատմիչը թվարկում է Հայոց աշխարհի դատարկված բազմաթիվ վայրեր՝ տասնյակների շարքում նշելով նաև «...բովանդակ Արարատյան դաշտը, ...Գառնու ձորը, Ուրծաձորը...»[5]:

Հետագայում նաև Մ. Չամչյանը, Մ. Քաջունին, Լեոն, անդրադառնալով Հայոց պատմության նշանակալի դեպքերին ու դեմքերին, նույնպես հիշատակում են Խոսրովի անտառը՝ հիմնականում խոսելով նույն փաստերի մասին:

Նորժամանակյա պատմության մեջ ևս բազմիցս հիշվում է Խոսրովի անտառը:

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ ժողովուրդը ոգեղենացրել և անձնավորել է հայրենի բնությունը:

Խոսրովի արգելոցի լեռներն ու ձորերը, դաշտերն ու գետերը և անձավները հիշատակվում են ավանդություններում, պատմական հուշերում: Ժողովուրդը հավատում է իր ազգային առասպելներին, նրանց իսկությանը, պատմականությանը: Հաճախ էլ առասպելները ժողովրդի ցանկությունների իրականացումն են: Ավանդազրույցը կարող է առնչակից դարձնել ծառը, քարը, թուփը, լիճը, աղբյուրը, գետը, բնության երևույթն այս կամ այն անվան հետ, լինի դա իրական, թե առասպելական, դրական, թե բացասական, հերոսական, թե թշնամական: Ավանդություններում է դրսևորվում ժողովրդական պարզ ու բյուրեղային իմաստնությունը: Անգամ պատումը կարող է աղոտանալ կամ անհետանալ, բայց կարող է պահպանվել անունը: Դըժվար է կռահել, թե ինչ ավանդությունից է ծնվել, որպես փրկարար, ամառային շոգերին Գեղամա լեռներից փչող քամու անունը՝ Լուսավորչի քամի: Խոսրովի արգելոցով անցնելով՝ կարող ես հիշել ավանդություններ, առասպելներ՝ հաճախ համանման մոտիվներով ու կերպարներով: Ըստ առասպելական մի ավանդության՝ Հայոց առաջին քարագործն ու քանդակագործը եղել է Տորք Անգեղը՝ Հայկ Նահապետի թոռան՝ Պասքամի տոհմից: Նա եղունգներով արծիվներ և այլ բաներ է փորագրել ապառաժներից պոկված որձաքարերի վրա: Հայաստանի մի շարք վայրերում, նաև Գեղամա լեռներում հազարավոր հիանալի ժայռապատկերներ կան, որոնք Տորքին վերագրված քարարվեստի նմուշներից են: Գեղամա լեռների ստորոտում՝ Բերդատակի (Կալաղիպի) մոտ չորս վիշապաքար կա, որոնց վրա, ըստ ժողովրդական զրույցի, շղթաներ կան՝ շատ նման պառկած օձի. այդտեղ երկնքից վիշապ է իջել, որ «ժողովրդին վերջացնի», բայց Աստված դրան քարացրել է:

Գեղամա լեռների երկու սարերի մասին է ահա այս զրույցը. *«Սև սարը ժամանակին եղել է մի բռնակալ մարդ, որը քար է դարձել ժողովրդի անեծքով, իսկ Կարմիր սարը՝ մուրազաբեր մի աղջիկ, որին ուժով տիրացել է բռնակալը: Չկարողանալով վայելել աղջկա սերը՝ Սև սա-*

4 Պատմութիւն **Սեբէոսի**, Երևան, 1979, էջ 138:

5 **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Երևան, 1983, էջ 52:

ը մինչև հիմա ամպի պես որոտում է, գոռում, գոչում նրա վրա ու չի կարողանում մոտենալ: Ասում են, թե դրա համար Սև սարը լալիս է անզոր կատաղությունից և իր վրեժը հանում մարդկանցից: Ամառվա կեսին մեկ էլ տեսար մթնում է, բուք ու բորան անում, խեղդում մարդ ու անասուն: Առաջին սարի հողը սև է, դրա համար էլ Սև սար է կոչվում, երկրորդինը՝ կարմիր, դրա համար էլ Կարմիր սար է կոչվում»[6]*:*

Ասում են նաև, որ Գեղամա լեռներում ժամանակին բազմաթիվ աղբյուրներ են եղել՝ Աղմաղանի աղբյուրները. «*Նազիխանը ուղտերի քարավաններով բուրդ է կրել տալիս և խցում բոլոր աղբյուրների ակունքները, որպեսզի իր հակառակորդները աչք չդնեն այդ ջրառատ վայրերին*»[7]*:*

Փառահեղ է Գառնո ձորը՝ հեթանոսական տաճարով, գահավեժ կիրճով, Ազատ գետի արծաթե գալարներով: Երևակայությունն ու իրական պատմությունն իրար հյուսվելով են ստեղծում անթիվ պատումներ: Դա զարմանալի չէ, որովհետև մարդը, տեսնելով այս անհերևակայելի տեղանքը, բնության այս զարմանազան սքանչելագործությունները, ընկնելով այլ՝ անհնարին չափումների մեջ, ակամայից պիտի դիմեր սեփական երևակայությանը, քանի որ այսպիսի հեքիաթային վայրում կարծես թե բնական են միայն հեքիաթային իրադարձությունները: Ահա և նմանատիպ մի ավանդազրույց. «*Յոթ եղբայր և յոթ քույր են լինում: Դրանք գրազ են գալիս՝ եղբայրները Դվինի, իսկ քույրերը Աղբաշի կողմերը մեկական առու հանել: Տարին լրանալու մոտ եղբայրները տեսնում են, որ քույրերն առաջ են ընկել: Գիշերն անավարտ առվի տեղը սպիտակ կտավ են փռում ու առավոտը հայտնում են քույրերին, որ իրենք արդեն փորել են առուն ու ջուրը բաց թողել: Քույրերը, տեսնելով հեռվից պսպղացող կտավը, կարծում են,*

6 **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 18:

7 Նշվ. աշխ., էջ 101:

որ դա ճիշտ է: Դարդից բոլոր յոթն էլ նետվում են գետը և խեղդվում: Եղբայրների փորած առաջին առուն այժմ կոչվում է Յոթն ախպոր առու»[8]:

Միջնադարյան Հայաստանի ամենաուշագրավ հուշարձաններից է Գեղարդավանքը կամ Այրիվանքը (ԺԳ դ.): Անհայտ են վանքի ճարտարապետի և վարպետների անունները: Ժամատներից մեկի գմբեթի նոնազարդ երիզին փորագրված անուններից մեկի՝ վարպետ Գալծագի և վանքի կառուցման պատվիրատուներ Պռոշ իշխանի որդու՝ Պապաքի, կնոջ՝ Ըռուզուքանի հիշատակը ներկայացնող այս զարմանահրաշ կերտվածքի պատմությանն առնչվում է նաև այս զրույցը. անմոռաց հիշատակ թողնելու նպատակով Գեղարդա վանքը կառուցել են ազնվական ծագում ունեցող քույր ու եղբայր: Գործի սկիզբն իմանալու համար եղբայրը դիմում է Աստծուն: Լուսաբացին նա իր կռանը գտնում է ապառաժի ծայրին դրված: Հասկանում է, որ վանքի շինությունը պետք է այդտեղից սկսել: Քույր ու եղբայր գործի են անցնում: Եղբայրը ջարդում է ապառաժը, իսկ քույրը, ջարդած քարերը մազերի մեջ դնելով, բարձրացնում է ձորից: Տարիներ շարունակ ժայռը փորելով՝ նրանք կառուցում են իրենց ուխտած վանքը[9]:

Ահա և մեկ այլ ավանդություն. «*Աշխարհակալին Լենգթեմուրայ լուեալ զանուանելի հրաշագործութեանց սրբազան վանիցս, անձամբ անձին դիմէ ի փորձ լինել պատմաբանութեանս: Անթիւ զօրօք յարձակի ի ձորն ամայի, հրամայէ յոխորտանօք ծաղրաբանելով բերել նմա զսուրբ նշանն Գեղարդայ: Բայց այն, ինչ ձեռք բարձրացուցանեն զնիզակն առ հարկանել զսուրբ նշանն, յական թօթափել գունդք բիւրաւոր զօրաց անմարմնոց, զրահաւորեալ և ի զգեստս երփներանգս, յարձակին ի վերա ամենուստեք: Թշնամին սուրբ հաւատոյ ոչ կարացեալ*

8 Նշվ. աշխ., էջ 91-92:

9 Ավանդությունը տե՛ս նշվ. աշխ., էջ 226:

տանել անգամ և զտեսիլ զայս ահաւոր, տեսանելով մանաւանդ զշփոթ և զհարուած իւրայնոցն, յորոց բազմաց դէմ ի թիկունս դառնայ, այլոց ձեռք գօսանան, բազմաց կուրութիւն յաւիտենական փակէ զլոյսն տունջեան, այլք իբրև արկան անկենդան անդ մնան կարկառեալ, դառնայ առ իւրսն ողբագին...: Ապա մեծաւ հառաչանօք մաղթէ զթողութիւն, ընծայէ զպարգևս մեծամեծս և դառնայ յետս»[10]:

Խոսրովում գերակշռում են գիհու անտառները: Ահա գիհու հետ կապված մի ավանդություն. «*Հրեաներից հալածվելիս՝ Քրիստոսը փախչում, մտնում է գիհու (գենու) անտառը և պահվում է ծառերի խիտ ճյուղերի տակ: Երբ ազատվելով թշնամիների հետապնդումից՝ նա դուրս է գալիս անտառից, ասում է. «Օրհնյա՛լ լինես, գիհի՛, միշտ կանաչ մնաս, քաղցր հոտը քեզանից անպակաս լինի»: Դրանից է, որ գիհին միշտ կանաչ է և քաղցր հոտ ունի»*[11]:

Ըստ այդմ էլ, գիհին իրեն բնորոշ հատկություններով՝ անուշ բուրմունքով և կանաչությամբ է զարդարում արգելոցը: Ծառը սրբացված է նաև Հայոց առաջին կաթողիկոսի առնչությամբ: Այդ է վկայում հետևյալ պատումը. «*Գրիգոր Լուսավորչի մահվանից շատ տարիներ հետո հովիվները գտնում են նրա մարմինը մի մեծ գիհի ծառի փչակի մեջ՝ կոթնած վիճակում, գավազանը ձեռին: Նրանք այդտեղ էլ թաղում են Լուսավորչին և վրան մի գմբեթավոր գերեզման-մատուռ կառուցում»*[12]:

Եվ վերջապես շատ սրտառուչ մի պատում, որը կարելի է դիտել իբրև հարազատի մասունքները ճիշտ տեղում հանգըրվան դարձնելու փորձ. «*Ուրցաձորի մոտակա Կոտուց սարի լանջին՝ աղբյուրի մոտ, երկու մենավոր ծառերի տակ կա մի հին գերեզման, որը ժողովուրդը անվանում է Խոսրով Կոտակի գերեզման»:*

ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ-ԱՐԳԵԼՈՑԸ

Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի անասելի բազմազանությունը մի շարք բարենպաստ գործոնների առկայության արդյունք է: Դրանք են երկրաբանական բարդ կառուցվածքը, հրաբխայնությունը, հողերի, կլիմայի ու ռելիեֆի խիստ խայտաբղետությունը, հեռավորությունը ծովային ավազաններից, բարենպաստ աշխարհագրական դիրքը և այլն:

Հայաստանի տարածքում աճող 3200 բարձրակարգ ծաղկավոր բույսերից 180-ը հայկական էնդեմներ են, 387-ը տարբեր չափերի պահպանության կարիք ունեն և ընդգրկված են ռեգիոնալ Կարմիր գրքում: Կենդանական աշխարհը ներկայացվում է անողնաշարավորների, կաթնասունների և թռչունների մեծ բազմազանությամբ:

Բնապահպանության նպատակով հանրապետության տարածքում ստեղծվել է 4 արգելոց՝ Խոսրովի, Դիլիջանի, Շիկահողի, Էրեբունու:

«Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ» խոսքի լիակատար ապացույցներից է Խոսրովի անտառ-արգելոցը: Դարեր շարունակ Խոսրովի անտառը հայոց պատմության մեջ հիշատակվել է որպես ազնվականների որսատեղի, ուր բազմացնելու նպատակով տարբեր վայրերից, հատկապես Պարսկաստանից կենդանիներ են բերվել:

1958 թ. բուսական և կենդանական աշխարհների, արժեքավոր տեսակների պահպանման, բարելավման և բազմացման նպատակով ութ առանձին հողակտորներից բաղկացած Խոսրովի անտառը պաշտոնապես հայտարարվում է

10 Նշվ. աշխ., էջ 226-227:
11 Նշվ. աշխ., էջ 115:
12 Նշվ. աշխ., էջ 275-276:

արգելոց: Սա անձեռնմխելի, նվիրական տարածք է, որտեղ, բուն տեսքով ու վիճակով հոգ է տարվում և պահպանվում բնության ամբողջ համալիրը: Սա մի վայր է, որտեղ օրենքով արգելված են որսը և փայտահատությունը:

1992 թ. Խոսրովի արգելոցի սահմանները միակտոր դարձնելու նպատակով մի փոքր ընդլայնվում են: Այն զբաղեցնում է ՀՀ Գեղամա լեռնաշղթայի հարավարևմյան Ուրծ, Երանոս, Դահնակ, Իրից, Խոսրովասար լեռնաբազուկների լանջերը՝ մոտ 29196 *հա*:

Խոսրովի անտառ-արգելոցը (ծովի մակերևույթից բարձր է 1400-2250 մ) գտնվում է Երևանից հարավ-արևելք՝ Գեղամա հրաբխային լեռների հարավարևմտյան լանջերին՝ Ազատ և Վեղի գետերի ավազաններում: Ունի 29196 *հա* տարածություն, որից ավելի քան 9000 հեկտարն անտառածածկ է:

Արգելոցի սահմաններում աճում են ավելի քան 1800 տեսակի բույսեր, որոնցից 156-ը համարվում են հազվագյուտ և անհետացող:

Խոսրովի արգելոցում պահպանվում են Հայկական Կարմիր գրքում գրանցում ստացած 13 տեսակի կաթնասուններ, այդ թվում՝ առաջավոր ասիական ընձառյուծը, բեզոարյան այծը, վայրի ոչխա-

ը (հայկական մուֆլոն), անդրկովկասյան գորշ արջը, լուսանը:

Հայկական Կարմիր գրքում գրանցված 67 տեսակի թռչուններից արգելոցի տարածքում կան 16 բնադրող գիշատիչ թռչուններ, այդ թվում՝ սև անգղ, գառնանգղ, արծիվ, ուրուր և այլն:

Խոսրովի անտառ-արգելոցը, բնության նվիրական տարածք լինելուց բացի, իր երկարակեցության շնորհիվ նաև մասնակից է պատմական նշանավոր իրադարձությունների: Այն ազգային պատմության յուրօրինակ մատյան է: Այստեղ բնականն ու ձեռակերտը «դաշինք են կազմել» մի ամբողջության մեջ՝ որպես բուսական, կենդանական, ճարտարապետական հուշարձանների ընդարձակ համալիր: Այստեղ պահպանվել են մեծ թվով պատմական հուշարձաններ՝ քարանձավային բնակավայրեր, վաղմիջնադարյան վանքեր, խաչքարեր, եկեղեցիներ ու բերդեր:

ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿԻ ԳՈՐԾԸ

Հայաստանի Արշակունյաց Տրդատ Մեծ թագավորի որդին՝ Խոսրով Բ Կոտակ արքան[13], դեռևս IV դարում՝ շուրջ 1700 տարի առաջ, Գեղամա լեռների հարավային լանջերը համարելով արգելված գոտի, անտառ տնկեց և այն դարձրեց պալատականների որսատեղի:

Անցել է 17 դար: Այդ տեղանքում եղել են բազում ասպատակություններ, մարտեր, ցնցումներ: Ժամանակը մոռացության է մատնել կամ սրբագործել է շատ դեմքեր, դեպքեր և իրադարձություններ: Մինչ այժմ պահպանվել են հիմնադրի անունը կրող տեղանուններ՝ Խոսրով գետակ, Խոսրով գյուղ (Արարատի մարզ) և այլն: Կա մի անհայտ գերեզման, որը

13 Ծննդ. թիվը՝ անհայտ. թագավորել է 330 թ.-ից մինչև կյանքի վերջը՝ 338 թ.: Վախճանվել է Դվինում և ամփոփվել հայ Արշակունիների տոհմական գերեզմանոցում՝ Դարանաղյաց Անի ամրոցում:

նույնպես անմահության է արժանացել Խոսրով Կոտակի անունով:

Գոյատևում է նաև Խոսրովի 1700-ամյա անտառը՝ այդ զարմանալի համալիր հուշարձանը, որ միավորում է վաղնջականն ու արդիականը, որ բովանդակում է բուսական ու կենդանական եզակի հարըստություններ, ճարտարապետական անզուգական հուշարձաններ: Եվ հետադարձ հայացք ձգելով այն ժամանակներին՝ 330-ական թթ.՝ հասկանալի է դառնում, որ պատմությունը կերտում են ոչ միայն զենքով, արշավանքներով, ռազմական հաջողություններով, այլև ստեղծագործ աշխատանքով, որ անմահանում են ոչ միայն ռազմական գործիչները, անմահ հերոսները, այլև հողը խնամողները, միջավայրը շենացնողները: Դա նվազագույն պարտականությունն է, որ պետք է անի երկրի ամեն քաղաքացի: Եթե դա չի արվում, ոչինչ՝ չգո է դառնում ցանկացած հերոսություն, ռազմական հաղթանակ ու հաջողություն: Այդպես է անմահացել Խոսրով Բ արքան՝ փոքրամարմին ու կարճահասակ այդ այրը, որը, ուժային մարտերում փայլելու անունակությամբ հանդերձ, մեկ տասնամյակից քիչ ժամանակում կարողացավ երկիրն ազատել թշնամուց և հետագայի համար ապահովել տևական խաղաղություն: Այսինքն՝ իր նախաձեռնած և հովանավորած անտառատնկմամբ Խոսրով Բ արքան մեծ նշանակետով խնդիր լուծեց. Այրարատ աշխարհի այդ տոթակեզ շրջանը բարեփոխեց, շնչավորեց զովասուն օդով (անտառը հողագնդի թոքերն է): Հիմնեց ավելի բարենպաստ դիրքով նոր մայրաքաղաք՝ Դվինը, այնտեղ տեղափոխեց արքունիքը: Տնկեց Տաճար Մայրի (Մեծամորի, Դվինի և Գառնու միջև) և Խոսրովակերտ (Երասխի, Դվինի և Արտաշատի միջև) արգելոց-անտառները, որոնք, սկզբնապես լինելով արքայի և ազնվական դասի որսազվարճության ու ռազմական ուսուցման վայրեր, հետագայում դարձան բուսական, կենդանական, քարակերտ հուշարձանների նվիրական գոտի՝ պահեստարան, ապաստան և այլն:

Ուստի և պատահական չէ, որ դարեր շարունակ հնչել է Խոսրով թագավորի անունը և ազգային ու պետական հոգածության շնորհիվ դարձյալ պիտի հնչի Խոսրովի անտառ-արգելոց տեղանվան շնորհիվ:

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՄԱՌԼԵՆ ՍԱԹՅԱՆ

Ծանոթանալով Խոսրովի արգելոցի տարածքի երկրաբանական քարտեզին՝ ակամայից մտածում ես երկրաբանների մի քանի սերունդների խոշոր աշխատանքի մասին, որով հաջողվեց հայտնաբերել այդ տարածքի երկրաբանական բարդ կառուցվածքը:

Արևմտաեվրոպացի հայտնի երկրաբաններ Գ. Աբիխը (19-րդ դ. երկրորդ կես), Պ. Բոննեն (20-րդ դ. սկիզբ), այս տարածքն անցնելով, մասամբ քարտեզագրել են: Համակարգված երկրաբանական աշխատանքները, սակայն, սկսվել են 20-րդ դարի երկրորդ կեսին, և դրանց շնորհիվ ամփոփվել են երկրաբանական քարտեզագրության առաջին արդյունքները (Կ. Պաֆենգոլց, Ռ. Առաքելյան, Վ. Ռենտգարտեն, Վ. Եգոյան, Վ. Հակոբյան, Ն. Ազարյան, Ժ. Ստեփանյան, Մ. Սաթյան և ուրիշներ): Ստեղծվել է առաջին մանրամասն երկրաբանական քարտեզը, բացահայտվել՝ ապարների տարատեսակները և դրանց հասակը: Սակայն սալերի տեկտոնիկայի տեսությունից ելնելով (Ա. Պեյվե, Վ. Խայն, Ա. Կնիպպեր, Ս. Սակալով, Մ. Լոմիզե)՝ առաջարկվել է այլ կառուցվածքային և առաջացման սխեմա, որի հիմքում դրված էր Վեդու օֆիոլիթային գոտու ալոխթոն դիրքը, և ենթադրվում էր, որ հրաբխանստվածքային մեզոզոյան ապարներն ունեն ոչ թե վերին կավճի, այլ ավելի հին, վերին յուրա կամ ստորին կավճի հասակ: Այդ տեսակետը մասամբ հաստատվել է նաև հետագա ուսումնասիրությունների շնորհիվ (Ա. Բելով և այլք):

1950 թ.-ից արգելոցը և շրջակա տարածքներն ուսումնասիրվել են նաև օգտակար հանածոների որոնման նպատակով, այդ թվում կատարվել են գազի և նավթի որոնման աշխատանքներ: Ուսումնասիրվել են նաև տրիաս հասակի ապարների ածխաբերությունը: Երկրաբանական քարտեզի վրա երևում է, որ արգելոցի հյուսիսում տարածված են երիտասարդ, պլիոցեն և չորրորդական հրաբխային ապարներ, որոնցով կազմված են Գեղամա լեռնաշխարհի հարավային լանջերը: Ամենահարավում հանդես են գալիս ավելի հին՝ պալեոզոյան ապարներ, իսկ Վեղի և Ազատ գետամիջյան տարածությունում մերկանում են մեզոզոյի, պալեոգենի և միոցենի հրաբխային և նստվածքային ապարներ: Պալեոզոյի և հատկապես մեզոզոյի տարատեսակ ձևերի ապարներն ունեն բարդ ծալքավորումներ: Նրանց մեջ հեշտ է ճանաչել տարբեր չափերի սինկլինալների (կորացած) և անտիկլինալների (ուռուցիկ) անհամաչափ, ծալքավոր շերտերը, որոնք խախտված են տարբեր խորության բեկվածքներով: Որոշ գիտնականներ այսպիսի քառասային կառուցվածքները վերագրում են տեկտոնական մելանժին: Ավելի լայն իմաստով համարյա ամբողջ արգելոցի տարածքը պատկանում է խորը բեկվածքային գոտուն, որը հասնում է մինչև վերին մանթիա: Սեյսմիկ մեթոդնե-



ռով նրա մակերեսը 38-42 կմ խորության վրա է: Բեկվածքների տարածքը 5-10 կմ լայնությամբ ներկայացված է օֆիոլիթային ասոցիացիայի ապարներով (օֆիոս՝ օձ, լիթոս՝ քար): Օձաքարերը վերին մանթիայի մետամորֆիզացված, հիդրատացված ապարներ են, գտնվում են համատեղ՝ խորջրյա, օվկիանոսային նրստվածքների, հրաբխային ապարների, սպիլիտների և լավաների հետ: Օձաքարերը յուրահատուկ կազմով ապարներ են (H_4Mg_3 Si_2O_9): Պարզվում է, որ դրանք ելքերի տարածքում ազդում են բուսականության վրա: Այստեղ հայտնաբերվել է միայն 40 տեսակի բույս՝ ի տարբերություն 1000 տեսակ ընդհանուր թվից, որոնք աճում են Խոսրովի արգելոցում: Պատճառն այս ապարի քիմիական կազմում է, որում բացակայում կամ բավարար չեն ֆոսֆորը, կալիումը, նատրիումը և այլն: Որոշ բույսեր ամեն դեպքում հարմարվում և աճում են այդ յուրօրինակ, մագնեզիումով չափազանց հարուստ բնահողում: Սերպենտինիտը բույսերի վրա ազդում է նաև իր ֆիզիկական դաշտով, որը հաստատված է լաբորատոր փորձերով: Այն հումք է մետաղական մանգանի ստացման համար, դրանցից ստանում են հրակայուն աղյուսներ և մի շարք օգտակար այլ նյութեր: Բացի այդ՝ դեռ հնում սերպենտինիտով բուժում էին գլխացավը, կոտրվածքը, լեթարգիան, այդ մասին կարդում ենք Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» գրքում:

Կայծքարահրաբխային ֆորմացիայի ռադիոլարիտները լավ հումք են կենցաղային և գեղարվեստական գունավոր ապակու ստացման համար: Այն նաև ստամոքսի բորբոքման դեպքում հնում օգտագործվել է որպես բուժիչ քար: Մանգան պարունակող տարատեսակներից հետագայում կարելի է ստանալ մանգանի օքսիդ, դրանց հսկա պաշար-



ները հայտնի են միջերկրածովյան օֆիոլիթներում, հատկապես շատ են Կիպրոսում: Կան նաև Սևանի և Բազումի լեռնաշղթաներում, իսկ ավելի քիչ՝ Վեղի գետի ավազանում: Այստեղ քիչ չեն ծխախոտագույն հասպիսներում մանգանի օքսիդի երակները և նրբերակները, որոնք առաջացել են ավազանի հատակում տաք (հիդրոթերմալ) լուծույթներից: Ժամանակակից օվկիանոսներում գործող հիդրոթերմերն ունեն կարևոր բաղադրիչներ, այդ թվում՝ երկաթ, մանգան, նիկել և այլն:

Սերպենտինիտների գնդաձև բազալտային լավաների և օֆիոլիթների ընդհանրությունը, ինչպես պարզվել է դեռ 20-ականների սկզբին, կազմում է տարածական նեղ գոտիներ, որոնք ձգվում են մի քանի հարյուր, նույնիսկ հազարավոր կիլոմետրեր: Այդպիսի օրինակներից են Ալպերից Բալկաններ, Փոքր Ասիա, Փոքր Կովկասից դեպի Պարսկաստան և Հնդկաստան տարածված գոտիները: Ժամանակակից օվկիանոսային կեղևի կտրվածքի և օֆիոլիթային ապարների նմանությունը պահանջում էր պարզաբանում օվկիանոսային նըստվածքների մայրցամաքի սահմաններում: Տեսակետներից մեկն այն է, որ օֆիոլիթները և նրանցով կազմված տարածքները հին օվկիանոսների մնացուկներ են, որոնք տեղադրվել են մայրցամաքային կեղևի վրա: 20-րդ դարի երկրորդ կեսին սալերի տեկտոնիկան, որը հիմնված է խորջրյա հորատումների արդյունքների վրա, պնդում է, որ կենտրոնական լեռնաշղթայից օվկիանոսային կեղևը տեղաշարժվում է դեպի մայրցամաք և խորասուզվում նրա տակ (սուբդուկցիայի զոնաներում), որի հետևանքով կեղևի մի մասը տաշեղի ձևով վրաշարժ է կատարում դեպի մայրցամաքի ծայրամասը (օբդուկցիա): Արդյո՞ք Խոսրովի արգելոցի օֆիոլիթները հին, օվ-

կիանոսային կեղևի ծածկույթ են: Կա նաև մեկ այլ պնդում, որ որոշ երկրամասերում մայրցամաքային կեղևը ենթարկվում է տեղաշարժի կամ կողաշարժի, օրինակ՝ Կարմիր ծովում, Ադենի ծովածոցում, Կալիֆոռնիական ծովածոցում և մի շարք այլ շրջաններում: Հնարավոր է այդպիսի դեպքում մանթիայի բարձրացում դեպի կեղևի տարբեր մակարդակներ: Դա կապված է մանթիայի նյութի տաքացմամբ և հերթագայող ֆազային անցումների հետ, ինչպիսին է օլիվինսերպենտինը: Այդ ժամանակ տեղի է ունենում ծավալի մեծացում մինչև 30 %, և առաջանում է լրացուցիչ ուժ, մանթիայի սառեցված նյութի բարձրացման համար (պրոտրուզիա) և՛ այս, և՛ մյուս շրջաններում օձաքարերի հետ այդպիսի նեղ և խոր ռիֆտերում գտնվում են գաբրոները՝ բազալտների խորքային անալոգները: Արգելոցի տարածքում կան գաբրոյի ոչ քիչ ելքեր՝ ներդրված անտիկլինային կառուցվածքներում, ձևախախտելով պարփակող նստվածքները: Գաբրոները և բազալտները պարունակում են պղնձի կոնցենտրացիա: Վեդի գետի ավազանի վերին հոսանքում հանդիպում են պեգմատոիտային գաբրոներ, որոնք պարունակում են ավգիտի և հորոնբլենդի բյուրեղներ, որը կարելի է օգտագործել որպես զարդաքար: Օֆիոլիթային կոմպլեքսի հետ կապված են ալմաստի որոնման որոշ հեռանկարներ, ըստ 70-ականների հրատարակված տվյալների՝ Վեդի գետի ավազանում հայտնաբերվել են մինչև 10 ալմաստի բյուրեղներ:

Անդրադառնանք արգելոցի տարածքի երկրաբանական հետաքրքիր այլ գոյացումներին: Փոքրիկ նշաններով երկրաբանական քարտեզի վրա ցույց են տրված ալկալալամպրոֆիրային տուֆերի դիատրեմաների ելքերը: Դրանք յուրօրինակ գոյացումներ են՝ ավելի բնորոշ մայրցամաքային ռիֆտերին: Ալկալալամպրոֆիրային դիատրեմաներում կամ պայթման խողովակներում հայտաբերված են 0,6 մմ-ից ոչ մեծ, գեղեցիկ, մանուշակագույն սուտակ (ռուբին), կապտականաչավուն շափյուղա (սապֆիր) և անգույն սպիտակ շափյուղա (լեյկոսապֆիր): Դրանք արդյունաբերական նշանակություն չունեն, բայց ավելի մեծ բյուրեղներ դեռ չեն հայտնաբերվել: Հայտնի է, որ ալկալային լամպրոֆիրները պարունակում են արդյունաբերական հետաքրքրություն ներկայացնող սապֆիրի բյուրեղներ: Մոնտանա նահանգում (ԱՄՆ) շահագործել են մինչև 20-ականների վերջը՝ մինչև ավելի մեծ հանքավայրերի բացումը: Գիտության համար դիատրեմիաների (պայթման խողովակների) հայտնաբերումը շատ կարևոր է: Նրանց երկարատև, բազմափուլ զարգացումը շատ նման է ալմաստաբեր կիմբերլիտային և լամպրոիտային խողովակներին (Հարավային Աֆրիկա, Յակուտիա և այլն): Բազմափուլ զարգացումը ցույց է տալիս, որ Վեդու ռիֆտը կամ ռիֆտային համակարգը զարգացել է ամբողջ մեզոզոյի ընթացքում (մլն. տարի): Ալկալաուլտրաբազիտային մագման՝ գազով հագեցած այս հրաբխականության հատուկ տեսակը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում երկրաբանի համար: Այդպիսի գոյացությունները հազվադեպ են, դրանք հայտնաբերվել են Սիբիրի հյուսիսարևմտյան օֆիոլիթներում (Բասիտի լեռներ), իսկ նրանց նման սիլլերը և դայկաները՝ Տոսկանայում (Կենտրոնական Իտալիա): Այդ ապարները, ինչպես նաև կալցիտային և դոլոմիտային կազմի կարբոնատիտնե-

ը, առանձնակի հետաքրքիր են, քանի որ ընդգծում են օֆիոլիթային ասոցիացիայի առաջացման, տեկտոնական իրավիճակի ամբողջ բազմաձևությունը: Շատ գիտնականներ գտնում են, որ կարբոնատիտները ձևավորվում են մագմատիկ հալոցքի ալկալաբազալտային և ալկալաուլտրաբազիտային կազմերի լիկվացիոն բաժանման ժամանակ (սիլիկատայինի և կարբոնատայինի): Նշենք, որ օֆիոլիթային կարերի շարունակության վրա դեպի սահմանակից երկրներ (Փոքր Ասիա և Իրան) կարբոնատիտներ դեռ չեն հայտնաբերվել: Նրանց ուսումնասիրությունը բացում է նոր կողմեր՝ օֆիոլիթային ասոցիացիային պատկանող ապարների առաջացման բազմազանության համար:

Խոսրովի արգելոցի յուրօրինակ ապարների մեկ այլ տեսակ են պիկրիտային լավաները: Դրանք մուգ կանաչ, սև, գնդաձև անջատումներով ապարներ են, կազմում են մի քանի ելքեր Մանկուկ գետի ձախակողմյան մասում՝ դեպի հարավ-արևելք մոտ 5 կմ: Այդ ապարներն ունեն ցածր կայծքարային կազմ՝ SiO_2-<40%-ից, ցածր ալկալային են (K_2O + Na_2O < 1%), բայց բարձր մագնեզիալ են, շատ հազվագյուտ են Թետիսի կտրվածքների համար: Հայտնաբերվել են Կիպրոսում և մի քանի այլ վայրերում: Դրանց պետրոլոգիայի վերաբերյալ կան հարցեր: Արդյո՞ք պիկրիտային լավաներն առաջանում են բազալտային կազմի մագմատիկ օջախի մեջ օլիվինի բյուրեղների նստվածքի պատճառով կամ անմիջական վերին մանթիայի նյութի մասնակի ձուլվածքի արդյունք են: Խոսրովի արգելոցում՝ Մանկուկ գետի ձախափնյա տարածքում, պիկրիտային լավաների հասակը ճշգրիտ որոշված է որպես Օքսվորդ-կիմերիջային (մլն. տարի)՝ հաշվի առնելով ընդգրկող կայծքարային նստվածքների մեջ պարունակող ռադիոլարիաների ամբողջությունը:

Օֆիոլիթային ասոցիացիայի համար անսովոր են մերձհրաբխային անդեզիտները՝ հրաբխաերակային մնացորդները, որոնք հայտնաբերվել են Վեղի գետի ավազանում դեռևս 60-ական թթ.: Ուշադրության էին արժանացել իրենց կլորաձև տեսքով: Նույնիսկ փորձեր են եղել նրանց համարել պայթման խողովակներ նաև այն բանի համար, որ ապարները փշրաքարացված են, սակայն հետագա ուսումնասիրությունները չհաստատեցին նման կանխագուշակումը: Ամեն դեպքում մերձհրաբխային անդեզիտները երկրաբանական կառուցվածքում գրավում են նշանակալի տարածք, ինչպես նաև վաղ կավճի վերջին ժամանակահատվածի երկրաբանական պատմության զարգացման մեջ: Նրանց հանդես գալը նշանավորվում է հրաբխականության նոր փուլով և օֆիոլիթոգենեզի դադարեցմամբ:

Կայծքարահրաբխային ֆորմացիայի ավելի հզոր ելքեր մերկանում են Մանկուկ գետի հովտի երկայնքով: Մեզոզոյան ֆորմացիաների շարքում կայծքարահրաբխային ֆորմացիան ամենախորքայինն է:

Խորջրյա լավաների և սերպենտինիտների հետ համատեղ կան բարձր սիլիկատային կազմով ապարներ՝ ռադիոլարիտներ: Դրանք կազմված են ռադիոլարների պլանկտոնից, կայծքարային կմախքով օրգանիզմներից: Եվրոպական որոշ երկրներում ռադիոլարիտների տեղական հումքից պատրաստում են բեկորային նյութ, որն օգտագործվում է որպես ճանապարհածածկ: Այդ ճանա-

պարիները ստանում են կարմիր գույն: Հազվագյուտ տարատեսակները՝ հասպիսները, օգտագործում են ոսկերչության մեջ: Դրանց թվում կան կանաչագույն և կապտագույն երանգի տարատեսակներ: Ժամանակակից օվկիանոսային խորություններում ռադիոլարային տիղմը պատկանում է կլիմայական երեք գոտիներին, որտեղ պլանկտոնի զարգացումը բարենպաստ են գտնում շատ գիտնականներ, ստորջրյա ժայթքումների ժամանակ սիլիկատի լրացուցիչ քանակը ստեղծում է բարենպաստ պայմաններ՝ սիլիկատաստեղծ պլանկտոնի զարգացման համար: Այդպես կուտակվել են հզոր (երկրաբանության մեջ հզորություն տերմինը նշանակում է շերտի այժմյան հաստությունը կամ շերտերի հաստվածքն ամբողջությամբ) սիլիկատային գոյացումներ, հատկապես օձաքարերի և գնդաձև լավաների հետ համատեղ:

Նշենք, որ դիատրեմաների ելքերի սահմաններում բնահողի շերտերը քիչ են, բուսականությունն աղքատ է, ապարները փխրուն են և ունեն յուրահատուկ կազմ: Դիատրեմի ռելիեֆում ձևավորված են ավազային գոգավորություններ՝ բարենպաստ տարածք կարիճների և օձերի համար: Սերպենտինիտների, գաբրոների հետ համատեղ կայծքարաբխային կազմավորումը պատկանում է օֆիոլիթային սերիային: Պետք է նշենք, որ այն ունի ստորին կավճի հասակ, մինչդեռ արևմտյան միջերկրածովային տարածքում նրա հասակը վերին յուրա է, իսկ Իրանում՝ վերին կավիճ: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ միջերկրածովյան տարածքից արևելք այդ կազմավորման հասակը փոխվում է, հետևաբար կարող ենք ասել, որ մայրցամաքային կեղևի ռիֆտոգենեզն այդ ուղղությամբ ունի տարբեր հասակներ: Ռիֆտերի համակարգն արևմուտքից դեպի արևելք իրար

մոտենում են կամ հեռանում: Ամենամոտ գտնվող կարերը Երգնկայից տարածվում են Արևելյան Անատոլիա, Սևանի ավազան և Ուրմիա: Այս հանգամանքը բնորոշում է նաև մնացած կառուցվածքների տեղադրումը, որոնք ժառանգում են ուշմեզոզոյան տարածքի կառուցվածքը: Դա վերագրվում է նաև սեյսմոակտիվությանը:

Ամբողջ Թետիս օվկիանոսի տարածքում վաղ կավճի վերջում տեղի են ունեցել տեկտոնական կարևոր իրադարձություններ: Մանթիայում բարդ խորքային գործընթացների հետևանքով սկսվում է խոշոր ծալքավորության դարակարգ, որը բերել է օվկիանոսի կրճատումներ: Եվրոպական երկրաբանության անվանակարգում այդ ծալքավորությունը կոչվում է ավստրիական: Այն հանդես եկավ նաև մերձկովկասյան տարածքում: Վեդու օֆիոլիթային զոնայում այս ծալքավորության փուլի հետ են կապված օֆիոլիթոգենեզի դադարումը, օֆիոլիթների մի մասի վրաշարժով դեպի հին մեզոզոյան ապարները: Օֆիոլիթային ապարներն ուժգնորեն դեֆորմացվում են, ձևավորվում են վրաշարժեր և մանր ծածկեր: Մի շարք գիտնականներ ենթադրում են, որ օֆիոլիթները կազմում են խոշոր վրաշարժեր, որոնք տեղափոխվել են հյուսիսից շատ տասնյակ կիլոմետրեր ներկայիս տեղադրումներից: Սակայն սեյսմիկ կողապատկերումն այս տեսակետը չի հաստատել, քանի որ Վեդու և այլ օֆիոլիթային զոնաների տակ հայտնաբերվում է միանգամայն յուրահատուկ սեյսմիկ կտրվածք՝ խորքային բեկվածք, որը ներխուժում է արմատներով մանթիա: Այս և մյուս տեսակետները հանգում են նրան, որ օֆիոլիթները շարժված են իրենց սկզբնական տեղանքից ոչ շատ հեռու: Արդյո՞ք օֆիոլիթներն ալոխթոններ են, այսինքն՝ դրանք բերված են մեկ այլ տեկտոնական զոնայից, կամ էլ նրանք

տեղադրված են որպես պարաավտոխթոններ (ոչ շատ հեռու իրենց սկզբնական արմատներից): Պետք է նշել, որ օֆիոլիթները մեծ մասամբ միջերկրային շրջաններում, իրոք, ալոխթոններ են, և պարզ է, որ երկրաբանության պրոբլեմների համար այն օֆիոլիթները, որոնք ունեն մեկ այլ պարաավտոխթոն կառուցվածքային դիրք, ներկայացնում են տեսական մեծ նշանակություն: Այս պրոբլեմով հետաքրքրվողները կարող են անդրադառնալ հրատարակված հետազոտություններին: Միաժամանակ ավստրիական ծալքավորության փուլն Անդրկովկասում արտահայտվել է ավելի հին ամբողջական ապարների ողողահարմամբ: Վեղու զոնայում ուշ կավճի ապարների հիմքում հայտնաբերվել է բեկորային նստվածքների հորիզոն՝ վկայակոչելով այդ մասին: Այնուհետև սկսվում է հրաբխականության նոր փուլ (սենոման, տուրոն, վաղ կոնյակ հասակի մլն տարի)՝ թվագրված ֆաունայի մնացորդներով նստվածքային նրբաշերտերում կամ հեռուծայրամասային նստվածքային կուտակումներում հրաբխականության շրջանից: Հետաքրքրական է, որ այս կրաքարային, բեկորային նստվածքները, ինչպես նաև հրաբխային ժայթքումները, որոնցում համեմատաբար գերակշռում են էքսպլոզիոն տուֆերը, հրաբխային փշրաքարերը, ծանծաղ ծովային ավազանի կուտակումներ են: Նստվածքները կուտակվել են ծովում՝ շրջապատելով փոքր ու մեծ կղզիներ: Դրա մասին անուղղակի վկայակոչում են անդեզիտային և անդեզիտոբազալտային կազմի հրաբխային ապարները, որոնք տարբերվում են բարձր ալկայնությամբ (տրախիանդեզիտներ և այլն): Լավագույն մերկացումները կարելի է դիտել Խոսրովի ավազանի միջին հոսանքում: Ավելի ստույգ հնէաբանական տվյալներն են, որոնք ցույց են տալիս, որ ֆաունագիտական մնացորդներում գերակշռում են ծանծաղծովայինները, որոնք հատակաբնակ մնացորդներ են: Մի շարք ռուդիստային խութերի ելքեր (վակցինիտներ) հայտնաբերվել են ուշ կոնյակի ավազաալևրիտային նստվածքներում: Նրանք կուտակվել են հրաբխականության ավարտից հետո ծանծաղ ավազանում: Այդ գրաուվակային կազմի բեկորային շերտում կան բազմաթիվ հասպիսների, բազալտների, ռադիոլարիտների բեկորներ, որոնք բնորոշ են կայծքարահրաբխային ֆորմացիային և գաբրոհիպերբազիտային ամբողջությանը: Ալևրիտներում և ավազաքարերում հայտնաբերվել են ծառերի ածխացած մնացորդներ և մանր պիրիտի կոնկրեցիաներ: Անընդմեջ նստվածքակուտակման մեջ գրաուվակային ֆորմացիան փոխարինվում է միկրոհատիկային և ֆորամինիֆերային կրաքարերի ֆորմացիայով: Սա կայուն, նրբաշերտ ապարների ստվարաշերտ է՝ վարդագույն և ավելի մուգ երանգի, որը լավ տեսանելի է Խոսրով և Սպիտակ ջուր գետերի հովտի տեսադաշտի համապատկերում: Այս ստվարաշերտի մնացորդը կազմում է նաև Ցըրդուտ գեղատեսիլ լեռան գագաթը:

Հիմքային շերտերում հայտնի են բազմաթիվ ինոցերամների մնացորդների հայտնաբերումներ սանտոն դարաշրջանի, իսկ ամբողջ կտրվածքով մինչև կամպանի նստվածքները և մաստրիխտի հարկը՝ ֆորամինիֆերների մնացորդներ: Մի քանի վայրերում (Երասխ և այլն) այս կրաքարային շերտը պիտանի է ցեմենտի ստացման համար: Սակայն Արարատի մարզի ցեմենտի խոշոր գոր-

ծարանը ցարդ օգտագործում է չորրորդական տրավերտինների հանքավայրն Արարատ քաղաքի մոտակայքում: Նպատակահարմար է տրավերտինային պաշարների պահպանումն արդյունաբերության համար, որը կրաքարի մաքուր տեսակ է:

19-րդ դարի կեսերին ուշադրություն դարձվեց ամբողջ Կովկասի շրջանում նաև նույն հասակի ռուսական պլատֆորմի անտոն-մաստրիխտ հասակի միանման կարբոնատային շերտերի վրա: Ակնհայտ է, որ այս իրավիճակն ունի համերկրային պատճառներ, և այժմ շատ գիտնականներ գտնում են, որ պատճառը համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացումն է ուշ կավճում (սենոն): Անցյալում համաշխարհային օվկիանոսի մակարդակի տատանումների հատուկ ուսումնասիրությունները բերում են այդ պնդումներին: Պետք է ենթադրել, որ կամպանում ծովի մակարդակից վերև հայտնվել են կղզիների ոչ մեծ գագաթներ, և բեկորային նյութը փոքր քանակությամբ է տեղափոխվում դեպի ավազան, որը բարենպաստ է եղել կարբոնատային նստվածքների համար՝ բաղկացած պլանկտոնից (ֆորամինիֆեր և այլն) և նանոպլանկտոնից (փոքր օրգանիզմներ): Մաստրիխտյան ժամանակաշրջանի վերջում Թետիս օվկիանոսի մի քանի շրջաններում և ավելի վաղ սկսվել է կղզիների բարձրացում, հետագայում օվկիանոսի մակարդակի իջեցմամբ այդ սահմանագիծն ընդունված է համարել մեզոզոյան դարաշրջանի վերջը: Վեղու զոնայում այդ սահմանը միանգամայն հստակ երևում է, թե ինչպես միկրիտային կրաքարային շերտերը փոխվում են կտրվածքով դեպի վեր ֆլիշոիդայինի, ռիթմիկ հերթագայող կուտակումներով, որոնք ունեն դանիական հարկի հասակ, ներառյալ մինչև էոցեն (մլն տարի): Ծանծաղջրային կալկարենիտները (բեկորային կրաքարերը), ալևրոլիտները, ավազաքարերը և կրաքարային նրբաշերտերը կտրվածքի վերին մասերում տեղ-տեղ հրաբեկորային են և պարունակում են հրաբխային նյութի նստվածքների խառնուրդ (տուֆիտներ): Չի կարելի չնշել ծալքավորության նշանակության մասին ուշ էոցենի և օլիգոցենի սահմաններում: Հատկապես այդ ժամանակ են ձևավորվում անտիկլինալային և սինկլինալային կառուցվածքներ, վերափոխվում են կեղևի խզումները:

Հաջորդ կարևոր առանձնահատկությունը դեպի հարավ շրջված ծալքերն են, որը կարող է բացատրել կեղևի վերին հատվածի զանգվածի տեղափոխման գերակշռող ուղղությունը: Պալեոգենի վերջում օլիգոցենում (մլն տարի) արգելոցի տարածքի կենտրոնական մասը ներկայացնում էր բարձրացման շրջան: Ծովային մնացորդները ծագել են ժամանակակից Ազատ գետի հովտի շրջանում, նրա աջափնյա մասում և դեպի արևմուտք՝ Վեղի գետի ստորին հոսանքներում: Դա նաև Շորաղբյուրի շերտախումբն է՝ երկփեղկանի փափկամարմինների առատ մնացորդով: Այս հաստվածքները դեպի արևմուտք՝ Ախուրյան գետի ավազանում ներկայացրել են խոշոր դելտա, որի նստվածքներում տարվել են գազի և նավթի որոնողական աշխատանքներ: Առայժմ հայտնի են միայն նրանց փոքր երևակումներ, որոնք չունեն արդյունաբերական նշանակություն:

Արգելոցի տարածքից արևմուտք և հյուսիս նշանակալի հզորությամբ տարածված են միոցենի մոլլասները, որոնք քաղցրահամ ջրային կուտակումներ են,

մասամբ ծովային, կան նաև աղագիպսաբեր մոլլասային հաստվածքներ: Վեդի գետի վերին հոսանքի շրջակայքում Ազատ և Վեդի գետամեջերի նստվածքները կա՛մ բացակայում են, կա՛մ կտրվածքի վերին մասը ներկայացված է հրաբխային ապարներով: Բոլոր այդ ապարները ենթարկվել են թույլ ծալքավորության, կտրվածքի վերին մասը կազմում է վերերկրյա հրաբխային կոմպլեքսը՝ պլիոցեն-չորրորդական հասակի (մլն. տարի): Նրանք կազմում են չձևախախտված հրաբխային թիկնոց, որի ստորին մասում լախարային (ցեխահեղեղ) փշրվածքներն են և քաղցրահամ ջրային նստվածքները, իսկ վերին մասում՝ լճային դիատոմիտները: Վերջիններս գնահատելի կլանիչներ են: Վաղ պլիոցեն հասակի հրաբխային փշրաքարերում Գառնի գետի վերի հոսանքում փորված է Գեղարդ վանքը: Չորրորդական բազալտներն օգտագործվել են և ցարդ օգտագործվում են քաղաքացիական շինարարության մեջ: Այդ կոմպլեքսում հայտնաբերված են բարձր որակի օբսիդիաններ, հոկող նյութեր և ագաթներ: Երիտասարդ լավային ռելիեֆի տակ ձևավորվում են քաղցրահամ խմելու ջրի խոշոր պաշարներ: Վեդի ավանից հյուսիս և մի շարք այլ վայրերում գերակշռում են բարձր որակի քաղցրահամ ջրեր, արգելոցի շրջակայքում՝ Վեդի գետի հովտի աջակողմյան հատվածի վերին հոսանքում: Կան ջրային զգալի պաշարներ, սակայն դրանք կախված են տարեկան կլիմայի տատանումներից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանքային գերակշռող ստորերկրյա ջրերն այդ տարածքում ունեն քլոր-նատրիումային կամ քլոր-մագնեզիալ կազմ, և աղբյուրները տարածվում են հիմնականում Վեդու ավազանի վերին հոսանքում, որոնք ակնհայտ կապված են խոշոր սերպենտինիտային ելքերի հետ: Արգելոցի տարածքի հյուսիսում Վեդի գետի ջրերն իր վտակներով և Ազատ գետը բավարար են, որ պահպանվի արգելոցի էկոլոգիան: Սակայն աղբյուրի ջրերի մի մասը վերցված է Վեդի ավանը խմելու ջրով ապահովելու նպատակով: Իսկ ջրերի նշանակալի մասն օգտագործում են արգելոցին հարող հողերի ոռոգման համար: Դա ազդում է ընդհանուր ջրային բալանսի և էկոլոգիայի վրա:

Անդրադառնանք արգելոցի տարածքում հայտնաբերված բեկվածքներին: Դրանք տարբեր են իրենց հասակով և առաջացմամբ: Բայց մեզ հատկապես հետաքրքրում է սեյսմոակտիվ և չորրորդական ժամանակաշրջանի՝ ակնհայտ ակտիվությամբ բեկվածքները: Տարածքում գերակշռող հյուսիս-արևմուտք տարածվող բեկվածքներում հայտնի են աջակողմյան տեղաշարժեր, որոնք տարածվում են Սպիտակ քաղաքի մոտակայքից՝ հասնելով Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջեր, Վեդի գետի ավազան և այնուհետև Արփա գետի հոսանքներ, որն ընդունված է անվանել Գառնու բեկվածք: Այժմ այն ակտիվ է լայնույթով թեների 0.3 սմ/տար. տեղաշարժով: Համարյա նրան զուգահեռ՝ դեպի արևելք կա բեկվածքների համակարգ՝ արտահայտված խոշոր սեյսմո-գրավիտացիոն սերպենտինիտային սողանքներով: Հատկապես վտանգավոր է այս 2 համակարգերի լայնակի և նրանց հարող բեկվածքների խաչավորումը: Այսպիսով՝ բեկվածքների բարդ համակարգը հյուսիս-արևմուտք լայնակի տարածում ունի, կառուցվածքային տիպը՝ Puol-apart, որը պլանում առաջացնում է զուգահեռա-

նիստ, որի հյուսիսային սուր ծայրը, ըստ Ա. Ս. Կարախանյանի հետախուզական արդյունքների (դիստանցիոն մեթոդ), փաստում է Ելփին գյուղի շրջանում: Նշենք նաև, որ Սևանա լճի ավազանից հարավ-արևմուտք գեոդեզիական մեթոդներով մինչև 1988 թ. երկրաշարժն արձանագրվել է երկրակեղևի խոշոր բարձրացում՝ տարեկան մինչև 10 մմ: Սեյսմոակուստիկայի տվյալներով Վարդենիսի լեռնաշղթայի հատվածներում տեղի են ունենում խոշոր մանթիական դիապիր և երկրակեղևի շերտախմբի կրճատում մինչև 38 կմ: Այս և այլ տվյալներ մատնանշում են Խոսրովի արգելոցի հյուսիսարևելյան հատվածի սեյսմոլարվածության մասին: Ակտիվ բեկվածքներն այժմ ոչ միայն երկրաբանների, այլ նաև բուսաբանների և լայն իմաստով էկոլոգների ուշադրությունն են գրավում: Դրանք աչքի են ընկնում իրենց տարածքով արտահայտվող ոչ սովորական բիոտների դրսևորմամբ: Այդպիսի տարածվող գոտիներն ընդունված է անվանել երկրապատոգեն զոնաներ: Իրենց սահմաններում ուսումնասիրվում են կյանքի անոմալ պայմանները կենդանիների և բույսերի օրինակի վրա: Ներկայացված է, որ Խոսրովի արգելոցի տարածքը միանգամայն բարենպաստ է այդպիսի ուսումնասիրություններ կատարելու համար՝ այն զուգակցելով կենսաակտիվ բնական միներալների և ապարների (սերպենտինիտ և այլն) ուսումնասիրությունների հետ:

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑ. ԵՐԹՈՒՂԻՆԵՐ ԳԱՌՆՈՒՑ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խոսրովի արգելոցի տարածք մուտք գործելու առավել հարմար ելակետերը երկուսն են՝ Կոտայքի մարզի Գառնի և Արարատի մարզի Ուրցաձոր գյուղերը:

Երթուղին Գառնուց սկսելու դեպքում այցելուն հնարավորություն կունենա շրջելու Ազատ գետի վերին հոսանքի, իսկ Ուրցաձորից սկսելու դեպքում՝ Վեղի գետի և նրա վտակների ավազաններում:

Քանի որ ինչպես բնական, այնպես էլ պատմական հուշարձանների խտությունն արգելոցի տարածքում բավական մեծ է, ուստի, պայմանավորված այդ նպատակին տրամադրվելիք օրերով, զբոսաշրջիկը նախապես պետք է ստույգ կողմնորոշվի երթուղու ընտրության հարցում:

Խոսրովի արգելոցը՝ հռչակված բնական ու պատմական անկրկնելի և հազվագյուտ հուշարձաններով, Հայաստանի առավել բնորոշ և հրաշագեղ անկյուններից մեկն է: Արգելոցին ավել կամ պակաս չափով հնարավոր է ծանոթանալ ինչպես մեկօրյա, այնպես էլ բազմօրյա ճամփորդությունների միջոցով, որոնք, ելնելով տեղի առանձնահատկություններից, առավելապես կարող են կրել արշավային բնույթ: Ճիշտ է, արգելոցի տարածքում առկա են մեքենաների համար մատչելի հողե բազմաթիվ ճանապարհներ, սակայն մենք այցելուին խորհուրդ կտայինք ձեռնպահ մնալ ճամփորդության նման ձևից և ձգտել շրջագայել հատկապես ոտքով, քանի որ յուրաքանչյուր քայլի հետ այցելուի առջև կբացվեն արգելոցի՝ իրենց գեղեցկությամբ մեկը մյուսին գերազանցող ու չկրկնվող տեսարանները: Բացի այդ՝ բազմաթիվ հուշարձաններ կարելի է հասնել միայն արահետներով կամ լեռնային կածաններով: Առ այսօր բնական նման միջավայրում են գտնվում միջնադարյան այնպիսի խոշոր և հանրահայտ հուշարձաններ, ինչպիսիք են Հավուց թառի վանական համալիրը, Գեղի և Ուրծի բերդերը, Արմոքի Սբ. Ստեփանոս վանքը, բազմաթիվ վիմափոր եկեղեցիներ ու կացարաններ: Նման գողտրիկ վայրերում են գտնվում մի շարք ջրվեժներ և քարանձավներ:

Մեր կողմից առաջարկվող երթուղիները, հաշվի առնելով վերոնշյալ ելակետերը (Գառնի և Ուրցաձոր գյուղեր), կարելի է խմբավորել երկու մասի:

Առաջին խմբի երթուղիները, որոնք սկիզբ են առնում Գառնի գյուղից և հասնում մինչև Գեղի բերդ ու Սառցե իշխանի (Յախշխան) այր, հետևյալներն են.

ԹԻՎ 1 ԵՐԹՈՒՂԻ

Քայլարշավը սկսելով Գառնի գյուղի կենտրոնից՝ պետք է շարժվել դեպի Գեղարդ գետի ձորն իջնող ճանապարհով: Գյուղամիջից հազիվ 100 մ անց՝ աջ թևի վրա, կարելի է տեսնել վաղմիջնադարյան միանավ հորինվածք ունեցող կիսավեր եկեղեցին, իսկ մոտ 800 մ անց՝ ճանապարհի ձախ կողմում՝ Սբ. Աստվածածին (Մաշտոց Հայրապետ կամ Սումպենց վանք) կենտրոնագմբեթ եկեղեցին և գերեզմանոցը: Հասնելով Գեղարդ գետին՝ պետք է միջնադարյան միաթռիչք կամրջով անցնել ձախ ափը, ապա ոլորաններով բարձրանալ և հասնել ձորագլխի ավազուտ տարածքներին: Սարահարթի բարձրադիր մասից հյուսիսարևմտյան ուղղությամբ ձեր առջև փռված կտեսնեք Գառնի գյուղի համայնապատկերը, որի մի ծայրին ուրվագծվում է հեթանոսական տաճարը: Հատելով Ազատ գետի հովտով ձգվող հողե ճանապարհը լեռնաճյուղի ջրբաժանի հատվածում՝ պետք է դիմել դեպի Հավուց թառի վանք հյուսիսարևելյան ուղղությամբ: Մեղմաթեք լեռնալանջով ձգվող արահետը շուրջ 1,5 կմ անց ձեզ կհասցնի վանքի հարավային կողմում՝ արահետի աջ եզրին բխող աղբյուրը: Հավուց թառի վանական համալիրից դուրս են գալիս երկու հիմնական կածաններ, որոնցից մեկը նույնպիսի թեքությամբ և ուղղությամբ շարունակվում է և հազիվ 2 կմ՝ հասնում խաչնարած ցեղերի կողմից անվանված Ալիմարդան գյուղատեղիի ավերակներին, այդտեղից էլ ևս 1,5 կմ անցնելով՝ հասնում Գեղարդավանք: Այս երթուղին իրականացնելու համար անհրաժեշտ կլինի 1 կամ 2 օր: Երկօրյա արշավի դեպքում հարմար գիշերատեղը Հավուց թառի վանքն է, հատկապես՝ վանքի հարավարևելյան մերձակա հարթակը:

ԳԱՌՆԻ. կամուրջ (ԺԲ-ԺԳ դդ.) Գեղարդ գետի վրա

ԹԻՎ 2 ԵՐԹՈՒՂԻ

Աղջոց վանքը տեսնելու համար անհրաժեշտ է արդեն նկարագրված ճանապարհով հասնել Հավուց թառ, ապա վանքի հարավարևելյան կողմից ոլորաններով դեպի վեր ձգվող կածանով բարձրանալ և հասնել լեռնաճյուղի ջրբաժան մասին, ապա շարունակել հարավարևելյան ուղղությամբ: Կարևոր է հիմնական կածանից չշեղվել, որը, լեռնալանջերը կտրելով առավել դյուրագնաց տեղերով, ձեզ կհասցնի ջրբաժան գծի բարձրադիր կետը: Այդ ամբողջ ճանապարհահատվածում ձախ կողմում ձեր ուղեկիցը կլինի Գողթ գյուղի համայնապատկերը: Հասնելով ներկայումս Ելիջա անվամբ հայտնի գյուղատեղի՝ դուք պետք է միանաք Բայբուրդ գյուղից սկիզբ առնող և Աղջոց վանքով մինչև այս գյուղատեղի տանող հողե ճանապարհին: Վանքի արևելյան և հյուսիսարևելյան կողմերում պահպանվել են պատմական Աղջոց գյուղի փլատակները: Ուշագրավ է ջրաղացը՝ զանգվածեղ ջրաղացաքարով: Աղջոց վանքում, բացի Սբ. Ստեփանոս, Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցիներից (եզակի արժեք են Պողոս և Պետրոս առաքյալների բարձրաքանդակները) ու գավթից, այցելուի տեսադաշտից չպետք է վրիպի նաև վանքի արևմտյան կողմում տարածված գեղաքանդակ խաչքարերով հարուստ գերեզմանոցը:

Աղջոց վանքի տարածքը հարմար գիշերատեղի է, որովհետև վանքի արևելյան կողմով հոսող վտակը լուծում է նաև ջրի խնդիրը:

Աղջոց վանքից երկու ճանապարհով (Ելիջա կամ Մեծ Գլան գյուղերով) կարելի է իջնել Բայբուրդ և հողե ճանապարհով վերադառնալ Գառնի:

Հավուց թառի վանքը (Ժ-ԺԳ դդ.)



ԹԻՎ 3 ԵՐԹՈՒՂԻ

Նրանք, ովքեր որոշել են շարունակել ծանոթանալ Խոսրովի արգելոցի այդ հատվածի բնության և պատմության հուշարձաններին, պետք է վանքի հարավային կողմով իջնեն և ձորն անցնելով՝ հասնեն Մեծ Գլան գյուղատեղին: Այստեղ կարող եք այցելել գյուղի արևմտյան կողմում գտնվող գերեզմանոց, որտեղ ևս պահպանվել են միջնադարյան գեղաքանդակ խաչքարեր: Առանձին խաչքարեր ու ժայռախաչեր էլ կարելի է տեսնել ինչպես Մեծ Գլան, այնպես էլ նրան հարավարևելյան կողմից կից Փոքր Գլան գյուղատեղիների տարածքում:

Փոքր Գլանի հարավային եզրով հոսող գետակի վրա է արգելոցի տարածքի բնական հրաշագեղ կերտվածքներից մեկը՝ մոտ տասը մետր բարձրությունից գահավիժող Գլանագետի ջրվեժը: Նրա մոտով հողե ճանապարհով մի քանի հարյուր մետր վեր բարձրանալով՝ աջ եզրին դուք կնկատեք կրաշաղախ մնացորդներ: Դա Էջմիածնի վանքի բակ փոխադրված Գրիգոր Խաղբակյանի խաչքարի պատվանդանի մնացորդն է:

Շարունակելով երթուղին նույն ճանապարհով՝ մոտ 2,5 կմ անց կհասնեք պատմական Ավանիկ գյուղատեղի, որն այժմ հայտնի է Քյորփուքենդ անվամբ: Ամբողջ ճանապարհի աջ կողմում ձեր ուղեկիցը կլինի Ազատ գետի խոր ձորահովիտը, իսկ առջևում արդեն կուրվագծվեն Գեղի բերդին հարող ամեհի ժայռազանգվածները:

Ավանիկում վաղմիջնադարյան եկեղեցու մնացորդները, զանազան կոթողները (այդ թվում՝ Ե-Է դարերով թվագրվող ութանիստ կոթողը եկեղեցուց ոչ հեռու) և խաչքարերը տեսնելուց հետո անհրաժեշտ է իջնել և միանալ գյուղատեղիի ստորոտով հոսող Ազատ գետի աջ ափի երկարությամբ ձգվող հողե ճանապարհին, որով և կարելի է վերադառնալ՝ շարժվելով Գառնի գետի հոսանքն ի վար:



Նրանք, ովքեր որոշել են այցելել նաև Վանստան, Գեղի բերդ և վերջինիս մերձակա այլ հնավայրեր, կարող են երթուղին շարունակել անմիջապես Ավանիկից: Ի դեպ, արշավականների համար օգտակար կարող է լինել հանդիպումը արգելոցի աշխատակիցների հետ: Նրանց պահակատներից մեկն էլ գտնվում է Ավանիկի հարավային եզրին:

Վանստան հասնելու համար նախ անհրաժեշտ է Ավանիկից պահակատան մոտով իջնել ու միանալ ձորով անցնող (Ազատ գետի աջ ափի երկայնքով) հողե ճանապարհին և հազիվ 0,5 կմ հոսանքի հակառակ ուղղությամբ քայլելուց հետո հետևել ձախ կողմից բաժանվող ճանապարհին: Այս վերջինով գրեթե 1 կմ բարձրանալով՝ կհասնեք Վանստան: Գյուղատեղիի՝ պատմական բնակավայր լինելն իսկույն կմատնի ձեզ. դուք ամեն քայլափոխի սփռված կտեսնեք անցյալի հիշատակները՝ բազմաթիվ խաչքարեր, ճարտարապետական բեկորներ և դրանց կենտրոնում՝ կենտրոնագմբեթ հորինվածքով Վանստանի Սբ. Աստվածածին կործանված եկեղեցին: Գյուղատեղիի վերին մասում է գտնվում երբեմնի գյուղի՝ քարե միակտոր գուռով աղբյուրը:

Գեղի բերդ այցելելու համար անհրաժեշտ է Վանստանից նախ կրկին իջնել և միանալ գետափով վեր ձգվող հողե ճանապարհին, հասնել ու հատել Կոթուր գետը (ցանկացողները, Կոթուրի ափով մոտ 500 մ վեր բարձրանալով, կարող են տեսնել նաև գետի վրայի ջրվեժը): Հետո մոտ 1 կմ քայլելով՝ Բերդատակ գյուղատեղիից թեքվել ձախ, մտնել նեղ կիրճն ու տեղ-տեղ նաև զգալի թեքություն ունեցող բազմաթիվ կեռմաններով բարձրացող կածանով հաղթահարել ժայռապար լեռն ու բրգաշար պարսպապատերի մեջ եղած միակ դարպասից մտնել լեռան գագաթին գտնվող բերդը:

Գեղին միջնադարյան Հայաստանի՝ համեմատաբար լավ պահպանված բեր-

դերից է: Ժողովուրդն այն առավելապես ճանաչում է Կաքավաբերդ կամ Թաքուլ իշխանի բերդ անուններով: Բերդի տարածքում ջուր չկա, ուստի արշավականներն այդ պակասը պետք է լրացնեն՝ օգտվելով նեղ կիրճով բարձրանալիս հանդիպած միակ աղբյուրից:

Բերդը բարձր դիրքի պատճառով հարմար գիշերատեղ չի կարող համարվել (նկատի ունենք գիշերվա ցուրտը), ուստի առավել նպատակահարմար կարող է լինել Բերդատակ գյուղատեղին կամ էլ Խուց կամ Մենաստան կոչված վայրն իր կրկնահարկ ժայռափոր մատուռների խմբով: Այս վերջինս էլ, սակայն, առաջին անգամ այցելողի համար կարող է դժվար գտանելի լինել:

Նրանք, ովքեր բնության հրաշալիքները սեփական աչքերով տեսնելու համար պատրաստ են կտրել-անցնել լեռնային նեղ ու դժվարամատչելի կածաններ, խորհուրդ կտայինք գոնե մեկ անգամ կյանքում լինել Ազատ գետի վերին հոսանքի աջ կողմում գտնվող Յախշխան այրում: Այնտեղ հասնելու համար անհրաժեշտ է «Խուց» վիմափոր մատուռների մոտից գետի հոսանքի հակառակ ուղղությամբ շարժվել տեղ-տեղ դժվար նկատելի և անուշադրության դեպքում դյուրությամբ կորսվող կածանով: Ընդհանուր առմամբ այդ տարածությունը մոտ 1,5 կմ է, սակայն հաղթահարելու համար կպահանջվի ավելի քան 1 ժամ: Դուք կտեսնեք քարանձավային մի հրաշալի համալիր, ուր պահպանվել են խաչաձև-գմբեթավոր կիսաժայռափոր քառախորան եկեղեցի, կացարանների մընացորդներ, վիմափոր անցուղի, ժայռակերտ աստիճաններ, մուտքի երկու կողմում՝ դիտակետեր:

Վերոհիշյալ ցանկացած երթուղու դեպքում, լինի Աղջոց վանքից, Գլան գյուղերից, Ավանիկից, Վանստանից,

Գեղի բերդից, թե Յախշխան այրից, ճանապարհը չկրկնելու նպատակով անհրաժեշտ է վերադարձը կազմակերպել Ազատ գետի աջ ափին զուգահեռ ձգվող հողե ճանապարհով, մանավանդ որ ճանապարհի միջնամասում այցելուները հնարավորություն կունենան տեսնելու նաև Բայբուրդ գյուղում պահպանված վաղմիջնադարյան միանավ եկեղեցին:

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑ. ԵՐԹՈՒՂԻՆԵՐ ՈՒՐՑԱՁՈՐԻՑ

Երկրորդ խմբի երթուղիները, որոնք սկիզբ են առնում Ուրցաձոր գյուղից և հասնում մի ճյուղով Խոսրով գյուղատեղի, մյուսով՝ Մանկուկ, կենտրոնականով՝ Ջերմանիս և Արմոք, նախ և առաջ անցնում են Ուրծ պատմական բնակավայրի տարածքով, ուստի Ուրծը ելակետն է, և նրա նկարագրությունը տալիս ենք մեկ անգամ:

Ուրծ հասնելու համար անհրաժեշտ է Ուրցաձոր գյուղից ասֆալտապատ ճանապարհով շարժվել Վեղի գետի աջ ափով դեպի վեր շուրջ 4 կմ և հասնել Խոսրով և Ուրծ գետերի միախառնման վայրի ընդարձակ հովիտը: Այստեղ՝ գետի ձախակողմում վեր խոյացող լեռան գագաթին, այցելուները կարող են տեսնել պահպանված վաղմիջնադարյան ատամնաշար պարսպապատերով բերդը, գետի հանդիպակաց ափին՝ նույն ժամանակաշրջանին վերաբերող միանավ եկեղեցու ավերակները, Խոսրով գետի աջակողմում՝ տեղացիների կողմից Գևորգ Մարզպետունու բերդ անունով հայտնի Տափի պարսպափակ եկեղեցին, երկու գետերի միջանկյալ մասում՝ միմյանցից ոչ հեռու գտնվող ևս երկու եկեղեցիներն ու խաչքարերով գերեզմանոցը:

Հարմար գիշերատեղին, աղբյուրով հանդերձ, Տափի եկեղեցու կից տարածքն է:



ԹԻՎ 5 ԵՐԹՈՒՂԻ

Ուրծ քաղաքատեղիից Խոսրով գետի հունով դեպի վեր բարձրանալով մոտ 2,5 կմ՝ կարող եք հասնել Աղասիպակեր գյուղատեղի, որտեղ պահպանվել են խաչքարեր: Հողե ճանապարհով դեպի վեր՝ մոտ 5 կմ-ից դուք կհայտնվեք Խոսրով գյուղատեղիում, որտեղ, բացի կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցու ավերակից ու խաչքարերով գերեզմանոցից, պահպանվել են նաև ժայռախաչեր և վիմափոր մի մատուռ: Բնությունն այստեղ ներկայանում է ամենաշռայլ գույներով, իսկ լեռնալանջերի բավական ընդարձակ մակերեսները պատված են խիտ անտառով:

ՈՒՐԾ. հատված Տափի բերդից (ԺԳ-ԺԴ դդ.)



Ուրծ քաղաքատեղիից համանուն գետի հովտով շուրջ 6 կմ հողե գլխավոր ճանապարհով բարձրանալով՝ կարելի է հասնել գետի աջ ամենաջրառատ վտակներից մեկին՝ Մանկուկին: Այս գետակի հովտում՝ միմյանցից 2-3 կմ հեռավորության վրա են գտնվում Քսուզ, Չիմմի, Սակռաբերդ և Սպիտակ վանքի հնավայրերը: Հարկ է նշել, որ Մանկուկի ձորակն իր հրաշագեղ բնությամբ չի զիջում Խոսրով գետի ձորակին: Թվարկված բոլոր հնավայրերը պատմական գյուղատեղիներ են, որոնց տարածքներում առկա են խաչքարերով գերեզմանոցներ, իսկ Սպիտակ վանքում՝ նաև կիսավեր եկեղեցի:


ԹԻՎ 7 ԵՐԹՈՒՂԻ
1946
Հանդասար 2292.8
Չանգլի
Հանդ
Խոսրով
2351
Սպիտակ եկեղեցի
Մանկուկ
Սակդաբերդ
2932.1
Մանկուս լ.
Չիմմի
1807
Խոսրով
2005.1
Մանկուկ
2534
1543.5
Քյոթու
Ձղուն
Աղասիպակեր
2061.5
Կոտուցսար 2061.5
Քսուզ
Խոսրովասար 1988.3
Տափ
ՈՒՐԾ
Արջանոց
Ջերմանիս
Կարակոյին
1485.3
Ուրծ
1817.4
Սևայգիք
Տաշնով
Խնուտ
1266.1
Ազիզշեն
Պարտիզակ
Ուրծ
2087
Ինգալա
Բնուտ
Վեդի
Երանոս
Սբ. Ստեփանոս վանք
ՈՒՐՑԱՁՈՐ
2348.6
Սպիտակաջուր
Արմոք
Աղս
2229.6
2163.1
Վերին Արմոք
1187
2246

ՈՒՐԾ. բերդ (Դ-է դդ.)

Ջերմանիս պատմական գյուղատեղի-վերջնակետը հասնելու համար անհրաժեշտ է Ուրծ քաղաքատեղիից հողե գլխավոր ճանապարհով՝ Ուրծ գետի հունով վեր բարձրանալ մինչև 16-17 կմ: Հաշվի առնելով ճանապարհի երկարությունը՝ արշավականները կարող են գետափին մեկ կամ մի քանի անգամ հանգիստ առնել: Ջերմանիսում դիտարժան են գյուղատեղիի ողջ տարածքով մեկ սփռված խաչքարերը, ժայռախաչերն ու տապանաքարերը և մասնավորապես կիսավեր եկեղեցին: Ջերմանիսից մի փոքր հեռու են գտնվում մի քանի հնավայրեր ևս (Արջանոց, Խնուտ, Բնուտ, Պարտիզակ, Կարակոյին), որտեղ առկա են խաչքարերով գերեզմանոցներ և ավերակ շինությունների զանազան մնացորդներ:

Հարկ է նշել, որ ցանկության դեպքում արշավականները կարող են Կարակոյին գյուղատեղիից բարձրադիր վայրում գտնվող պատմական Ջղուն գյուղի միջով թափանցել Մանկուկ գետի հովիտը՝ դեպի Սակռաբերդին հարող տարածքը: Այս ճանապարհը գրավիչ է հատկապես նրանով, որ այդ կերպ հնարավոր կլինի իրականացնել օղակաձև երթուղի: Ինչ վերաբերում է հարմար գիշերատեղերին, ապա այդպիսիք ամենուր են, և հարկ չենք համարում մատնանշել դրանք:


1543.5
Քյոթու
Աղասիպակեր
2061.5
Կոտուցսար 2061.5
Տափ
ՈՒՐԾ
Խոսրովասար 1988.3
1485.3
1266.1
1817.4
Սևայգիք
Ազիզշեն
Քսուզ
Մանանա
Ձղուն
Արջանոց
Ձերմանիս
Կարակոյին
Տաշնով
Խնուտ
Պարտիզակ
Բնուտ
2087
Ինգալա
Երանոս
Սպիտակաջուր
Արմոք
Սբ. Ստեփանոս վանք
Աղս
Վերին Արմոք
2348.6
2229.6
2163.1
2246
2650.6
ՈՒՐՑԱՁՈՐ
Վերի
1187
ՇԱՂԱՓ
ԼԱՆՋԱՆԻՍՏ
1508
1647
2419
ԼՈՒՍԱՇՈՂ
Հորթուն
ԹԻՎ 8 ԵՐԹՈՒՂԻ

Արմոքի Սբ. Ստեփանոս վանքը տեսնելու համար անհրաժեշտ է Ուրծ քաղաքատեղիից նույն գլխավոր ճանապարհով վեր բարձրանալ գրեթե 10 կմ և գետանցելով մտնել Ուրծի ձախակողմյան վտակի՝ Արմոքի ձորակն ու շարժվել առաջ ևս 2 կմ: Արմոք գյուղատեղին գտնվում է համանուն վտակի ձախ ափին: Ի դեպ, այս գյուղի պատմական Արմոք անվանաձևը հայտնի է դարձել գյուղատեղիի կենտրոնում կիսավեր մեզ հասած Սբ. Ստեփանոս վանքի արձանագրությունների շնորհիվ: Հիացմունք են պատճառում եկեղեցու արևմտյան ճակատին ագուցված գեղաքանդակ խաչքարերը:

Ֆիզիկապես առավել պատրաստված արշավականների խմբին առաջարկում ենք նույն ճանապարհով վերադառնալու փոխարեն անցում կատարել հարավ-արևելք ուղղությամբ և Վերին Արմոք գյուղատեղին անցնելով՝ կտրել-անցնել ջրբաժան լեռնաճյուղը և իջնել Հորթուն գյուղատեղիից վեր գտնվող վիմափոր եկեղեցու մոտ: Այս բացառիկ խորհրդավոր վայրում գտնվող ժայռափոր եկեղեցուց ցած հոսող վտակի ափերը լավագույն գիշերատեղ կարող են ծառայել: Ի դեպ, Հորթուն գյուղատեղիում էր գտնվում այն խաչքարը, որը ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանված թվակիր խաչքարերից ամենահինն է՝ 876 թ.:

Հորթուն գյուղատեղիից նպատակահարմար է այցելել Զնջոլուի Սբ. Կարապետի վանք, որտեղից վերադարձն Ուրցաձոր գյուղ կապահովի երթուղու օղակաձևությունը:

Վերջում ցանկանում ենք նշել, որ Խոսրովի արգելոցին ծանոթանալու նպատակով մեր կողմից առաջարկված երթուղիներն այցելուներին հնարավորություն կընձեռեն ընդհանուր պատկերացում կազմելու տարածքի մասին, սակայն միաժամանակ հարկ ենք համարում ավելացնել, որ արգելոցը հարուստ է բնության և պատմաճարտարապետական բազմաթիվ այլ հուշարձաններով, որոնց անդրադարձը ենթադրում է ավելի խոր և մասնագիտական հետաքրքրությունների շրջանակ:

Հարգարժան մեր այն ընթերցողներին, որոնք կամենում են առավել հանգամանալից տեղեկություններ քաղել Խոսրովի արգելոցի և նրան հարակից գոտու հնավայրերի պատմության, պահպանված պատմական բազմաբնույթ հուշարձանների վերաբերյալ, առաջարկում ենք ընթերցել ուղեցույցի սույն բաժինը:

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՏՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔ

40.123056 N, 44.769528 E

Գտնվում է Գառնի գյուղից 2,5 կմ արևելք՝ Գեղարդ գետի ձախ ձորակողի հրվանդանաձև երկարած լեռնաճյուղի հարթակի վրա:

Միջնադարում առավել հռչակված է եղել վանքում պահվող և Թ-Ժ դդ.[1] ստեղծված փայտյափորագրազարդ Ամենափրկիչ խաչի շնորհիվ: ԺԱ դարի սկզբին նվիրաբերվելով՝ այնքան մեծ ճանաչում է ձեռք բերել, որ իր անունը փոխանցել է նաև վանքին (այժմ պահվում է Սբ. Էջմիածնում):

Հայտնի է նաև Հայոց թառ, Հայու թառ, Հայվոց թառ, Ամենափրկիչ վանք և Կարմիր վանք անուններով:

Վանքի հիմնադրումն ավանդաբար վերագրվում է Սբ. Սահակ Պարթև կաթողիկոսին (387-436) և Սբ. Մեսրոպ Մաշտոցին (361/362-440). «Շինեցաւ սուրբ և հռչակաւոր բազմաժողով մեծ մենաբ[ան]ն Հայոց թառ ի սուրբ թարգմանչացն՝ ի Սահակ հայրապետէ Հայոց և ի Մեսրոպի վարդապետէ ԴՃ և ԻԳ (426) ամի ծննդեանն Քրիստոսի, ի թագաւորութեանն Հայոց Վռամշապ[հ]ոյ, ի թագաւորութեանն Հռոմոց Արկադեոսի և Ոնեբիոսի և ի պատրիարգութեան Յոհաննու Ոսկեբերանի»[2]:

877 թ. Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը (ծ. թ.՝ անհայտ-897) նորոգում է վանքը և դարձնում ամառային նստավայր[3]:

1002 թ. Գեղի բերդի Գևորգ իշխանը ոչ միայն վերանորոգում է Հավուց թառը, այլև կառուցում «զփառաւոր զիրաշալի Կաթողիկէն Թ (9) խորանաւ»[4]:

Վանքը բարգավաճ ու ծաղկուն շրջան է ապրում հատկապես ԺԳ դ. սկզբներին՝ Եղիա առաջնորդի օրոք, որի մասին մեծ գովեստով է խոսում Կիրակոս Գանձակեցին[5]:

1297 թ. Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի կազմած և Գրիգոր Է

1 Մանրամասն տե՛ս **Աղասյան Ա.**, **Հակոբյան Հ.**, **Հասրաթյան Մ.**, **Ղազարյան Վ.**, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 219:

2 Հայերեն ձեռագրերի ԺԴ դարի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 351:

3 Ըստ Նաթանայել եպիսկոպոս Հավուցթառեցու Ժամանակագրության (**Մաթևոսյան Կ.**, Հավուց թառի վանքը, Երևան, 2012, էջ 12, 91):

4 Նշվ. աշխ., էջ 13-14, 91: Տե՛ս նաև **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 57:

5 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 172:

Անավարզեցի կաթողիկոսին (1293-1307) ուղարկված պատասխան-գրությունը ստորագրողներից էր նաև վանքի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը[6]:

1343 թ. վանահայր Նաթանայել եպիսկոպոս Հավուցթառեցին վանքի և Գառնու պատմությանը նոր լույս սփռող բացառիկ տեղեկություններ է հավելում Սամվել Անեցու «Ժամանակագրության» մեջ[7]:

1423 թ. վանքին ընծայաբերվում է ձեռագիր Մաշտոց և հիշատակարանում նշվում. «Եւ ընծայեցաք զսա ի սուրբ ուխտն Հաւոց-Թառ, ի դուռն սուրբ Կաթողիկէին, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յարութեան, և ամենազաւր սուրբ Ամենափրկչին և այլ սրբոց»[8]:

1424 թ. վանքը փառաբանվում է «բարձրադիտակ, յականաւոր և ի գերահռչակ» խոսքերով[9]:

Առնվազն 1423 թ.-ից Հավուց թառի առաջնորդն էր Զաքարիա Ա եպիսկոպոսը, որն ինչպես Սբ. Էջմիածնում Կիրակոս Ա Վիրապեցի կաթողիկոսին 1441 թ. ընտրողներից, այնպես էլ երկու տարի անց նրան գահընկեց անողներից էր[10]:

1489 թ. վանահայր Զաքարիա Բ Պարոնտեր եպիսկոպոսին հաջողվում է 5000 դինար փրկագին վճարելով՝ դատական կարգով հետ ստանալ վանքի բռնագրավված կալվածքները (Մանկուս, Ավանիկ, Կուտիս, Կըզըլ-վանք՝ Հավուց թառ, Կուտուց վանք, Ավանասար, Թառնիս, Սուրբ Սարգիս և Կոխդ)[11]:

---

6 Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ **Ստեփանոսի Օրբէլեան** արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911, էջ 461-462:

7 **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 89-92:

8 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1955, էջ 303:

9 Նշվ. աշխ., էջ 315:

10 **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրութիւն, Երևան, 1999, էջ 219, 261:

11 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Կալվածագրեր, կազմ.՝ **Փափազյան Հ.**, պր. Ա, Երևան, 1968, էջ 82-86:

1505 թ. Սեֆյան Շահ Իսմայիլ Ա-ի հրովարտակով Հավուց թառի վանքի միաբանությունն ազատվում է պետական մի շարք տուրքերից և պարտավորություններից[12]:

1526 թ. Զաքարիա Բ եպիսկոպոսը և Համազասպ Ա վարդապետը վանքին են նվիրում «...Գառնիի նահիայի Կըզըլ-վանք գյուղի կես մասը, Մանկուս գյուղի կես մասը, Ավանիկ գյուղի կես մասը, Քեղվարդի ագարակի կեսը և Սուրբ Սարգսի ագարակի կեսը, իրենց բոլոր ենթակա և կից, հավելյալ և հարակից վայրերով և ամեն ինչով»[13]:

1577 թ. Սեֆյան Շահ Իսմայիլ Բ-ն հաստատում է վանքապատկան 9 գյուղերի համայնքների նկատմամբ Հավուց թառի ունեցած իրավունքները[14]:

1604 թ. շահաբասյան բռնագաղթի ժամանակ գլխատվում է Գառնու ձորերի այրերից մեկում ապաստանած վանահայր Մանուել եպիսկոպոսը. «Եւ եկեալ ոմն ի քարագնաց տաճկացն եկաց ի դուռն այրին՝ յորում էր Մանուէլ եպիսկոպոսն, և հայեցեալ ի ներքս ետես զեպիսկոպոսն նստեալ, և բարբառով տաճկաց նախ ողջոյն ետ եպիսկոպոսին, իսկ եպիսկոպոսն ո՛չ կարաց պատասխանել ինչ՝ քանզի ափշեալ մնաց, և տաճիկն արիացեալ սրտով և գործով՝ եմուտ ի յայրն, և իսկոյն զվաղակաւորն՝ որ զմիջով իւրով ածեալ ունէր, արտաքարշեալ եհար՝ և սպան զեպիսկոպոսն անդէն, և կտրեալ զգլուխն էարկ ի վայր առաջի խանին»[15]:

Հետաքրքրական է, որ ԺԷ դարում Երևան քաղաքի առաջնորդները միաժա-

12 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, կազմ.՝ **Փափազյան Հ.**, պր. Ա, Երևան, 1956, էջ 54-55:

13 Կալվածագրեր Ա, էջ 105:

14 Հրովարտակներ Ա, էջ 67-68:

15 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 84:



մանակ վարում էին նաև Հավուց թառի առաջնորդական պաշտոնը: 1624 թ., օրինակ, հիշվում է «Հաւուց թառայ վանացն և Երևան քաղաքին առաջնորդ» Համազասպ Բ եպիսկոպոսը[16]:

Առավել արգասաբեր էին «անյաղթ»[17] փիլիսոփա Սիմեոն Ջուղայեցու վանահայրության տարիները, երբ վանքը ոչ միայն բարեկարգվում է, այլև մեծ զարկ է տրվում ուսումնական գործին. «...մեծ վարժապետն Սիմէօն, որ էր տեղեաւ Ջուղայեցի ի մեծ մայրաքաղաքին և թագաւորանիստ արքայակերտոյն Շօշայ...: Եւ յետոյ եպիսկոպոս լեալ նստաւ ի վանս Ս. Ամենափրկչին, որ ասի Հաւուց թառ: Եւ անդէն արարեալ բազում նորոգութիւնս շինուածոց և դպրոցս կարգեալ, ուսոյց յոլովից զարհեստս իմաստից...»[18]:

Վանքի բարեկարգ վիճակը, սակայն, երկար չի տևում: 1679 թ. ավերիչ երկրաշարժին զոհ են գնում նաև վանական բազմաթիվ շինություններ: Ավերակ ու լքված վիճակը ձգվում է մինչև ԺԸ դարի սկզբները: 1691-1704 թթ. միջակայքով է թվագրվում Նահապետ Ա Եղեսացի կաթողիկոսի (1691-1705) գրությունը՝ Հավուց թառի վանքի աղբյուրի խնդիրը կարգավորելու վերաբերյալ, որտեղ հիշվում է առաջնորդ Մովսես վարդապետը (վխճ. 1704 թ.)[19]:

1721 թ. Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը (1715-1725) ձեռնամուխ է լինում Հավուց թառի վերակառուցողական աշխատանքներին: Ցավոք, իրականացնելով զուտ վերակառուցողական,

16 Նշվ. աշխ., էջ 248:

17 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1984, էջ 681:

18 Նշվ. աշխ., էջ 887:

19 Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պր. 1, կազմ.՝ **Աբրահամյան Հար.**, Երևան, 1941, էջ 113-114:

այլ ոչ թե վերականգնողական աշխատանքներ, բոլորովին նոր եկեղեցի կառուցելու նպատակով կործանված կառույցների սրբատաշ արձանագիր ու քանդակազարդ քարերը գործածում է սոսկ որպես պատրաստի շինաքար: Ավերում-քանդում է առանց այդ էլ կիսավեր շինությունները և սկսում կառուցել մի ընդարձակ եկեղեցի, որն էլ լեզգիների արշավանքի պատճառով անավարտ է մնում. «Այլ և զկնի ժամանակաց անցելոց փլեալ էր եկեղեցին շինեալն ի Գրիգոր Մագիստրոսէ, Աստուածատուր կաթողիկոսն Համատանցի կամեցաւ վերըստին շինել, զոր և շինեաց, իսկ զորմունսն քարակոփ մինչև ի տանեաց: Ի ՌՃՀ (1721) թուոջն մերում, սակայն ի ձախորդութենէ ժամանակին մնաց գործն անկատար և կա այնպէս կիսատ մինչև ցայսօր...»[20]:

1734 թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսը (1734-1737) ուխտի է գնում վանք և երկու օր օթևանում այնտեղ[21]:

Մինչև լեզգիների՝ 1755 թ. արշավանքը Հավուց թառը բազմաթիվ նվիրատվությունների շնորհիվ կարողանում է ավելի ընդարձակել վանքապատկան կալվածքների սահմանները[22]: Սակայն նշյալ թվականից հետո ամայանում է և դադարում գործելուց: Անխնամ հուշարձաններն էլ ժամանակի ընթացքում քայքայվում են:

1868 թ. Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը (1866-1882) փորձ է ա-

20 Ջամբռ. գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոց շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի **Սիմէօնէ կաթուղիկոսէ Երեւանցւոյ**, Վաղարշապատ, 1873, էջ 276:

21 **Աբրահամ կաթողիկոս Կրետացւոյ** Պատմագրութիւն անցից իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 6:

22 Ջամբռ, էջ 275-280:

14

նում վերականգնել և դարձնել գործող վանք՝ վանահայր նշանակելով Միքայել վարդապետին[23]: Այն, ցավոք, կյանքի չի կոչվում:

Վանքը՝ գրչության կենտրոն. միջնադարյան Հայաստանի գրչության բազմարդյուն կենտրոններից էր: Տեղում պահվել և ծնունդ են առել բազմաթիվ ձեռագիր մատյաններ: Վանքի գրչատանը ստեղծված մատյանների հիշատակարանները կարևոր տեղեկություններ են պարունակում նրա պատմության վերաբերյալ: Ստորև ներկայացնում ենք դրանցից միայն մի քանիսը:

Հնագույնը 1214 թ. գրված Ավետարանն է, որը հեղինակել է գրիչ-մանրանկարիչ Իգնատիոսը. «...ի վանքս, որ կոչի Հաւու թառ, ընդ հովանեաւ Սուրբ Կաթուղիկեիս եւ մեծահռչակ Սուրբ Նշանիս՝ Ամենափրկիչ կոչեցեալ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս՝ հեզի եւ ամենաբարւոյ Պաւղոս վարդապետի...»[24]: Այն կարևորվում է հատկապես վանքի միաբանների անվանապես թվարկմամբ:

Հաջորդը 1236 թ. գրիչ Պետրոս քահանայի ստեղծած Ավետարանն է, որի գլխավոր հիշատակարանը կարևորվում է վանքի պատմությունը լրացնող նոր տեղեկություններով[25]:

1294 թվականը հիշվում է հնագույն Ավետարաններից մեկի՝ «Վեհամոր Ավետարան»-ի գնելու առնչությամբ[26]:

Տեղում ստեղծված հաջորդ ձեռագիր Ավետարանը գրվել է 1297 թ. Գրիգոր գրչի կողմից. «...ի տէրութեան մերոյս սուրբ ուխտիս Հայոց թառայ պարոն Բեսութային և Խոյանձային..., ի սուրբ և ի հռչակաւոր և յաստուածաբնակ ուխտիս Հայոց թառ յորջորջելոյ, ընդ հովանեաւ կաթողիկէ եկեղեցոյ Սուրբ Սիոնի և աստուածընկալ Սուրբ Ամենայփրկչիս...»[27]:

ԺԵ դարում բեղուն գործունեություն է ծավալել կրոնավոր Ստեփանոս գրիչը: 1458 թ. ընդօրինակել է Շարակնոց (ծաղկողներ՝ գրիչը և Գրիգոր աբեղան): Այս ձեռագրի հիշատակարանն արժեքավոր է հատկապես վանքի սրբությունների թվարկմամբ. «Գրեցաւ... սուրբ և ի գերահռչակ ուխտս, որ կոչի Հայոց-թառ, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի, և երկնանման սուրբ Խորանաց, և հրաշափառ սուրբ Կաթողիկէիս, և լուսոյ մաւր սուրբ Աստուածածնի, և սուրբ աջոյն Թադէոսի առաքելոյ և սուրբ Յակոբ Նշանին...»[28]:

1464 թ. նույն գրչի ձեռքով վանքում ստեղծվել է Ճաշոց, որի հիշատակարանից կարևոր տեղեկություններ ենք քաղում Դանիել վարդապետի հոգացողությամբ Կաթողիկե եկեղեցու նորոգության մասին. «...վարդապետն Դանիէլ եկն ի սուրբ ուխտս Հայոց-Թառ և միաբան եղև սուրբ Ամենափրկչիս և այլ սրբութեանցս: Եւ մեծաւ յուսով և փափաքմամբ սիրով ձեռն էարկ զսուրբ և երկնանման և փառաւոր կաթուղիկէ եկեղեցիս, և վերստին կրկին զարդարեաց և սալեց և նորոգեաց»[29]:

1471 թ. Ստեփանոս գրիչն ընդօրինակել է Ավետարան, որի հիշատակարանը տպավորիչ է Հավուց թառի սրբությունների՝ առավել ընդարձակ թվարկմամբ. «Ի գերահռչակ սուրբ ուխտս Հայոց-թառս,

23 «Արարատ», 1871, Զ, էջ 331:

24 Հայերեն ձեռագրերի ԺԳ դարի հիշատակարաններ, Երևան, 1984, էջ 83: Տե՛ս նաև **Հ. Ե. Փ.** /Փեչիկյան Եղիա վարդապետ/, Յիշատակարանք գրչագրաց Ս. Գրոց, «Բազմավէպ», 1935, № 9-12, էջ 433:

25 ԺԳ, էջ 191:

26 Նշվ. աշխ., էջ 741: Ի դեպ, 1991 թ.-ից սկսած՝ այս Ավետարանի վրա են երդվում ՀՀ նախագահները:

27 Նշվ. աշխ., էջ 796:

28 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1958, էջ 99:

29 Նշվ. աշխ., էջ 214:

ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս, որ է պատկեր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և մաւրս մերոյ սրբոյ Սիովնի, և սուրբ Աստուածածնի, և աստուածընկալ սուրբ Նշանացս՝ կենսատու սուրբ Աստուածածնի, և աստուածընկալ սուրբ Նշանացս՝ կենսատու սուրբ Յակ[ոբի՞]...»[30]:

Վանքի հուշարձանախմբերը. բաղկացած է 3 հուշարձանախմբից: Ցայսօր ճշտված չեն երկու հիմնական հուշարձանախմբերի եկեղեցիների անունները, թեև դրանք հայտնի են մատենագիտական աղբյուրներից:

Ա՝ գլխավոր հուշարձանախումբը շրջապատված է պարսպապատով և բաղկացած է Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի՝ 1679 թ. երկրաշարժից ավերված եկեղեցու և գավթի քարերի օգտագործմամբ նախաձեռնած և թերավարտ մնացած գմբեթավոր դահլիճի հորինվածքով եկեղեցուց (պայմանականորեն կոչվում է նրա անվամբ), որին հարավից կից է քառամույթ գավթի պահպանված հարավային հատվածը՝ մեկ զույգ մույթերով: Վերջինիս արևելքից կից է ուղղանկյուն հատակագծով մի կառույց, որի նշանակությունը դեռևս անորոշ է (թերևս՝ դամբարան կամ զանգակատուն): Սրա հյուսիսային պատը համարվում է Գեղիի բերդի Գևորգ իշխանի կառուցած Կաթողիկե եկեղեցու հարավային պատը[31]: Պարիսպներին հարավարևմուտքից կից է սեղանատունը, իսկ հյուսիս-արևմուտքից՝ միաբանության սենյակները:

Բ հուշարձանախումբը գտնվում է գըլխավորից արևմուտք՝ բլրի վրա: Կենտրոնում ԺԳ դ. սկզբներով թվագրվող, ներքուստ խաչաձև, անկյուններում ավանդատներով գմբեթավոր շինություն է՝ կառուցված բազմագույն քարերով: Պայմանականորեն տրվել է «Բլրի» եկեղեցի անունը: Նրան հարավից կից է թաղածածկ երկու մատուռ: Շուրջը տարածվում է խաչքարերով գերեզմանոցը:

Գ հուշարձանախումբը, որն ընդհանուր համալիրից մոտ 200 մ արևելք է, բաղկացած է Սբ. Կարապետ մատուռից (1213 թ.) և շուրջը տարածվող փոքրիկ գերեզմանոցից, որտեղ կան խաչքարեր և տապանաքարեր:

Ա հուշարձանախմբից դեպի «Բլրի» եկեղեցի տանող ճանապարհին առկա է գերեզմանոց: Խաչքարեր կան նաև Գառնուց Հավուց թառ տանող ճանապարհին:

Նորագույն շրջանի ուսումնասիրություններ. վանքի պատմական անցյալի, ճարտարապետական կառույցների, վիմագիր արձանագրությունների բազմակողմանի ուսումնասիրությունները, սկիզբ առնելով դեռևս ԺԹ դարի վերջերից, իրենց բնականոն զարգացմամբ շարունակությունն են գտել նաև հետագա շրջանում: Այդ բնագավառում արժանի ավանդ ունեն Հովհաննես Շահխաթունյանցը, Ղևոնդ Ալիշանը, Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերության արշավախումբը (ղեկավար՝ Վասիլի Սիսոև), Գարեգին Հովսեփյանը, Հովսեփ Եղիազարյանը, Հարություն Քյուրդյանը, Ներսես Ծովականը, Գագիկ Սարգսյանը, Կարեն Մաքեոսյանը և այլք[32]:

30 Նշվ. աշխ., էջ 314:

31 **Սարգսյան Գ.**, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, № 4, էջ 68:

32 **Շահխաթունեանց Յովհ. եպս.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842, էջ 291-297: **Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 351-358: Материалы по археологии Кавказа. Вып. XIII (այսուհետ՝ МАК. Вып. XIII) / под ред. П. Уваровой и Х. Кучук-Иоаннесова. Москва, 1916. С. 38-50.

Վանքի տարածքում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչությունը Երևանի տուրիզմի և էքսկուրսիաների բյուրոյի հետ համատեղ 1983 թ. կատարել է մաքրման և մասնակի պեղման աշխատանքներ[33]:

2015 թ. ՀՀ մշակույթի նախարարության հանձնարարությամբ «Բլրի» եկեղեցու տարածքում հնագիտական ուսումնասիրություններ և պեղման աշխատանքներ է իրականացրել Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Ա. Նալբանդյան)[34]:

Սբ. Կարապետ մատուռի ճարտարապետությունն ուսումնասիրել և չափագրել է Ամիրան Բաղիշյանը[35]:

ԱԼԻՄԱՐԴԱՆ

40.131667 N, 44.824722 E

Գտնվում է Գառնի գյուղից 6 կմ հյուսիս-արևելք՝ Գեղարդագետի ձախափնյա բարձրադիր սարահարթին՝ շրջակայքի նկատմամբ իշխող տեղանքում:

Գյուղի պատմական անունը մոռացվել է: 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում նշված է նույն՝ Ալիմարդան անունով: Որպես հայաբնակ գյուղ՝ Մազազ գավառի այլ բնակավայրերի նման գոյատևել է մինչև Շահ Աբաս Ա-ի կազմակերպած 1604 թ. բռնագաղթը: 1829-31 թթ., երբ մտնում էր Հայկական մարզի Երևանի գավառի Գառնիբասարի մահալի կազմում, դեռևս ամայի էր և ավերակ[1]: ԺԹ դարի կեսերին բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1873 թ. ուներ 52[2], 1908 թ.՝ 63 բնակիչ[3]: Ապաբնակեցվել է 1948-49 թթ.:

Ըստ ավանդության՝ գյուղին մերձակա բարձր սարի գագաթին բնակվել է փիլիսոփա, ռազմական և պետական գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (մոտ 990, Բջնի–1058)[4]:

Գյուղատեղիում, բացի Ժ դ. թվագրվող պարզ հորինվածքով խաչքարից, այլ հուշարձաններ չեն պահպանվել:

ԿՈՒՏՈՒԺ ՎԱՆՔ ԳՅՈՒՂ

40.106333 N, 44.756417 E

Գտնվում է Գառնի գյուղից 2,5 կմ հարավ-արևելք՝ Ազատ գետի աջ ափին:

ԺԸ դարում եկվոր խաշնարած բնակիչների կողմից ստացել է Թարաքյամալար անունը: Նույն անվամբ նշված է նաև 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում:

Յովսէփեանց Գ., Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937: **Ծովական Ն.**, Հաւուց թառ կամ Ամենափրկիչ, «Սիոն», 1961, էջ 312-314: **Եղիազարյան Հ.**, Հավուց թառի վանքը, «Էջմիածին», 1963, Ե, էջ 25-31; **Զ**, էջ 38-49: **Քիւրտեան Յ.**, Փայտափորագրութեան արուեստը հայոց մէջ, «Սիոն», 1967, № 3-4, էջ 146-152: **Սարգսյան Գ.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1988, № 4, էջ 65-71: **Նույնի՝** Վիմագրագիտական նորոյթներ (Հաւուց թառ), «Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 229-254: **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ.:

33 **Պետրոսյան Ս.**, Հավուց թառի վերածնունդը, «Հայաստանի բնություն», 1984, պր. 1, էջ 38:

34 **Նալբանդյան Ա.**, «Հավուց թառ» վանական համալիրի «Բլրի» եկեղեցին, «Հուշարձան» տարեգիրք, ԺԲ-ԺԳ, Երևան, 2017-2018, էջ 75-106: **Նույնի՝** Նորահայտ վիմագրեր Հավուց թառից, «Հուշարձան» տարեգիրք, ԺԴ, Երևան, 2019, էջ 26-51:

35 **Բաղիշյան Ա.**, «Հավուց թառ» վանքի Սբ. Կարապետ մատուռի ճարտարապետությունը, «Հուշարձան» տարեգիրք, ԺԱ, Երևան, 2016, էջ 29-37:

1 **Шопен И.** Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. Санкт-Петербург, 1852. С. 511.

2 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 87:

3 Памятная книжка Эриванской губернии на 1908 год. Отд. III (այսուհետ՝ ПКЭГ. 1908. Отд. III) / под ред. В. Васильева. Эривань, 1908. С. 4-5.

4 МАК. Вып. XIII. С. 71.

Մազազ գավառի հնագույն բնակավայրերից էր, որը, որպես հայաբնակ գյուղ, գոյատևել է մինչև շահաբասյան բռնագաղթը: Առաջին հիշատակությունը գտնում ենք Հավուց թառի Զաքարիա վարդապետի ժառանգական կալվածքներ համարվող մի շարք գյուղերի նկատմամբ Բեյթ-ուլ-մալի[1] կողմից առարկություն չլինելու վերաբերյալ 1489 թ. կազմված պարսկերեն կալվածագրում. «Առաջին ագարակը, Կուտուց վանքի ագարակն է, որ գտնվում է [նույն] նահիայում՝ Գիլանի ձորում և որի սահմանները հասնում են մինչև Գետախառնուրդ, Սուր[բ Սարգիս], Դրուսանկ և Շիկաքար»[2]: Ավելի ուշ հիշվում է 1577 թ. մի հրովարտակում: Ըստ դրա՝ կարգադրվում է հետևել, որ Չուխուր-Սաադում (Երևանի խանությունում) գտնվող 9 գյուղերի համայնքներ կատարեն իրենց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ[3]: ԺԸ դարում հայաթափ գյուղատեղին բնակեցվում է թյուրքական ցեղերով: Որպես տաճկաբնակ գյուղ[4]՝ այն հիշատակում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը և նույնացնում Թարաքյամալար գյուղի հետ. «Ունի (խոսքը Հավուց թառի Սբ. Ամենափրկիչ վանքի մասին է) և զմլքատու գեօղօրայս, յորոց առնու զմուլքս ի տասանէն զմէկ, որք են այսոքիկ ...Կուտուց վանք (որ Թարաքեամի գեօղ և կոչի)...»[5]: 1829-31 թթ. Հայկական մարզի Երևանի գավառի Գառնիբասարի մահալի կազմում Թարաքյամալար ձևով հիշվող գյուղը կրկին ամայի էր[6]: 1873 թ. ուներ 32[7], 1908 թ.՝ 50[8], 1914 թ.՝ 83 բնակիչ[9]: Հետագայում ամայացել է:

ԲԱՅԲՈՒՐԴ

40.091694 N, 44.789667 E

Բայբուրդ[1] գյուղատեղին գտնվում է Գառնի գյուղից 5,5 կմ հարավ-արևելք՝ Ազատ, Աղջոց և Գլան գետերի միախառնման հատվածում՝ գեղեցկահայաց ձորահովտում:

Պատմական անունը մոռացության է մատնվել: Մազազ գավառի երբեմնի հայահոծ այս բնակավայրի մասին մատենագրական տեղեկություններ չունենք, սակայն պահպանված սակավաթիվ հուշարձանները, ի մասնավորի՝ եկեղեցին, փաստում են, որ այն առնվազն Ե դարից եղել է հայաբնակ և գոյատևել մինչև շահաբասյան բռնագաղթը:

ԺԹ դարի սկզբին հայաթափ գյուղատեղին բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1829-1831 թթ., երբ մտնում էր Հայկական մարզի Երևանի գավառի Գառնիբասարի մահալի կազմում, ուներ 19 տուն՝ 96 մահմեդական բնակիչ[2]: Նրանց թիվը 1873 թ. հասնում

1 Հավատափոխությունից հրաժարվող հայ ֆեոդալների կալվածքների բռնագրավումն իրագործող հաստատություն:

2 Կալվածագրեր Ա, էջ 84:

3 Հրովարտակներ Ա, էջ 67:

4 Ջամբռ, էջ 278:

5 Նույն տեղում, էջ 276: Ալիշանը նշում է, որ Սիմեոն կաթողիկոսը Թարաքյամալար գյուղը նույնացնում է Կուտիսի հետ (**Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 361): Սխալը կրկնված է նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում (հ. 3, Երևան, 1991, էջ 283):

6 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 511:

7 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 333:

8 ПКЭГ. 1908. Отд. III. С. 4-5.

9 Кавказский календарь на 1915 г. Тифлис, 1914. С. 186.

1 Ալիշանը, հենվելով Ստրաբոնի տեղեկության վրա, Բայբուրդ ու Բաբուրսա բերդի անունների զուտ հնչյունական նմանության պատճառով սրանց միջև տեսնում է ընդհանրություն. «Քաղաքից (խոսքն Արտաշատ մայրաքաղաքի մասին է) ոչ շատ հեռու գտնվում են Տիգրանի և Արտավազդի գանձատները, անառիկ ամրոցներ՝ Բաբուրսա և Ոլանե» (Օտար աղբյուրները հայերի մասին, I, Հունական աղբյուրներ. **Ստրաբոն**, Երևան, 1940, էջ 59: **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 352):

2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 555-558:

էր 143-ի[3], 1908 թ.՝ 201-ի[4]: Լքվել է 1980-ական թթ.:

Գյուղամիջում՝ թեք սարալանջին գտնվող եկեղեցին թվագրվում է Ե դարի վերջին քառորդով և պատկանում արտաքուստ շեշտված հնգանիստ աբսիդով սակավաթիվ հուշարձանների տիպին[5]: Բազմաստիճան որմնախարսխի վրա վեր բարձրացող բազիլիկ է (ներքին չափ.՝ 3,95 x 8,25 մ), որի երկարավուն դահլիճ-աղոթասրահն արևելքից ավարտվում է ներքուստ կիսաշրջանաձև աբսիդով: Թաղակիր կամարն ունի շեշտված պայտաձևություն: Կամարի կենտրոնում՝ հանգուցային քարի վրա, քանդակված է հավասարաթև խաչ, կամարը պահող խոյակներին՝ ականթաձև բուսազարդերով ներփակված մարդկային գլուխներ[6]: Լուսավորությունը կատարվում է արևելքից, հարավից և արևմուտքից (վերջինը չի պահպանվել) բաց-

ված մեկական պատուհանով: Միակ մուտքը հարավից է: Վերջինիս ուղղանկյուն բարավորը հարդարված է շրջանակի մեջ առնված հավասարաթև խաչաքանդակով: Ունեցել է երկթեք տանիք: Կառուցված է գորշակապտավուն սրբատաշ բազալտից՝ կրաշաղախի միացությամբ: Հուշարձանի տարածական-ծավալային հորինվածքն ամբողջովին պահպանված է: Ավերված է միայն ծածկի քաղից մի հատված:

Մինչ 1983-84 թթ. Բայբուրդի եկեղեցին համարյա ամբողջությամբ թաղված է եղել հողի մեջ: Այդ տարիներին կատարված մաքրման աշխատանքների ժամանակ բացվել են և՛ սա, և՛ նույնպիսի հո-

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 333:

4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 4-5.

5 **Հասրաթյան Մ.**, Հայաստանի արտաքուստ շեշտված աբսիդով միանավ հուշարձանները, «ԼՀԳ», 1976, № 11, էջ 39:

6 Նույնատիպ մի խոյակ պահվում է Ստամբուլի թանգարանում (**Հասրաթյան Մ.**, Հայ-բյուզանդական ճարտարապետական առնչությունները վաղ միջնադարում. միանավ բազիլիկների օրինակով, «Պատմաբանասիրական հանդես», 1993, № 1-2, էջ 120):

ռինվածքով հարավից կից սրահը: Վերջինս, սակայն, խիստ ավերված է, պահպանվել է ընդամենը շարվածք՝ 1-2 քար բարձրությամբ: Կառուցողական արվեստն ու շինանյութը նույնն են, ինչ կանգուն եկեղեցունը: Ի տարբերություն նախորդի՝ հարավային ընդարձակ մուտք-բացվածքն ունեցել է երկու սյան վրա հենված կամարակապ լուծում: Եվս մեկ մուտք առկա է արևմուտքից:

Դեռևս Ի դարի սկզբին եկեղեցուն անդրադարձել է Մոսկովյան կայսերական հնագիտական արշավախումբը[7]: Նրանց հրատարակած նյութերում առկա են անճշտություններ. եկեղեցին թվագրվում է ուշ ժամանակաշրջանով, հատակագծում աբսիդը ներգծված է ուղղանկյուն պարագծի մեջ[8]: Հուշարձանին հանգամանորեն անդրադարձել է Մ. Հասրաթյանը[9]: Ուսումնասիրելով և զարգացնելով վաղ միջնադարում հայ-բյուզանդական ճարտարապետական կապերի և ազդեցությունների հարցը՝ Հասրաթյանը եկել է այն եզրահանգման, որ հայկական միանավ, արտաքուստ շեշտված աբսիդով եկեղեցիներն ու կապադովկյան նույնատիպ կառույցներն ունեն թե՛ շինարարական, թե՛ ծավալատարածական և թե՛ հարդարանքի ընդհանրություններ, և հայ-բյուզանդական ճարտարապետական կապերի անուղղակի ապացույց կարելի է համարել մեր հնագույն որոշ եկեղեցիների վրա պահպանված հունարեն արձանագրությունները, այդ թվում՝ Բայբուրդի եկեղեցու պրոֆիլավոր քարի հունարեն կարճ արձանագրություն-ծածկագրությունը՝ բաղկացած «ΥΓΕΙΑ» և «ΚΗΧΑΡΙϹ»՝ «Առողջություն» և «Երանություն» թարգմանվող խորհրդանշանային բառերից, և ենթադրել, որ «շրջված՝ հայելու անդրադարձումով» գրված այս գաղտնագրի «հեղինակը ցանկացել է թաքցնել ազգային պատկանելությունը կամ Եզրի[10] նման՝ կրոնական կողմնորոշումը և հունարեն բառերը փորագրել է ծածկագիր»[11]:

Արձանագիր այս բեկորը գտնվում է եկեղեցուց հարավ՝ քարակույտերի մեջ, այնտեղ, ուր տարածվել է ներկայումս ամբողջովին ավերված գերեզմանոցը, որի խաչքարերը ևս ի հայտ են եկել միայն մաքրման աշխատանքներից հետո: Դրանց թվում եղել են թեավոր խաչի մի բեկոր և հնաոճ 10 խաչքար: Ինչպես այստեղ, այնպես էլ ողջ գյուղատեղիի տարածքում արձանագիր հուշարձաններ չեն պահպանվել: Մոսկովյան կայսերական հնագիտական արշավախմբի հրատարակած նյութերում ևս նշված է, որ հնավայրում վիմագրեր չեն գտնվել[12], սակայն Սիսոևի կատարած էստամպաժի միջոցով ընթերցված արձանագրությունների շարքում ներկայացված է «Ես՝ Սմբատա՝ աշխարհի...» արձանագրությունն[13] առանց որևէ հիշատակության,

7 MAK. Вып. XIII. С. 70.

8 Նշվ. աշխ., նկ. 21, 22:

9 **Հասրաթյան Մ.**, «ԼՀԳ», 1976, № 11, էջ 38-39: **Նույնի**՝«ՊԲՀ», 1993, № 1-2, էջ 119-120: Раннесредневековые зальные церкви Армении с выступающей наружу апсидой // Научные сообщения Государственного музея искусства народов Востока. Вып. X. Москва, 1978. С. 113; Les églises à nef unique avec abside saillante dans l'Arménie paléochrétienne, *Armenian studies/Études arméniennes: In memoriam Haïg Berbérian, Lisbon, 1986*, p. 320-321. Affinités Architecturales Arméno-Byzantines au haut moyen âge: L'exemple des basiliques mononefs, *L'Arménie et Byzance, Paris, 1996*, p. 117-118. Հուշարձանին անդրադարձել են նաև Ժ. Մ. Թիերրին և Պ. Տոնապետյանը (**Thierry J-M., P. Donabedian**, Les arts arméniens, Paris, 1987, p. 502).

10 Խոսքը 630 թ. ընտրված Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի մասին է, որն ունեցել է բյուզանդական կողմնորոշում:

11 «ՊԲՀ», 1993, № 1-2, էջ 119:

12 MAK. Вып. XIII. С. 70.

13 Նշվ. աշխ., էջ 236:

թե վերջինս ինչ կարգի հուշարձանի վրա է զետեղված եղել: Տեղեկությունը համարում ենք կասկածելի, քանի որ հակասում է իրենց իսկ հաղորդած նյութերին:

Բայբուրդի փոքրիկ հուշարձանախումբը՝ մի ամբողջություն կազմող իրար կից միանավ բազիլիկները, եզակի է ուսումնասիրվող տարածքի ճարտարապետության համար:

ԱՂՋՈՑ ՎԱՆՔ

40.106917 N, 44.807750 E

Միջնադարյան Հայաստանի ճարտարապետության և առավելապես քանդակագործության նշանավոր վանական համալիրներից է: Գտնվում է Գառնի գյուղից 6 կմ հարավ-արևելք՝ համանուն գետի աջ հարավահայաց ձորալանջին:

Հայտնի է նաև Ախչոյ, Աղջոտ, Աղջուց, Աղչոյ, Աղչուց, Աղճոնց վանք, Աղճովանք, Աղջոց Սբ. Ստեփանոս, Սբ. Ստեփանոս անվանումներով:

Վանքի հիմնադրումն ավանդաբար վերագրվում է Գրիգոր Լուսավորչին, որը կառուցում է այն Հայոց Տրդատ Գ Մեծ թագավորի հալածանքներից խույս տրված Հռիփսիմյանց կույսերին համախոհ-ընկերակից քահանաներից մեկի՝ Ստեփանոսի նահատակության վայրում և կոչում Աղջոց Սբ. Ստեփանոս. «Իսկ երեք քահանայքն, որ էին ընդ սրբոցն և մին ի կուսանացն Նունի անուն՝ ի կոտորել զայլսն, փախստական եղեն դէպ յարեւելս: Եւ մի ոմն ի քահանայիցն Ստեփանոս անուն՝ անկաւ փախստական ի լեառն Գառնոյ և անդ կեցեալ կատարեցաւ ի Քրիստոս և թաղեցաւ ի տեղւոջն: Եւ յետոյ սուրբն Գրիգոր ազդմամբ հրեշտակաց արար զտեղին վանք միաբանակեցաց, որ է մինչև ցայսօր և կաւչի Աղջոց վանք, այս է՝ աղջկաց վանք: Եւ զանուն սրբոյն ուսաւ ի հրեշտակէն Սուրբն Գրիգորն Ստեփաննոս գոլ վասն որոյ ասի

Աղջոց վանուց Սուրբ Ստեփաննոս: Եւ բազում քամոտք բժշկին այժմ ի վանքն յայն նշխարաց Սրբոյն Ստեփաննոսի»[1]:

Աղջոց Սբ. Ստեփանոսի անվանն է նվիրված մի Ծարական[2], որի հեղինակն անհայտ է:

Մատենագիր աղբյուրները հիմնականում լռում են, միայն ԺԷ դ. պատմիչներն են հպանցիկ տեղեկություններ հաղորդում վանքի պատմության մասին, որը հյուսվում է մասամբ ձեռագրագիտական

1 **Կարապետյան Մ.**, Աղջոց Սուրբ Ստեփանոսի վանքը, «Էջմիածին», 1985, Բ-Գ, էջ 50:

2 **Մահակ վարդապետ Ամատունի**, Հին և Նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 164: Նաև՝ **Յովսեփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Բ, Երուսաղէմ, 1942, էջ 137:

նյութի, սակայն առավելապես վիմագիր արձանագրությունների շնորհիվ:

Աղջոց վանքի հիմնադրման ստույգ ժամանակի մասին տեղեկություններ չունենք, սակայն պահպանված 1197 թ. երկու խաչքարերը վկայում են այդտեղ ավելի վաղ գոյություն ունեցած վանական կյանքի մասին:

Ինչ վերաբերում է համալիրի շինությունների կառուցման ժամանակին, ապա վիմագիր արձանագրության շնորհիվ պարզվում է վանքի գլխավոր՝ Սբ.

Ստեփանոս եկեղեցու կառուցման տարեթիվը՝ 1207: Հարկ է նշել, որ անվանի վիմագրագետ Սուրեն Սաղումյանը, ուսումնասիրություններ կատարելով վանքում, ի մասնավորի՝ Սբ. Ստեփանոս եկեղեցու շինարարական արձանագրության վերընթերցման և ճշտման շնորհիվ վիճարկել է Գ. Հովսեփյանի առաջ քաշած տեսակետը և եզրահանգել, որ կառուցումը կապ չունի Զաքարյան և Խաղբակյան իշխանական տոհմերի հետ, այլ այն կառուցվել է հասարակության մի-

ջոցներով 900 դահեկան կամ 4 կգ ոսկու արժեքով[3]: Գավիթն էլ 1222-1234 թթ. միջակայքում ստեղծված կառույց է, իսկ Պողոս-Պետրոս եկեղեցին՝ 1270 թ.:

Մատենագրական աղբյուրներում վանքի վերաբերյալ ամենավաղ տեղեկությունը հաղորդում է ԺԳ դարի պատմագիր Վարդան Արևելցին, որը, որոշ ժամանակ ապրելով և գործելով այստեղ, թողել է նման հիշատակագրություն. «...Աղջոց վանքն, ուր կա սբ. աջն Ստեփանոսի քինյին և Սբ. Աջն Արիստակիսի որդոյն Գրիգոր Լուսաւորչի»[4]: Նույն դարի մեկ այլ պատմիչ՝ Ստեփանոս Օրբելյանն էլ իր «Պատմության» մեջ նույնպես ունի հիշատակություն Հովսեփ վարդապետի մասին. «ՉԻԸ (1279) կատարի մեծ վարդապետն Յովսէփ ի վանսն Ախչոյ»[5]:

Ի դեպ, նշյալ հոգևորականը հավանաբար նույնանում է Պողոս-Պետրոս եկեղեցու մուտքի աստիճանին հիշատակագրված վանքի առաջնորդի հետ:

ԺԳ դարից սկսած՝ վանքը հիմնականում ԺԵ դ. եղել է գրչության կենտրոն:

Այնուհետև մինչև ԺԷ դարի սկիզբը վանքի գործունեության վերաբերյալ տեղեկություններ չունենք: Շահաբասյան բռնագաղթի ժամանակ պարսիկները, կողոպտելով վանքի գաղտնարանը, Թավրիզ են տանում նաև Գր. Լուսավորչի կրտսեր որդու՝ Արիստակես Ա Հայրապետի (վխճ. 333 թ.) Աջը[6]: Այն կարողանում է ազատել մի վաճառական՝ մեծ փրկագին վճարելով և տանելով իր հայրենի քաղաք՝ Բաղեշ: Այնուհետև Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսին (1629-1632) է հաջողվում փրկել Սբ. Էջմիածնի վանքի պարտքերի դիմաց Մելքիսեդեկ Գառնեցի աթոռակից կաթողիկոսի կողմից գրավադրած այս սրբությունը[7]:

3 Մանրամասն տե՛ս **Մաղումյան Մ.**, Պատմական մի հուշարձանի կառուցման հարցի շուրջը, «ՊԲՀ», 1986, № 2, էջ 190-204:

4 **Յովսէփէան Գ.**, Խաղբակեանք..., Բ, էջ 138:

5 Մանր ժամանակագրություններ, մասն Ա, կազմ.՝ **Վ. Հակոբյան**, Երևան, 1951, էջ 45:

6 ԺԷԱ, Երևան, 1974, էջ 288:

7 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 201, 252:

Հայտնի է նաև, որ 1610 թ. վանքի առաջնորդն էր Միքայել եպիսկոպոսը, որի ստորագրությունը («Ես՝ Միքայել առաջնորդ սուրբ ուխտիս Աղչկուց վանացն, որ է նահատակ Ս. Ստեփանոս քահանային»), արձանագրվել է Լեհաց երկիր ուղարկված կաթողիկոսական կոնդակում[8]: Պահպանվել է 1625 թ. վերաբերող մի տեղեկություն, որից իմանում ենք Հովհաննավանքում բնակվող «Աղջոց վանից» Պետրոս աբեղայի անունը[9]: Հայտնի է նաև, որ վանքը ևս զերծ չի մնացել 1679 թ. հունիսի 4-ի ավերիչ երկրաշարժից[10]: Աղետից հետո, ըստ ամենայնի, համեմատաբար քիչ վնասված վանքը նորոգվում է և շարունակում գործել, քանզի ԺԸ դ. սկզբին հիշվում է Մովսես անունով վանահայրը[11]:

ԺԸ դարի կեսերին լեզգիները թալանում և ավերում են այն[12]:

Ինչ վերաբերում է կալվածապատկան տարածքներին, ապա հայտնի է, որ 1765 թ. Աղջոց Սբ. Ստեփանոսին էին պատկանում «...զՃաթղռան[13], զՄեծ Գլան և զՓոքր Գլան» գյուղերը[14]: Նրա սեփականությունն էին նաև՝ «...մի ջրաղաց յիւր մերձ»[15], «Աղջոց վանիցն՝ մէկ այգի ի Շենգաւիթ[16], Ա ձիթահանք ի Ճաթղռան, և Ա ձիթահանք յիւր մօտ»[17]: ԺԸ դ. վերջերից վանքը հետզհետե լքվում և ամայանում է:

8 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 354:

9 **Զաքարեայ Սարկաւագի** պատմագրութիւն, Ա, Վաղարշապատ, 1870, էջ 28:

10 Նշվ. աշխ., Բ, էջ 104:

11 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 354:

12 **Յովսէփեան Գ.**, Խաղբակեանք..., Բ, էջ 158:

13 Ներկայիս Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղն է (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 824):

14 Ջամբռ, էջ 281:

15 Նշվ. աշխ., էջ 140:

16 Նախկինում գյուղ, ներկայումս՝ Երևանի թաղամասերից:

17 Ջամբռ, էջ 141:

1905-1906 թթ.՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, մեծապես վնասվում է[18]: 1907 թ. Սբ. Ստեփանոսի միակ բնակիչներն էին ծերունի կրոնավոր պահակը և նրա կինը, ժամերգությունն էլ կատարում էր Գառնու քահանան՝ այն էլ չափազանց հազվադեպ[19]: 1910 թ. «Աղճոնց Ս. Ստեփանոս» վանքն արդեն «...դժբախտաբար թէ՛ անբնակ է և թէ՛ քանդելու վտանգին տակ»[20]:

Ցայսօր վանքը հայտնի ուխտատեղի է և ունի մշտական այցելուներ: Նախկինում կատարված ուխտագնացություններից արժանահիշատակ է Աբրահամ կաթողիկոսի (1734-1737 թթ.) այցը[21]: 1910 թ. այն բերել է 200 ռ. եկամուտ[22]: Հայտնի է նաև, որ 1913 թ. կազմվել է վանքում պահվող եկեղեցական իրերի ցուցակը[23]:

Վանքը՝ գրչության կենտրոն. թեև տեղում ստեղծված ձեռագրերից քչերն են մեզ հասել, Աղջոց վանքը, սակայն, եղել է միջնադարյան Հայաստանի նշանավոր գրչության կենտրոններից: Ամենահին ձեռագիր մատյանը Վարդան Արևելցու «Դանիէլի Մեկնութիւն»-ն է. «...կատարեցաւ ՉԺԷ (1268), առաջի սուրբ և փառաւորեալ նահատակիս Սուրբ Ստեփանոսի, ի սուրբ ուխտս Աղչոց վանիցս, յառաջնորդութեան Երեմիա գովելի ասպընջականիս, և գոհանալի եղբարց»[24]: Մինչև ԺԵ դարը և դրանից հետո վանքում ստեղծված ոչ մի հիշատակարան մեզ հայտնի չէ: ԺԵ դ.-ից մեզ են հասել միայն Գալուստ և Վարդան աբեղաների

18 MAK. Вып. XIII. С. 54. Նաև՝ ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 558, թ. 42, և 44 շրջ.: Ի դեպ, 1899 թ.-ից առ 1907 թ. վանահոր պաշտոնն էր կատարում Գևորգ քահանա Տեր-Ստեփաննոսյանը:

19 MAK. Вып. XIII. С. 63.

20 Յիշատակներ Բաղէշի առաջնորդութենէս սաղիմական, ուղեգրական, տեղագրական եւ նամակներ, **Եղիշէ եպիսկ. Չիլինկիրեան**, Երուսաղեմ, 1925, էջ 115:

21 **Աբրահամ Կրետացի**, էջ 39:

22 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 101, թ. 4:

23 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 940, թ. 6:

24 ԺԳ, էջ 365:

ընդօրինակած ձեռագրերը[25]: Դրանցից հնագույնը մի Մանրուսմունք է՝ գրված Գալուստ աբեղայի կողմից, որտեղ գրչության վայրն այսպես է նկարագրվում. «...ի վանքս Աղջոց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ստեփանոս նահատակիս, և Թրի սուրբ նշանիս, և այլ բազմահաւաք սրբոցս...»[26]: Նույն թվականին դարձյալ նույն աբեղայի ստեղծած Ճաշոցի հիշատակարանն էլ հատկապես կարևորվում է սրբությունների՝ ավելի ընդարձակ հիշատակմամբ. «... գրեցաւ գիրքս այս ի գաւառիս Արարադեան, ի ձորս Քեղոյ, ի վանքս Աղջոց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Կաթողիկէիս, և սուրբ Ստեփանոս նահատակիս, և Թրի սուրբ նշանիս և Աբամունից սուրբ խաչիս, և Թևատ սուրբ Գրիգորիս, և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ»[27]:

Ուսումնասիրություններ. վանքի պատմության և ճարտարապետության ուսում-

25 ԺԵԱ, էջ 551-553, 606: ԺԵԲ, Երևան, 1958, էջ 18-19, 131, 315-316: ԺԵԳ, Երևան, 1967, էջ 400-401:

26 ԺԵԱ, էջ 537:

27 ԺԵԱ, էջ 536-537:

նասիրությամբ զբաղվել են Ղևոնդ Ալիշանը[28] և Վասիլի Սիսոն, Տարագրոս Տեր-Վարդանյանց, Խաչիկ Դաղյանց եռյակից կազմված Մոսկովյան կայսերական հնագիտական արշավախումբը[29], Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը[30], մեր օրերում՝ Սուրեն Սաղումյանը[31] և Լիլիթ Զաքարյանը[32]: Անդրադարձել են այլ հեղինակներ ևս[33]:

28 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 352-354, 360-361:

29 MAK. Вып. XIII. С. 54-65, 237.

30 **Յովսեփեան Գ.**, Խաղբակյանք..., հ. Ա, Վաղարշապատ, 1928, էջ 62-63; հ. Բ, էջ 137-158, 193, 194, 196; հ. Գ, Նյու Յորք, 1942/3, էջ 9-10, 64-75:

31 **Սաղումյան Ս.**, Պատմական մի հուշարձանի կառուցման հարցի շուրջը, «ՊԲՀ», 1986, № 2, էջ 190-204:

32 **Զաքարյան Լ.**, Աղջոց վանքի քանդակները, «Գիտություն և տեխնիկա», 1981, № 9, էջ 26-30: **Նույնի**՝ Աղջոց վանքը և նոր ուղղության զարգացումը հայ քանդակագործության մեջ XIII-XIV դդ., «ՊԲՀ», 1985, № 1, էջ 147-159: Աղջոց Սուրբ Ստեփանոս, Երևան, 2007:

Ճարտարապետություն. բաղկացած է Սբ. Ստեփանոս և Պողոս-Պետրոս եկեղեցիներից, գավթից, ուշ ժամանակաշրջանում կառուցված պարսպապատից, որին կից պահպանվել են բնակելի ու տնտեսական շինությունների մնացորդներ: Ունեցել է սեփական ջրմուղ, ջրաղաց, ձիթհան և հյուրատուն: Վանքից մոտ 100 մ արևմուտք խաչքարերով հարուստ գերեզմանոցն է, իսկ արևելյան և հյուսիսարևելյան կողմերում՝ համանուն գյուղի ավերակները:

Վաղմիջնադարյան եկեղեցիներից պահպանվել են միայն առանձին բեկորներ՝ ագուցված ԺԳ դ. կառուցված շինությունների որմերին: Ուշագրավ է կիսավեր գավթի հյուսիսային պատի (արտաքուստ) որմնախորշի մեջ տեղադրված, Ե-Է դարերին բնորոշ, շրջանագծի մեջ առնված հավասարաթև խաչաքանդակով հին տաճարի բարավորի սրբատաշ քարը:

Սբ. Ստեփանոս եկեղեցի. ինչպես վերևում արդեն նշել ենք, եկեղեցու հարավային ճակատի վերին հատվածում՝ կենտրոնական լուսամուտից ձախ զետեղված շինարարական արձանագրության՝ Ս. Սաղումյանի նորովի հետազոտության շնորհիվ ճշտվել է կառուցման տարեթիվը՝ 1207: Դրա համար հիմք է ծառայել հիշատակված անձանց գործունեության ժամանակը: Նա խնդրո առընչությամբ գրում է. «...քանի որ Աղջոց վանքի Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է Հայաստանի քաղաքական-վարչական և հոգևոր իշխանության բարձրագույն ներկայացուցիչների՝ հայ-վրացական զորահրամանատար Զաքարեի սպարապետության ժամանակ, այսինքն՝ 1213 թ. առաջ, տեր Դավթի հայրապետության շրջանում, այսինքն՝ մինչև 1208 թ., մեզ մնում է ընդունել, որ կառուցողական-շինարարական արձանագրության ՈԿՁ՝ 1217 թվի տասնավորում թույլ է տրվել վրիպում (նման դեպքեր կան վիմագրերում և ձեռագրերում), և այն պետք է սրբագրել միակ հավանական տարբերակով՝ ՈԾՁ՝ 1207: Այսպիսով, Աղջոց Սբ. Ստեփանոս վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել-ավարտվել է 1207 թ.՝ Զաքարե Զաքարյանի սպարապետության (վխճ. 1213 թ.), Դավիթ Գ Արքայակաղնեցու կաթողիկոսության (վխճ. 1208 թ.), Իվանե Զաքարյանի իշխանության, վարդապետաց վարդապետ Աբելի առաջնորդության ժամանակ, այն էլ ոչ թե մեծատոհմիկ մեկենասների (Զաքարյանների ու Խաղբակյանների)[34], այլ հասարակական միջոցներով»[35]:

Եկեղեցին ներքուստ խաչաձև, արտաքուստ՝ ուղղանկյուն, անկյուններում՝ թաղակապ, երկհարկ ավանդատներով, կենտրոնագմբեթ (արտաքին չափ.՝ 9,85 x 8,32 մ) կառույց է: Գմբեթը կրել են անկյուններից ձգվող սլաքաձև կամարներն ու վերջիններիս միջև առաջացող առագաստները: Երկրորդ հարկի ավանդատների հետ կապն իրականացվել է կոնսոլ 8-ական քարե աստիճանների միջոցով: Միակ մուտքն արևմտյան ճակատից է: Կառուցված է կապտավուն սրբատաշ բազալտից: Սրբատաշ են նաև հատակը սալարկող քարերը: Պահպանվել են հուշարձանի պատերը, թմբուկի ստորին շարքը, թմբուկատակ քառանկյան եզրերի պատվանդանները:

33 **Էփրիկեան Հ.**, Բնաշխարհիկ բառարան, I, Վենետիկ, 1903-1905, էջ 113-114: **Ծովական Ն.**, Աղջոց վանք, «Սիոն», 1981, յուլիս-օգոստոս: **Կարապետյան Ս.**, Աղջոց Սուրբ Ստեփանոսի վանքը, «Էջմիածին», 1985, Բ-Գ, էջ 49-52:

34 Գարեգին Հովսեփյանի ենթադրությամբ վանքի բոլոր շինությունները Խաղբակյաններից Գրիգորի ճյուղի ստեղծագործություն են:

35 **Սաղումյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 201:

Հարուստ է եկեղեցու դեկորատիվ հարդարանքը: Որմերը գեղազարդող երկրաչափական, բուսական, ինչպես նաև սյուժետային բարձրաքանդակներն աչքի են ընկնում կատարման մեծագույն վարպետությամբ: Բեմի ճակատին ներքուստ ագուցված են երկշար, միաչափ քառակուսի սալիկներ՝ հարդարված բուսական և երկրաչափական զարդերով լցված ութթևանի աստղաքանդակներով: Ստորին շարքի ձախից երրորդ սալիկի աստղաքանդակը ներփակում է ինքնատիպ՝ աքեմենյան խույր հիշեցնող բարձր գլխարկներով երկու մարդկային գլուխ[36], վերին շարքի ձախից երկրորդ աստղիկի մեջ պատկերված են թռչնաքանդակներ:

Շքամուտքը ներփակված է զույգ կիսասյուների վրա հենված զանգվածեղ կամարով: Բարավորին Ահեղ Դատաստանի պատկերագրությունն է, հարավային պատին՝ արևի ժամացույցն ու «Դանիելը առյուծների գբում» հարթաքանդակը[37], որից ցած պատկերված է մեկական աղավնի: Արևելյան ճակատի երկու որմնախորշերն ավարտվում են ճառագայթաձև կամարապսակներով: Որմնախորշերի միջև բացված լուսամուտը ներփակված է քանդակազարդ ուղղանկյուն շրջանակով: Նույն ճակատի վերնամասի կենտրոնում՝ լուսամուտից վեր, պատկերված է նրբագեղ վարդյակ: Արտաքին հարդարանքի բաղկացուցիչ տարրերն են նաև արևմտյան ճակատին, շքամուտքի և պատուհանի երկու կողմերում ագուցված գեղաքանդակ խաչքարերը:

Պողոս-Պետրոս եկեղեցի. հուշարձանախմբի երկրորդ եկեղեցին է՝ կից Սբ. Ստեփանոսին հյուսիսից: Համածայն բարավորի շինարարական արձանագրության՝ կառուցվել է 1270 թ.՝ Երեմիա վանահայրի առաջնորդության ժամանակ:

Միանավ բազիլիկ կառույց է, որը, բացի ավագ խորանի երկու կողմի կիսաշրջան փոքր խորաններով մեկական ավանդատնից, ուղղանկյուն հատակագծով ևս երկուսն ունի հարավային պատին կից: Շքամուտքը, որն արևմուտքից է, երեք քառորդ սյուների վրա հենված, սլաքաձև որմնակամարով պսակվող հորինվածք է, որը լրացուցիչ ներառված է եղել երկրաչափական քանդակներով հարդարված, հավանաբար ուղղանկյուն շրջանակի մեջ: Վերջինից պահպանվել են միայն վերձիգ՝ ուղղահայաց հատվածները: Շքամուտքի երկու կողմում՝ հիմքից բավականին վեր՝ բարձրությամբ տեղադրված շարվածքի երեքական քարի վրա, բնական մեծությամբ Պողոս և Պետրոս առաքյալների քանդակներն են, որոնք հիացմունք են պատճառում կատարման գերագույն վարպետությամբ: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ վերջիններս նախապատրաստել են հետագա ժամանակաշրջանի, մասնավորապես՝ Սյունիքի քանդակագործության ոճական ուղղությունը: Արևմտյան ճակատի դեկորատիվ հարդարանքն են կազմում նաև սրբատաշ որմերին փորված տարբեր մեծության բազմաթիվ խաչերը:

Եկեղեցու ծածկն ու պատերի կրող հատվածներն ավերված են:

Գավիթ. հուշարձանախմբի վատ պահպանված շինությունը Սբ. Ստեփանոս եկեղեցուն արևմուտքից կից ընդարձակ գավիթն է: Կառուցվել է 1222-1234 թթ.[38]:

36 Մանրամասն տե՛ս **Զաքարյան Լ.**, նշվ. հոդվ., «Գիտություն և տեխնիկա», 1981, № 9, էջ 30: **Նույնի՝** նշվ. հոդվ., «ՊԲՀ», № 1, էջ 151:

37 Արվեստաբան Լիլիթ Զաքարյանի ենթադրությամբ, ի պատիվ 1268 թ. Վարդան Արևելցու՝ Աղջոց վանքում հյուրընկալված ժամանակ ավարտած «Դանիելի մեկնության», նշյալ քանդակապատկերը եկեղեցու հարավային պատին ավելացվել է հետագայում («Գիտություն և տեխնիկա», 1981, № 9, էջ 29):

38 **Յովսեփյան Գ.**, Խաղբակեանք..., Բ, էջ 147:

Մասամբ պահպանվել են միայն շինության հյուսիսային ու հարավային պատերը: Կառուցողական արվեստն ու շինանյութը՝ կապտավուն սրբատաշ բազալտ, նույնն են, ինչ համալիրի երկու եկեղեցիներինը: Խորակերտի, Վարագավանքի, Դեղձնուտի վանքերի գավիթների նման ունի կառույցը ներքուստ ընդգրկող և խաչաձևվող բարձր կամարներով հորինվածք: Հանդիպակաց պատերի հզոր խարիսխներով ու խոյակներով երկու զույգ որմնամույթերից բարձրացող կամարները փոխհատվելով կրել են երդիկը:

Հյուսիսից բացված մուտքից պահպանվել է միայն կամարի արևելյան հատվածը՝ հենված գլանաձև կիսասյուների վրա և ներփակված շղթայաձև խոշոր, ինչպես նաև այլ կարգի մանրաքանդակներով զարդարված ուղղանկյուն շրջանակով: Կամարի և ուղղանկյուն շրջանակի պահպանված հատվածների միջանկյալ տարածքում պատկերված են նաև բազմաթիվ խաչեր և վարդյակ: Ելնելով տեղանքից՝ կարելի է ենթադրել, որ ևս մեկ մուտք եղել է հարավից՝ հյուսիսայինին դեմ հանդիման: Հյուսիսային պատին (արտաքուստ)՝ որմնախորշի մեջ, տեղադրված է Ե-Է դդ. բնորոշ շրջանագծի մեջ առնված հավասարաթև խաչաքանդակով հնագույն տաճարի բարավորի սրբատաշ քարը:

Օժանդակ կառույցներ և գերեզմանոց. համալիրի գլխավոր շինություններից բացի՝ խիստ ավերված են նաև միաբանության բնակելի, տնտեսական շենքերն ու պարսպապատերը: Անմխիթար վիճակում է գտնվում նաև գերեզմանոցը, որտեղ պահպանվել են ԺԱ դ. թվագրվող հնաոճ ու պարզ, զարգացած միջնադարին բնորոշ գեղաքանդակ խաչքարեր՝ բոլորն անխտիր տեղահանված: Առավել բազմաքանակ են պատվանդանները, ո-

ռոնց մեծ մասը ժայռակերտ է: Պահպանված 9 արձանագիր խաչքարերից վաղագույնները կերտվել են 1197 թ.:

Վիմագրեր. Աղջոց Սբ. Ստեփանոսը հարուստ է վիմագրերով: Պահպանված 71 արձանագրության ճնշող մեծամասնությունը ԺԳ դարից է: Առկա են նաև ԺԲ և ԺԳ դդ. վերաբերող մի քանի հակիրճ հիշատակագրություններ: Վիմագրերով առանձնապես հարուստ է համալիրի գլխավոր՝ Սբ. Ստեփանոս եկեղեցին, որի միայն հարավային ճակատին փորագրված է 21, արևմտյան ճակատին՝ 15, ներքուստ՝ 7 արձանագրություն: 3 վիմագիր փորագրված է Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան ճակատին, 7-ը՝ գավթի որմերին և սալահատակին: Թվարկվածից բացի՝ արձանագիր են նաև վանքի շուրջ գտնվող խաչքարերից և տապանաքարերից 9-ը, գերեզմանոցի խաչքարերից՝ ևս 9-ը:

ԳԼԱՆ

40.096944 N, 44.812611 E

Համանուն Մեծ և Փոքր գյուղատեղիները գտնվում են միմյանց կից՝ նույնանուն ձորում՝ Գառնուց 5-7 կմ հարավ-արևելք (Մեծ Գլանը՝ 5, իսկ Փոքր Գլանը՝ 7 կմ):

ԺԹ դարի սկզբից հանդիպում է եկվոր թյուրքական ցեղերից աղավաղված Գիլանլար, Կյուլինար, Մեծ Կյուլյանա, Փոքր Կուլինար անվանաձևերով[1]:

Մազազ գավառի երբեմնի հայահոծ այս բնակավայրերին վերաբերող մատենագրական տեղեկությունները չափազանց սուղ են: Հիշատակվում են միայն ԺԸ դարում Սիմեոն կաթողիկոսի կողմից Աղջոց վանքին պատկանած կալվածքի

շարքում. «Ունի զվիճակս յերկրոջս յԵրևանու, զՃաթղռան, զՄեծ Գլան և զՓոքր Գլան»[2]: Որպես հայաբնակ գյուղեր՝ գոյատևել են մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դարի սկզբին բնակեցվել են թյուրքական խաշնարած ցեղերով: 1829-31 թթ., երբ մտնում էին Հայկական մարզի Երևանի գավառի Գառնիբասարի մահալի կազմում, Մեծ գյուղն ուներ 28 տուն՝ (143 շունչ), իսկ երկրորդը դեռևս ամայի էր[3]: 1873 թ. Մեծ Գլանի մահմեդական բնակիչների թիվը հասնում էր 146-ի (16

1 Կովկասի 1911 թ. հինգվերստանոց քարտեզում նշված է նույնանուն երեք բնակավայր՝ Գիլյանար, Փոքր Գիլյանար և Մեծ Գիլյանար: Ներկայումս երրորդ բնակավայրի հետքերը համարյա աննկատ են:

2 Ջամբռ, էջ 281:

3 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 492, 510, 555-558:

տուն), իսկ Փոքր Գլանինը՝ 96-ի (10 տուն)[4]: 1908 թ. գյուղերը համապատասխանաբար ունեին 212 և 183 բնակիչ[5]: 1950 թ. մահմեդականների՝ Աղրբեջան հեռանալուց հետո կրկին դարձել են հայաշունչ:

Փոքր Գլանում պահպանվել են միանավ եկեղեցու հիմքեր, միջնադարյան գերեզմանոց և ժայռախաչեր, Մեծ Գլանում՝ արձանագիր խաչքարերով ընդարձակ գերեզմանոց, որի տարածքում նկատելի են նաև դամբարաններ:

Ավանիկ տանող ճանապարհին՝ Արջաձոր վայրում՝ բարձրադիր տեղանքում, բարձր պատվանդանին կանգնեցված է եղել իշխան Գրիգոր Խաղբակյանի (տանջամահ է արվել 1222 թ.) հիշատակին կնոջ՝ Զազա իշխանուհու՝ 1233 թ. կառուցած խաչքարը[6]: Այն աչքի է ընկնում քանդակների զարդարվեստի կատարելությամբ: Ենթադրվում է, որ խաչքարագործ վարպետն Աբելն է: Բազմատող արձանագրությունը փորագրված է քիվին, պատվանդանին և թիկունքին[7]:

ԱՎԱՆԻԿ

40.071139 N, 44.834083 E

Գտնվում է Գառնի գյուղից 10 կմ հարավ-արևելք՝ Բայբուրդից Վանստան տանող ճանապարհի միջնամասում՝ Ազատ գետի աջափնյա սարահարթին՝ գեղատեսիլ տեղանքում:

ԺԹ դարասկզբից հանդիպում է օտար Քյորփուքյանդ, Քիփրիգուլագ[1], Քյորփի[2], Քյորփի-կուլախ[3], Քյոփրի-կուլախ[4] անվանաձևերով:

Մազազ գավառի հնագույն բնակավայրերից էր: Չնայած գրավոր աղբյուրներում Ավանիկի մասին տեղեկությունները հայտնի են ԺԵ դ.-ից, տարածքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները, սակայն, ի մասնավորի եկեղեցին, վկայում են, որ այն զուտ հայաբնակ է եղել առնվազն վաղ միջնադարից և գոյատևել մինչև շահաբասյան բռնագաղթը:

Բնակավայրը հիշվում է ԺԵ-ԺԶ դդ. պարսկերեն կալվածագրերում՝ ի թիվս Հավուց թառի Զաքարիա վարդապետի ժառանգական կալվածքներ հիշատակվող մի շարք գյուղերի նկատմամբ Բեյթ-ուլ-մալի[5] կողմից առարկություն չլինելու վերաբերյալ: Օրինակ, 1489 թ. նշվում է. «Երկրորդ գյուղը Ավանիկն է նույն նահիայում Քեղվաբերդ ամրոցի մոտ, որի սահմանները հասնում են մինչև Կոյջախ կոչվող վայրը, այն ձորը, որ հայտնի է որպես Քյուրադարակ[6], Շիկավանքի ձորը և այն գետը, որ հոսում է Վարսագեղի լեռան մոտով մինչև այլ կամուրջը, որ կոչվում է Մանկուս գյուղի կամուրջ»[7]:

4 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 333:

5 ПКЭГ. 1908. Отд. III. С. 4-5.

6 Երկատված խաչքարը փոխադրվել է Սբ. Էջմիածին և ներկայումս կանգնեցված է «Դուռն Տրդատայ» հուշարձանի մոտ:

7 Խաչքարի մասին տե՛ս **Հովսեփյան Գ.**, Անհետ կորչում են, «Հովիտ», 1912, № 43, էջ 679: **Նույնի**՝ Խաղբակյանք..., էջ 64, 81-82: **Կարախանյան Գ.**, Միջնադարյան կենցաղային քանդակներ, «Գիտություն և տեխնիկա», 1975, № 11, էջ 18-19: **Մադումյան Ս.**, Նորահայտ վիմագրեր Խաղբակյան տոհմի մասին, «ԼՀԳ», 1977, № 9, էջ 93-95: **Պետրոսյան Հ.**, Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 154-155: **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Սբ. Էջմիածին, 2016, էջ 99-100, արձ. 86:

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 333:

2 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզ:

3 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 70, 555-558:

4 **Kalantar A.**, The Mediaeval Inscriptions of Vantstan, Armenia, *Civilisations du Proche-Orient: Series 2-Philologie, vol. 2, Recherches et Publications, Neuchâtel, Paris, 1999, p. 61.*

5 Բեյթ-ուլ-մալի մասին տե՛ս **Փափազյան Հ.**, «Բեյթ-ուլ-մալի» ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումը XV դարում, «ՊԲՀ», 1958, № 2:

6 Ազատ գետի վերին հոսանքի շրջանում գտնվող Քոռաղարա ձորն է:

7 Կալվածագրեր Ա, էջ 83:

Այնուհետև հիշատակվում է Զաքարիա և Համազասպ վարդապետների կողմից Հավուց թառի Սբ. Ամենափրկիչ վանքին նվիրած գյուղերի և ագարակների վերաբերյալ 1526 թ. կազմված կալվածագրում[8]: 1577 թ. արձակած հրովարտակում էլ նշվում է ի շարս Զուխուր-Սաադի (Երևանի խանության) մի շարք գյուղերի՝ իրենց պարտավորությունները կալվածատերերի նկատմամբ կատարելու կարգադրության առնչությամբ[9]: ԺԸ դարում Խորվիրապի վանքի կալվածապատկան գյուղերից էր. «Ունի զվիճակս յերկրոջս Երևանու... զԱւանիկ...»[10], որը Սիմեոն Երևանցու այցելության ժամանակ դեռևս ամայի էր[11]:

ԺԹ դարասկզբին հայաթափ գյուղատեղին արդեն բնակեցված էր թյուրքական ցեղերով: 1829-31 թթ. ուներ 129[12], 1873 թ.՝ 143[13], 1908 թ.՝ 219 բնակիչ[14]: 1940-ական թթ. վերջերին ապաբնակեցվել է:

Ավանիկը թեև հիշվում է առնվազն սկսած ԺԵ դարից, սակայն ունի շատ ավելի հին պատմություն: Պահպանված հուշարձանները վկայում են, որ վերջինս գոյություն է ունեցել դեռևս վաղ միջնադարում: Առավել հնագույն և արժեքավոր հուշարձանը Ե դ. թվագրվող եկեղեցին է, որն ուսումնասիրել և մասնագիտական գրականության մեջ ներկայացրել է Մ. Հասրաթյանը[15]: Ի դարի սկզբին հնավայր այցելած Աշխ. Քալանթարը միայն արձանագրել է վերջինիս առկայությունը: Եկեղեցին պատկանում է արտաքուստ շեշտված աբսիդով միանավ սակավաթիվ կառուցվածքների տիպին: Երկաստիճան որմնախարսխի վրա վեր բարձրացող բազիլիկ է (արտաքին չափ.՝ 15,5 x 6,26 մ), որի ձգված համաչափություններով դահլիճ-աղոթասրահն արևելքից ավարտվում է ներքուստ կիսաշրջանաձև, արտաքուստ՝ հնգանիստ աբսիդով: Թաղակիր կամարը կրել են ընդերկայնական պատերին պահպանված մեկ զույգ որմնամույթերը: Միակ մուտքը հյուսիսից է: Կառուցված է գորշ կապտավուն սրբատաշ և կոպտատաշ բազալտից (կոպտատաշ քարերը խոսում են եկեղեցու կրած նորոգումների մասին)՝ կրաշաղախի միացությամբ: Հուշարձանը կիսով չափ ավերված է, պահպանվել է 1,5-2 մ բարձրությամբ: Աբսիդի հյուսիսային հատվածը թաղված է հողի մեջ:

Եկեղեցու շուրջ տարածվել է գերեզմանոց, որը ներկայումս ամբողջովին ավերված է: Պահպանվել են միայն Ժ-ԺԱ դդ. վերաբերող արձանագիր մեկ տապանաքար և վաղմիջնադարյան սյունակոթող (բարձր.՝ 1,80 մ): Վերջինս ութանիստ է, կերտված միակտոր մոխրագույն բազալտից: Համաչափ նիստերից (34 սմ) մեկին նկատելի են փորածո երկու խաչի ստորին թևերը:

Հնավայրի հարավային եզրին տարածվում է ընդարձակ մի այլ գերեզմանոց, որտեղ առկա են մի քանի ամբողջական պարզ խաչքարեր և բեկորներ, բնական քարաբեկորներից գերեզմանաքա-

8 Նշվ. աշխ., էջ 105:
9 Հրովարտակներ Ա, էջ 67:
10 Ջամբռ, էջ 280:
11 Նշվ. աշխ., էջ 278:
12 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 555-558:
13 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 333:
14 ПКЭГ. 1908. Отд. III. С. 4-5.

15 **Հասրաթյան Մ.**, Հայաստանի արտաքուստ շեշտված աբսիդով միանավ հուշարձանները, «ԼՀԳ», 1976, № 11, էջ 32 (հատակագիծ՝ էջ 29): **Նույնի**՝ Раннесредневековые зальные церкви Армении с выступающей наружу апсидой // Научные сообщения Государственного музея искусства народов Востока. Вып. X. Москва, 1978. С. 113; Les églises à nef unique avec abside saillante dans l'Arménie paléochrétienne, *Armenian studies/Études arméniennes: In memoriam Haïg Berbérian, Lisbon, 1986, p. 314.*

ներ, ինչպես նաև կոթողի մեծաչափ խաչքարիսխ (գորշ բազալտ, 90 x 90 x 65 սմ):

Ուշագրավ են նաև գյուղատեղիի հարավային եզրին գտնվող երկու ժայռախաչերը, հյուսիս-արևելքում՝ աղբյուրը, որի համար որպես շինանյութ օգտագործվել են տապանաքարեր և խաչքար, ինչպես նաև՝ կիսավեր մի տան շարվածքում ագուցված խաչքարի արձանագիր բեկորը:

Գյուղի սահմաններում գտնվող հուշարձաններից է Ազատ գետի աջ ափին՝ Բայբուրդ-Վանստան ճանապարհի Ավանիկ թեքվող հատվածում՝ հզոր ժայռազանգվածի արևմտահայաց երեսին 1282 թ. կերտված ժայռախաչը, որը, բարբարոսաբար պայթեցնելով, մեծապես վնասել են գանձախույզները:

Հնավայրի տարածքում պահպանված 3 վիմագրերը վերաբերում են Ժ-ԺԳ դարերին:

ՎԱՆՍՏԱՆ

40.075694 N, 44.848722 E

Գտնվում է Գառնի գյուղից 11 կմ հարավ-արևելք՝ Ազատ գետի աջ ափին՝ բարձրադիր, գեղատեսիլ վայրում:

Եղել է Մազազ գավառի ծաղկուն գյուղերից, բարգավաճել մինչև 1604 թ.: Հիշվում է ԺԵ դարի (1460[1]), ինչպես նաև 1560[2], 1608[3] և 1627[4] թթ. հիշատակարաններում: Բռնագաղթի օրերին բուն վանստանցիները և հարակից գյուղերի բնակիչներն ապաստանել են մոտակա դժվարամատչելի անձավներում, սակայն դա էլ չի փրկել նրանց կոտորածից. «...ի յամուր լերինք Գառնոյ և Այրիվանաց և Վանստանայ բազում ժողովուրդ զաւղեալ և թաքուցեալ էին, մինչ դեռ ի միում բարձրաբնակ այրի ամրացեալ

1 ԺԳ, էջ 435:
2 **Հովսեփյան Գ.**, Խաղբակյանք..., I, էջ 249:
3 ՄԺԱ, էջ 184: Նաև՝ ԺԷԱ, էջ 287:
4 ԺԷԲ, էջ 257:



յապահով և անհոգ նստէր մասն ինչ ի ժողովրդենէն, յանկարծ տեսին, որ անօրէն զօրքն Պարսից սուսերամերկ ի մէջ նոցա թափեցան և սկսան զպարսկական սուրն ի գործ ածել...»[5]: Բազմաթիվ գյուղերի նման Վանստանի բնակչությունը ևս գերեվարվել ու բռնագաղթվել է Պարսկաստանի խորքերը, սակայն Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի հիմնամասում 1689 թ. ոմն Ամիրասաթի թողած կարճառոտ արձանագրությունը (*«Ամիրասաթ, թվ(ին) ՌՃԼԸ»*)[6] խոսում է այն մասին, որ բռնագաղթի հետևանքով գյուղը, այնուամենայնիվ, ամբողջովին չի դատարկվել: ԺԸ դարում Վանստանը Խորվիրապի վանքին պատկանող գյուղերից մեկն էր[7], իսկ ավելի ուշ՝ 1829-31 թթ.,

5 ՄԺԱ, էջ 184:

6 **Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 63, արձ. 68:

7 Ջամբռ, էջ 280:

արդեն հիշատակվում է Հայկական մարզի Երևանի գավառի Գառնիբասարի մահալի ավերակ գյուղերի շարքում օտարահունչ՝ Մյուրզյուկ ձևով[8]: 1873 թ. Իմիրզիկ անունը ստացած Վանստանը մահմեդաբնակ էր և ուներ 188[9], 1908 թ.՝ 254 խաշնարած թուրք բնակիչ[10]: Միրզիկ տարբերակով գրանցված է նաև 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Լքվել է 1949-52 թթ.՝ բնակիչների՝ Ադրբեջան տեղափոխվելու հետևանքով:

Գյուղի պատմական անունը՝ Վանըստան, առաջին անգամ հիշատակված ենք գտնում Սբ. Աստվածածին եկեղեցու 1283 թ. վիմագիր արձանագրությունում[11]:

Եկեղեցին՝ գյուղի առավել արժեքավոր հուշարձանը, ուսումնասիրել է դեռևս 1907 թ. Քեղվա ձոր այցելած Ռուսաստանի կայսերական հնագիտական արշավախումբը, որի հրատարակած նյութերում տրված են վերջինիս նկարագրությունը, հատակագիծը, որոշ արձանագրություններ[12]: 1912 թ. հնավայրում պեղումներ է կատարել Աշխ. Քալանթարը, որն ընդօրինակել է եկեղեցու բազմաթիվ վիմագրեր: 1940-ական թթ. ուսումնասիրություններ է կատարել Հ. Եղիազարյանի գլխավորած արշավախումբը (նյութերը հրատարակված չեն և պահվում են Հայաստանի ազգային դիվանում): Գյուղին և Սբ. Աստվածածին եկեղեցուն մանրամասն անդրադարձել է նաև Պ. Տոնապետյանը, որի հոդված-ուսումնասիրության բուն թեման եկեղեցու հիմնադրին պատկերող ինքնատիպ բարձրաքանդակն է[13]:

Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղատեղիի հարավարևելյան անկյունում՝ ձորաբերանի ապառաժոտ հատվածում: Տեղանքի այդօրինակ ընտրությունը հավանաբար կապված է եղել շինության սեյսմիկ կայունությունն ապահովելու հետ: Կառուցվել է ԺԳ դ. սկզբներին՝ Իվանե Զաքարյանի աթաբեկության օրոք (1212-1227 թթ.) Արարատյան թեմի առաջնորդ տեր Դավթի կողմից. (*«Տեր աստուած Յիսուս Քրիստոս: [Ես՝ տեր Դաւիթ՝ որդի Գ]րիգորոս, թոռն Հա[սամատինի, շինեցի զ]եկեղեցիս...»*)[14]: 1283 թ. սալարկվել է (*«Յիշխանութեան տանս Հայոց եւ Վրաց աթապա/[կ եւ ամիրսպաս]ալար Սադունին, շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Գրիգոր վ(ար)դ(ապետ)՝ առ/[աջնորդ] Վիրապին եւ սուրբ ուխտիս Վանըստանայ, սալեցի զ/[եկեղեցիս], որ բնէ չէր սալած...»*)[15]: Մեծապես տուժել է 1679 թ. կործանիչ երկրաշարժից, սակայն, ինչպես նկատել են Հ. Մելքոնյանն ու Գ. Սարգսյանը, թմբուկի նիստավոր քիվի քարերից մեկի հակառակ երեսին 1597 թ. կերտված խաչքարը վկայում է, որ արդեն վերոհիշյալ թվականին Վանստանի Սբ. Աստվածածինն ավերված էր[16]: Եկեղեցին, որի արևելյան կողմում կառուցված է զանգվածեղ ժայռի վրա խարըսխված բարձր հենապատ, երկաստիճան որմնախարսխի վրա վեր խոյացող, գմբեթավոր սրահի «սեղմված» տիպին պատկանող, սրբատաշ բազալտից շինություն է (արտաքին չափ.՝ 12 x 8,75 մ): Միակ մուտքը եղել է արևմուտքից: Աբսիդին կից ավանդատներից հարավայինի միջոցով կատարվել է հաղորդակցումը խո-

8 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 510:
9 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 333:
10 ПКЭГ. 1908. Отд. III. С. 4-5.
11 **Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 19-21, արձ. 10:
12 МАК. Вып. XIII. С. 67-70.
13 **Դոնաբեդյան Պ.**, Վանստան գյուղի եկեղեցու բարձրաքանդակի մասին, «ՊԲՀ», 1979, № 1, էջ 154-165:

14 **Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 11, արձ. 1: Ի դեպ, տեր Դավիթը կառուցել է նաև Խորվիրապի եկեղեցին ու պարիսպները (**Kalantar A.**, նշվ. աշխ., արձ. 2, էջ 13):
15 Նշվ. աշխ., էջ 21, արձ. 10:
16 Նշվ. աշխ., էջ 65, ծնթ. 37:

րանի տակ առկա գետնափոր սենյակի հետ: Հարուստ է եղել վիմագրերով և բարձրարվեստ զարդաքանդակներով ու պատկերաքանդակներով: Բացի արևմտյանից՝ մյուս երեք ճակատներն ունեցել են ճառագայթարձակ զարդերով պսակվող 2-ական եռանկյունաձև խորշ: Բեմի ճակատն ու շքամուտքը հարդարված են եղել ութթևանի նրբագեղ աստղիկներով (բեկորներն ընկած են եկեղեցու շրջակայքում): Հետաքրքիր է տղամարդու երկու ֆիգուր պատկերող բարձրաքանդակը, որը ոչնչացումից փրկելու նպատակով տեղափոխվել է Էջմիածին: Այն, ինչպես ենթադրում է Պ. Տոնապետյանը, պատկերում է եկեղեցու հիմնադիր տեր Դավթին, որը «բարեխոսության խնդրանքով աղոթում է իր նախնիներից մեկին»[17]: Եկեղեցու շրջակայքում և գյուղատեղիի տարածքում սփռված են ճարտարապետական առանձին բեկորներ և խաչքարեր:

Հնավայրից մոտ 1,5 կմ հյուսիս-արևելք գտնվում է չափազանց ծածուկ դիրք ունեցող ժայռափոր մի կացարան, որը գառնեցիներն անվանում են Իմիրզիկի խուց: Հավանաբար վերջինս եղել է տարածքի բազմաթիվ այն թաքստոցներից, ուր հարկ եղած դեպքում պատսպարվել է շրջակա բնակչությունը:

Գյուղատեղիից ոչ հեռու պահպանվել են նաև համաշխարհային մշակույթի մեջ ուրույն տեղ զբաղեցնող, մ.թ.ա. Բ-Ա հազարամյակների վաղեմության պաշտամունքային հսկա վիշապ կոթողներ:

Վանստանի 76 վիմագրերից 67-ը վերծանել է 1912 թ. Աշխ. Քալանթարը: Դրանք լրացրել ու ամբողջականացրել են Հ. Մելքոնյանն ու Գ. Սարգսյանը[18]:

ԺԱՅՌԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԿՈԹՈՒՐ ՎՏԱԿԻ ԿԻՐՃՈՒՄ

40.085106 N, 44.869091 E

Գտնվում է Գառնուց 13 կմ հարավ-արևելք՝ Գեղի բերդի և Վանստան գյուղատեղիի միջանկյալ տարածքում՝ Ազատ գետի աջակողմյան վտակ Կոթուրի անդընդախոր կիրճի աջափնյա ուղղահայաց ժայռազանգվածների ստորոտում:

Ամբողջությամբ վիմափոր, արևելքից կիսաշրջանաձև խորանով միանավ թաղածածկ կերտվածք է (չափ.՝ 3,45 x 2,05 մ), որի մուտքն ու լուսամուտը բացված են հարավից: Հյուսիսային կողմում փոր-

17 **Դոնաբեդյան Պ.**, նշվ. հոդվ., էջ 164:

18 **Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 9-71:

ված է նաև փոքր ավանդատուն (1,70 x 1,10 մ): Միակ հարդարանքը մուտքն ու բարավորը ներփակող կիսագլանաձև եզրաքանդակներն են: Վիմագրեր չկան: Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ կարելի է թվագրել ԺԲ-ԺԳ դդ.:



ԲԵՐԴԱՏԱԿ

40.070250 N, 44.861194 E

Գտնվում է Գառնի գյուղից 12,5 կմ հարավ-արևելք՝ Ազատ գետի վերին հոսանքի ծառաշատ հովտում՝ Գեղի (Քեղի) անառիկ բերդի տակ:

Եղել է Մազազ գավառի գյուղերից: Մատենագրական տեղեկություններ հայտնի չեն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գյուղը գտնվում է անմիջապես Քեղվաբերդի տակ, հաշվի առնելով բերդի և Հավուց թառի Զաքարիա, Համազասպ վարդապետների՝ Սբ. Ամենափրկիչ վանքին նվիրաբերած որոշ գյուղերի և ագարակների վերաբերյալ 1526 թ. կազմված պարսկերեն կալվածագրում Գառնու նահիեի տարածքում հիշվող Քեղվարդ ագարակի[1] անվանումների նմանությունը, չենք բացառում, որ Բերդատակը կարող է համապատասխանել վերոհիշյալ Քեղվարդ ագարակին, որը ԺԸ դարում Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որպես ամայի գյուղ, հիշատակում է Քաղբերթ ձևով[2]: Գավառի այլ գյուղերի նման Բերդատակը ևս հայաթափ է եղել ԺԷ դարի սկզբին: 1829-31 թթ. օտարաշունչ Իմամ-վերդի-քալասի անվանաձևով նշվում է Հայկական մարզի Երևանի գավառի Գառնիբասարի մահալի ավերակ գյուղերի շարքում[3]: 1873 թ. կրկին օտար, այս անգամ Գալե տիպի անունը ստացած և խաշնարած թուրքերով (18

1 Կալվածագրեր Ա, էջ 105:

2 Զամբռ, էջ 277-278:

3 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 511:

տուն՝ 155 շունչ)[4] բնակեցված գյուղի անվանման մասին Ղևոնդ Ալիշանը գրում է. «...առաջին շէն կամ գեօղ՝ ի գլուխ ձորոյն առ Տէվէկէօզ» վտակաւ կոչէ Գալէ տիպի, որ թարգմանի Բերդատակ, և թերեւս այսպէս կոչէր՝ ի Հայոց...»[5]: Կալաղիբի տարբերակով հիշատակում է նաև Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերության արշավախումբը[6], իսկ որպես թուրքաբնակ փոքր գյուղ՝ Բերդատակ (Ղալաղիպի) ձևով՝ Գ. Հովսեփյանը[7]: Ապաբնակեցվել է 1950-ական թթ.:

ԳԵՂԻ ԲԵՐԴ

40.077111 N, 44.874611E

Միջնադարյան հռչակավոր այս բերդը գտնվում է Գառնուց 13,5 կմ հարավ-արևելք՝ Գեղամա բարձրավանդակի տարածքում՝ Ազատ գետի վերին ավազանում՝ անմատչելի Գեղի լեռան գագաթին:

Բերդի անունով ժամանակին կոչվել է Ազատ գետի վերին հոսանքի շրջանը, երբեմն՝ նույնիսկ ողջ Մազազ գավառը: Հայտնի է նաև Գեղաբերդ, Գեղայո, Քեղայի, Քեղյա ամրոց, Գեղայո բերդ, Գեղե, Քեղե, Քեղի, Քեղվաբերդ, ժողովրդական արտասանությամբ՝ Կաքավաբերդ, օտարալեզու՝ Իման-վերդի անվանաձևերով:

Եղել է Բագրատունիների տոհմական տիրույթը, որը ԺԱ դարում անցել է Պահլավունիներին, ԺԲ-ԺԳ դդ.՝ Պռոշյաններին: Առաջին անգամ հիշատակում է Հովհ. կաթողիկոս Դրասխանակերտցին Ժ դարում, նաև պատմական կարևորագույն տեղեկություններ, որի համաձայն՝ 925 թ., Սևանի ճակատամարտում պարտություն կրելով, արաբ Նասր ոստիկանի փոխանորդ Բեշիրն ուղիղ գծով շարժվում է դեպի «յամրոցն Գեղայոյ», ուր ամրացել էր Գևորգ Մարզպետունին, սակայն այստեղ ևս կրելով խայտառակ պարտություն՝ դիմում է փախուստի. «Վասնզի Գէորգն այն... և այլ ևս արս սակաւս ընդ ինքեանս առեալ՝ արտաքս առ թշնամիսն յամրոցէն ելանէր: Եւ ապա միամարտեալ ընդ սպայակոյտ զօրուն՝ նախ կարթակոտոր զերիվար Բըշրայն առնէր նրանաւ սրոյն, մինչ զի հազիւ յայլ ձի աշտանակեալ փախչէր. և ապա այլոցն ևս մարտակցացն աջակցեալ Գէորգայ՝ տապաստ արկանէին զյոլովս ՝ի թշնամեացն և ՝ի փախուստ զնոսա դարձուցանէին...»[1]: Որոշ ժամանակ անց, երբ Նասր ոստիկանը վերադառնում է Հայաստան, «...բնակիչք ամրոցին Քեղեայ իբրև լուան զգալուստ ոստիկանին, և՛ ի մտի եղին զյոյժ մռմռումն սպառնութեան առ ի նմանէն նոցա, զահի հարեալք և ահիւ ըմբռնեալք և կարծիս ՝ի մտի եղեալ անհաստատ խորհրդով, թէ գուցէ մատնեսցի ամրոցն ՝ի ձեռս ոստիկանին և այնպէս անհնարին տանջանայ և մահու մատնեսցին: Եւ ապա այսպիսի անզգուշալի երկիւղի զանձինս տուեալ՝ ամենևին բնաւին իսկ ունայնացուցեալ լքին ՝ի բաց զամրոցն ՝ի բնակչաց անտի»[2]: Տեղեկանալով, որ ամրոցը լքվել է, Նասր ոստիկանը, առանց որևէ ջանքի, տեր է դառնում արդեն դատարկ ամրոցին, շրջակայքի գյուղերին, ավաններին և ագարակներին: Հաջորդ տեղեկությունը ստանում ենք Առաքել գրչի՝ մեզ անհայտ տեղաղրությամբ Հռոմայր վանքում ԺԲ դարում ընդօրինակած Տոնապատճառի հիշատակարանից. «...ի վանքս Հռոմայրո, որ է յաշխարհիս Այրա-

4 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 333:

5 Նշվ. աշխ., էջ 360:

6 MAK. Вып. XIII. С. 66. Ի դեպ, նույն անվանաձևով է նշված նաև 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում:

7 **Հովսեփյան Գ.**, Խաղբակյանք ..., I, էջ 67:

1 **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 356:

2 Նշվ. աշխ., էջ 360:



ռատյան, ի գաւառիս Դվին քաղաքի, մերձ առ դղեկին Քեղայոյ, որ վերահայի ի գետն Ազատ, և ետ գրել զսա յիշատակ իւրն...»[3]: Հետագայում հիշատակում են նաև Մխիթար Այրիվանեցին[4] և Ստեփանոս Օրբելյանը: Վերջինս, պատմելով 1225 թ. Գառնու մոտ Խորեզմի շահ Ջալալ-ադ-Դինի զորքերի կողմից Իվանե Աթաբեկի կրած պարտության և Գեղի բերդում պատսպարվելու մասին, հաղորդում է. «...փախեան և իբր խելացնորեալք, առանց սրոյ և զօրութեան նա և պատերազմի վիթեալք ընդ փրթուածս մեծ քարին, որ ի խրամին Գառնւոյ, ան հասարակ հոսեալ կործանեցան, և Աթաբէկն Իվանէ 10 արամբք զերծեալ անկանի ի յամուրըն Գեղէ ... և էր այս ի 674 (1225) թուականին»[5]: ԺԳ դ. երկրորդ կեսին հիշատակվում է բերդից 3 կմ արևմուտք գտնվող Վանստանի Սբ. Աստվածածին եկեղեցու վիմագրերից մեկում *(«...[սպ]ասալար ...ակութ... /...նին մեք Քեղոյ բէրդիս ... / միաբանեցաք Վանքստանայ սուրբ Ա(ստուա)ծած[նիս] ...»)*[6], իսկ երկու դար անց՝ 1489 թ. կազմված պարսկերեն կալվածագրում[7]:

Հուշարձանն այցելել, ուսումնասիրել և նկարագրել է Գ. Հովսեփյանը և առաջինը կռահել, որ այն հռչակավոր Գեղի բերդն է[8]: Ավելի վաղ Գեղաձոր այցելած Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերության արշավախումբը եղել է նաև այս ամրոցում, սակայն հրատարակած նյութերում վերջինս արձանագրվել է միայն օտար՝ Իմամ-վերդի ձևով[9]: Հուշարձանի տեղադրությանն են անդրադարձել Ղ. Ալիշանը, Մ. Սմբատյանը, Ե. Լալայանը, Հ. Մանանդյանը: Նշյալ բազ-

3 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., կազմ.՝ **Մաթևոսյան Ա.**, Երևան, 1988, էջ 312:
4 **Մխիթար Այրիվանեցի**, էջ 57:
5 **Ստեփանոսի Օրբէլեան**, էջ 399:
6 **Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 23, արձ. 11:
7 Կալվածագրեր Ա, էջ 83-84:
8 **Հովսեփյան Գ.**, Խաղբակյանք..., Ա, էջ 65-67:
9 МАК. Вып. XIII. С. 66.

մավաստակ հեղինակներից Ալիշանը տեղադրել է այն «Քեղայոյ ձորում»[10], Մ. Սմբատյանն ու Ե. Լալայանը նույնացրել են Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքից հարավ-արևմուտք՝ Արմաղան (Աղմաղան) լեռների ստորոտում գտնվող Ղարաղալա (Կարակալա) բերդի հետ[11], Հ. Մանանդյանը, խիստ կասկածելով, առավել հավանական է համարել Գեղաձորում տեղադրելը[12]: Պատմական Մազազ գավառի հռչակավոր Գեղին Սյունյաց աշխարհի Բաղք գավառի նույնանուն բերդի հետ է շփոթել Մ. Հովհաննիսյանը[13]: Հուշարձանն ուսումնասիրել և մի շարք հոդվածներով հանդես է եկել Ռ. Մաթևոսյանը[14]:

Գեղի բերդը Հայաստանի տարածքի միջնադարյան ամրոցներից առավել լավ պահպանվածներից է: Տվյալ հանգամանքին նպաստել է խիստ դժվարամատչելի, ճանապարհներից հեռու և բոլորովին անկատ վայրում կառուցված լինելը: Ռ. Մաթևոսյանը նշում է, որ «...բերդը եղել է կայան տիպի ամրոց, օգտագործվել է որպես ժամանակավոր ապաստանավայր: Այն եղել է Գեղաձորի ռազմաստրատեգիական հենակետը, ինչպես նաև՝ շրջակա գավառների իշխանների»[15]:

Բերդը, որը գտնվում է Ազատ գետի աջ ափին՝ ծ. մ. 2000 մ առավել բարձր զանգվածեղ ժայռի գագաթին, լավագույնս հարմարեցված է լեռնային բարդ տեղանքին և երեք կողմից պաշտպանված անմատչելի քարաձևերով: Հյուսիսային՝ համեմատաբար միակ խոցելի հատվածում կառուցված է որոշակի հեռավորության վրա իրար հաջորդող պաշտպանական աշտարակներով ամրացված հզոր պարսպապատ, որի շարվածքն իրականացված է մեծ վարպետությամբ, գորշ ու կարմրավուն երանգ ունեցող կոպտատաշ քարերի կանոնավոր շարքերով, կրաշաղախի միացությամբ: Որոշ հատվածներում նկատելի են նորոգումների հետքեր: Դեպի ներս լայնացող, 2-3 մ բացվածքով բավականին բարձր կամարակապ մուտքը գտնվում է մինչև 2,60 մ հաստություն ունեցող և 8-10 մ բարձրությամբ պահպանված պարսպապատի արևմտյան կողմում: Աշտարակները յոթն են: Երկուսը պահպանվել են մոտ 20 մ բարձրությամբ: Որոշ աշտարակներ ունեն փոքր սենյակներ, երեքը՝ հրակնատներ: Բերդի կենտրոնական մասում՝ փոքր բարձրության վրա, պահպանվել են ավերված միջնաբերդի մնացորդները, մուտքից ոչ հեռու՝ ժայռափոր փոքր մատուռ, տարբեր հատվածներում՝ բազմաթիվ կառույցների հիմնամասեր ու հետքեր, ինչպես նաև՝ կրաշաղախի միացու-

10 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 359:

11 **Սմբատյանց Մ.**, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 292: Տե՛ս **Լալայեան Ե.**, Նոր Բայազէտի գաւառ, «Ազգագրական հանդես», գիրք XX, № 2, Թիֆլիս, 1910, էջ 54-55:

12 **Մանանդյան Հ.**, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի, Երկեր, Ե, Երևան, 1984, էջ 200-202:

13 **Յովհաննէսեան Մ.**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 372-375: **Նույնի**՝ Գեղի կամ Քեղայոյ բերդ, «Բազմավեպ», 1969, № 11-12, էջ 302-304:

14 **Մաթևոսյան Ռ.**, Լեռնային տեղանքը և միջնադարյան բերդաշինությունը Հայաստանում, «Հայաստանի բնություն». նյութերի ժողովածու, 1978, պր. 2 (44), էջ 24-25: **Նույնի**՝ Գեղաձորի միջնադարյան ամրոցը, «Գիտություն և տեխնիկա», 1990, № 10, էջ 44-49: Այստեղ Գևորգ Մարզպետունին հաղթել է Թեշիրին, «Միտք», 1990, № 2 (15 նոյեմբերի): Հարկ ենք համարում նշել նաև, որ գեղարվեստական գրականության մեջ Գեղի բերդը հիշատակված է Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում, իսկ հանրամատչելի գրականության մեջ՝ նկարագրված աստղաֆիզիկոս, ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի «Կաքավաբերդի առեղծվածը» վերնագիրը կրող էսսեներում:

15 **Մաթևոսյան Ռ.**, Գեղաձորի միջնադարյան ամրոցը, էջ 48:

թյամբ ամուր քարերով երեք հոր: Բերդասարի ողջ մակերեսով սփռված են խեցեղենի բեկորներ, որոնց մեջ հանդիպում են նաև ջնարակված և գեղազարդված նմուշներ: Մատույցներում գտնվում են մի քանի հարյուրի հասնող բնական և կիսաարհեստական անմատչելի ժայռախոռոչներ, որոնք ևս ունեցել են պաշտպանական նշանակություն և հարկ եղած դեպքում պատսպարել բնակչությանը:

ԺԱՅՌԱՓՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲ ԽՈՒՇ

40.060061 N, 44.876777 E

Գտնվում է Գառնի գյուղից 15 կմ հարավ-արևելք՝ Յախշխան այրից Ազատ գետի հոսանքով վար՝ գետի աջափնյա սարալանջին վեր խոյացող միայնակ ժայռազանգվածի խոռոչում:

Պատմական տեղեկություններ հայտնի չեն: Գառնեցիների կողմից անվանվում է Խուց: Երկհարկ է, բաղկացած է եկեղեցուց, երկու մատուռից և տապանատնից: Վիմափոր եկեղեցին (ներքին չափ.՝ 6,00 x 3,10 մ, բարձր.՝ 4,60 մ) ստորին հարկաբաժնում արևելքից կիսաշրջանաձև խորանով միանավ թաղածածկ հորինվածք ունի: Մուտքն ու լուսամուտը բացված են արևմուտքից: Խորանը, որի կենտրոնում պահպանվել է վեմքարի ամրացման ուղղանկյուն փորվածքը, սրահից զատված է 90 սմ բարձ-

ռությամբ: Պատերի (հյուսիսային, հարավային, արևելյան) վերին հատվածներում, թաղի կորության սկզբնամասով ձգվում է պարզ կտրվածքով քիվագոտի:

Մատուռները փորված են ժայռազանգվածի երկրորդ հարկում մի գծի վրա: Մուտքերը բացված են հարավից կից ընդհանուր նեղ միջանցքից, որը գետնից մոտ 3 մ բարձրության վրա գտնվելու հետևանքով առաջացնում է պատշգամբի տպավորություն: Վերոհիշյալներից արևելյանն անկանոն հատակագծով, ուղղանկյուն խորանով թաղածածկ հորինվածք է (չափ.՝ 3,00 x 2,30 մ), արևմտյանը՝ կիսաշրջան խորանով, քարաշեն թաղով (ավերված է) կիսաժայռափոր կերտվածք: Բացի հարավից՝ վերջինս ունի ևս մեկ մուտք՝ հյուսիսից: Արտաքին զուսպ հարդարանքում ուշագրավ են հարավային մուտքի եզրերի վալիկաձև կերտվածքներն ու բարավորի խաչաքանդակը:

Երկրորդ հարկաբաժնում է գտնվում նաև տապանատունը, որի պատերին քանդակված են կարմիր ներկած բազմաթիվ խաչեր:

Ժայռազանգվածի շուրջ, բացատի ողջ տարածքում պահպանվել են բազմաթիվ տնատեղերի մնացորդներ: Նկատելի են նաև միջնադարյան գերեզմանոցի հետքեր:

Ինչպես ժայռափոր կերտվածքներում, այնպես էլ բացատում տարածվող գյուղատեղիում վիմագրեր չեն հայտնաբերվել:

ՅԱԽՇԽԱՆ ԱՅՐ

40.060972 N, 44.892972 E

Գտնվում է Գառնի գյուղից 14,5 կմ հարավ-արևելք՝ Գեղի բերդից 2 կմ հարավ՝ Ազատ գետի վերին ավազանի շրջանում՝ Քյուրադարակ ձորի աջափնյա ուղղահայաց՝ խիստ դժվարամատչելի հզոր ժայռազանգվածներից մեկում՝ գետափից մոտ 50 մ բարձրության վրա:

Յախշխան պարսկերենից թարգմանաբար նշանակում է Սառցե իշխան:

Ձորը Քյուրադարակ ձևով հրատարակված է 1489 թ. կազմված պարսկերեն մի կալվածագրում[1], Քոռադարա ձևով

1 Կալվածագրեր Ա, էջ 83:

(տեղանքի Քոռադարա անվանումը պահպանվել է մինչ օրս)՝ Առ. Դավրիժեցու մոտ[2]: Նկարագրելով Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթի արհավիրքը՝ պատմիչը վկայում է, որ վերոհիշյալ ձորում գտնվող ամրոցներում և բազմաթիվ անձավներում, այդ թվում նշանավոր Յախշխան այրում ապաստանել է շրջակայքի մոտ 1000 բնակիչ. «...դիմեցին ի վերայ անուանի այրին՝ որում Եախշշխան այր ասէին, զի վասն ամրութեան նորին բազումք էին անդ ժողովեալք արք եւ կանայք քրիստոնեայք, անձինք իբրեւ հազարք: Եւ զճանապարհս այրին զգուշութեամբ պահէին քրիստոնեայքն»[3]:

Յախշխանը Քյուրադարակ ձորի և շրջակայքի ամենամեծ բնական ժայռախոռոչն է, որը հարմարեցվել և օգտագործվել է որպես ժամանակավոր բնակավայր-թաքստոց: Երկարատև պաշտպանվելու համար կարևորագույն նշանակություն է ունեցել անձավում բխող աղբյուրների առկայությունը: Խիստ ընդարձակ այրում պահպանվել են վիմափոր եկեղեցի, քարաշեն բազմաթիվ կառույցների մնացորդներ, ստորգետնյա անցուղիներ, ժայռակերտ աստիճաններ, մուտքի երկու կողմում՝ դիտակետեր: Անձավի արևելյան հատվածում է գտնվում այրի ամենաուշագրավ՝ խաչաձև գմբեթավոր, քառախորան եկեղեցին, որը մինչ օրս հայտնի նույնատիպ միակ վիմափոր հուշարձանն է: Հորինվածքային, ոճական և կառուցողական առանձնահատկություններով թվագրվում է Է դ.: Ելնելով տեղանքից՝ կարելի է ենթադրել, որ միակ մուտքը, որը չի պահպանվել, եղել է արևմտյան խորանի հյուսիսային կողմից: Ունի 8,60 x 6,85 մ ներքին չափեր, հատակից մինչև գագաթը՝ 9,40 մ բարձրություն: Գմբեթատակ քառակուսուց

2 **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 50:

3 Նույն տեղում:



անցումը գմբեթարդին իրականացված է տրոմպների միջոցով: Սրահն արևելյան՝ ավագ խորանի հետ հաղորդակցվում է ժայռակերտ աստիճաններով: Հարավ-արևմտյան կողմում առկա է հարավ-արևելք–հյուսիս-արևմուտք առանցքով 3,25 x 1,40 մ չափերի ուղղանկյուն ավանդատուն: Արևմտյան՝ քարաշեն հատվածն ամբողջովին ավերված է: Ժայռերին կից պահպանված որմի մնացորդները շարված են սրբատաշ քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Արևմուտքից ունեցել է նաև բավականին բարձր հենապատ: Զուրկ է դեկորատիվ հարդարանքից: Վիմագրեր չեն հայտնաբերվել:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԺԱՅՌԱՓՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲ ԴԱՐԲԱՆՏ ԳԵՏԻ ՁՈՐՈՒՄ

40.046984 N, 44.879707 E

Գտնվում է Գառնի գյուղից 17 կմ հարավ-արևելք՝ Ազատ գետի ձախ վտակ Դարբանտի աջափնյա բարձր լեռների ստորոտում:

Բնական ընդարձակ ժայռախոռոչում պահպանվել են եկեղեցի, մատուռ և կացարաններ: Եկեղեցին արևելքում կիսաշրջան խորանով միանավ կերտվածք է (ներքին չափ.՝ 6,00 x 3,50 մ), որի միակ մուտքը ծայր հյուսիս-արևմուտքից է: Պահպանվել է ժայռափոր հատվածը: Հարավային և արևելյան կողմերի քարաշեն մասերն ավերված են: Միանավ հորինվածք ունի նաև արևելքում ուղղանկյուն (անկյուններում՝ քիչ կորավուն) խորանով փոքրիկ մատուռը (ներքին չափ.՝ 2,80 x 2,30 մ): Վերջինիս մուտքն արևմուտքից է: Պատերին փորված են պարզ խաչեր: Քարաշեն վերնամասն ավերված է: Բազմաթիվ են ժայռախոռոչում գտնվող մեծ ու փոքր պարզ կացա-

րանները, որոնցից մի քանիսը կրկնահարկ և եռահարկ են: Անձավում բխող աղբյուրի առկայությունը ենթադրել է տալիս, որ դրանք հոգևորական-մենակյացների համար ծառայել են որպես բնակավայր: Վիմագրեր չեն հայտնաբերվել: Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ հուշարձանախումբը կարելի է թվագրել ԺԲ-ԺԳ դդ.:

Մերձակայքում՝ Դարբանտ գետի նույն՝ աջափնյա ժայռազանգվածներում, առկա են բազմաթիվ այլ կացարաններ:

ԳԵԼ (ԳԵՂ)

40.060306 N, 44.817389 E

Գտնվում է Գառնուց 9,5 կմ հարավարևելք՝ Քեղվա ձորում՝ Ազատ գետի ձախափնյա բարձրադիր սարահարթին:

Ալիշանը Գել՝ Գեղ տեղանունները կապում է Հայկ Նահապետի որդու՝ Գեղամի անվան հետ. «Գել կամ Գեղ գեօղ, որոյ ծագումն թուի ի Գեղամայ, որպէս և այլոց համանուն գեօղից ի Գեղարքունի և ի Գեղայոց ձոր»[1]:

Վկայվել է նաև Գյոլ, Գեղ Ասորի, Գել Ասորի անվանաձևերով: 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում նշված է Գել տարբերակով: Մինչև գյուղի ապաբնակեցումը կրել է Գյոլասոր անունը:

Գյուղի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ թեև հայտնի չեն, սակայն, անկասկած, վերջինս ևս Մազազ գավառի հնագույն բնակավայրերից էր: Հայաթափվել է շահաբասյան բռնագաղթի հետևանքով: ԺԹ դարի սկզբներից վերստին բնակեցվել է: 1829-31 թթ. մտնում էր Հայկական մարզի Երևանի գավառի Գառնիբասարի մահալի կազմի մեջ և ուներ 62 մահմեդական[2], 1873 թ.՝ 155 ասորի[3], 1908 թ.՝ 574 հայ, ասորի և խաշնարած թուրք բնակիչ[4]:

Ըստ 1908 թ. մի տեղեկության՝ Գեղն ունեցել է ուղղափառ դավանանքի վրացական թեմին ենթակա Սբ. Գևորգ անվամբ եկեղեցի (քահ.՝ Նիկոլայ Իլյին)[5]:

Գյուղատեղիում պահպանվել են հիմնավեր եկեղեցու մնացորդներ, գեղաքանդակ խաչքարերով հարուստ 3 գերեզմանոց (կենտրոնում, հարավարևմտյան և հարավարևելյան եզրերին): Որոշ խաչքարեր, սակայն, ասորի բնակիչների կողմից պարբերաբար տեղահանվել-բերվել են շրջակա այլ հնավայրերից (Գլան, Ավանիկ, Վանստան, Վանք), որի հետևանքով, կտրվելով պատմական միջավայրից, վերջիններս մասամբ կորցրել են իրենց բուն արժեքն ու նշանակությունը:

Հնավայրի տարածքում առկա խաչքարերի և մեկ տապանաքարի վրա պահպանվել է Ժ-ԺԴ դդ. վերաբերող շուրջ 8 վիմագիր: Դրանցից հիշատակման է արժանի Խոսրովանույշ թագուհու 959 թ. արձանագրությունը՝ փորագրված սրբատաշ բազալտե քարին (չափ.՝ 175 x 60 x 32 սմ): Ի դեպ, քարը փոխադրվել է Ավանիկ գյուղատեղիից: Ստորև ներկայացնում ենք վիմագիրը.

ՆՀ եւ Ը (1029) թուի(ին)[6] *յանուն ա(ստուծո)յ ես՝ Խոսրովանոյշ թագուհի/ի*[7], *ազատէցի զմանկանց շարիյատս*[8] *վասն Աշոտոյ արեւշ/ատութեան եւ մեր որդեացս Գագկա*[9] *եւ Սմբատա*[10] *եւ Կէտա-*

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 444:

2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 555-558:

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 333:

4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 6-7.

5 ПКЭГ. 1908. Отд. I. С. 71.

6 ՆՀԸ թվականը չի համապատասխանում արձանագրության մեջ հիշատակվող անձանց կենդանության և գործունեության ժամանակաշրջանին, ուստի Ա. Քալանթարն առաջարկում է տասնավորն ընթերցել ոչ թե Հ, այլ Ժ, այսինքն՝ ՆԺԸ 963՝ գտնելով, որ Հ-ն սխալմամբ է փորագրվել (**Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 61): Ս. Ավագյանն էլ, չհամաձայնելով վերծանման այս տարբերակին, առաջարկում է *Ն Հայոց եւ Ը* 959 ընթերցումը (**Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 285):

7 Հայոց թագուհի, որն ամուսնու՝ Աշոտ Գ Ողորմած Բագրատունու հետ (վխճ. 977) շինարարական լայն գործունեություն է ծավալել:

8 Շարիատ՝ հողատեր ավատատիրոջ օգտին բնամթերքով, բերքի կամ եկամտի 1/10-ողի չափով վճարվող տուրք (**Մանանդյան Հ.**, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Երկեր, Դ, Երևան, 1981, էջ 145-155):

9 Գագիկ Ա Հայոց Բագրատունի թագավոր (990-1020):

10 Սմբատ Բ Տիեզերակալ Հայոց Բագրատունի թագավոր (977-990):

յի/ն[11] *եւ իմ մէղացս թողութեան եւ իմ ծնողոցն: Արդ, որ հակառակ կա այ/ս գրոս կամ Բագրատունի կամ ազատ կամ սալուք*[12]*, նզովեալ էղիցի յա/մէնակալէն ա(ստուծո)յ եւ ի ս(ուրբ)ք երր(որդութենէն), :ՅԺԸ: (318) հա(յ)րապետացն կապեալ է/ղից հոգով եւ մարմ(ն)ով եւ Բագրատունի ազգիս մեղացն տ(է)ր է/ղիցի առաջի ա(ստուծո)յ, իսկ կատարիչք հրամանաց իմոց աւրհնեալ էղ(իցին): / Ես գրեցի՝ Մաթեոս միայնակեացս Տար/աւնէցիս:*

Հրատ. **Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 60-61:

Ծանոթ. վիմագիրն արժեքավոր է ինչպես կարևորագույն իրադարձության, այնպես էլ Բագրատունյաց տոհմի վերոհիշյալ պատմական անձանց հիշատակման առումով:

ՈՒՐԾ ՔԱՂԱՔԱՏԵՂԻ

39.957500 N, 44.875583 E

Միջնադարյան Հայաստանում Ուրծ անվամբ հայտնի էին գավառ, գետ, լեռնաշղթա և գյուղ (վերջինս հիշատակվում է նաև որպես ավան կամ գյուղաքաղաք): Այդպես էր կոչվում նախարարական այն տոհմը, որը, իբրև հայրենական ժառանգություն, տիրում էր համանուն գավառին:

Բնակավայրի հիմնադրման վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել, սակայն գրավոր աղբյուրներում հիշատակվում է՝ սկսած վաղ միջնադարից: Բազմադարյան պատմության ընթացքում Ուրծն առանձնապես ծաղկուն ու բարգավաճ է եղել Դ-Է և ԺԱ-ԺԵ դարերում: 1457 թ. այնպիսի մեծ հռչակ էր վայելում, որ տեղում գրված ձեռագրերից մեկում բնորոշվել է այսպես. «...ծաղկաւէտ բուրաստանս ի գաւառս Արարատեան, ի հոյակապ և ի նշանաւոր գեւղս, որ կոչի Ուրծ...»[1]: Դադարել է գոյություն ունենալ 1604 թ. բռնագաղթից հետո: ԺԸ դարում գյուղաքաղաքի ավերակներում հանգրվանել են թյուրքական խաշնարած ցեղեր, որոնք բնակավայրին տվել են օտար և պատահական նոր անուն՝ Ղարաբաղլար:

Ուրծ գյուղաքաղաքի նախարարական շրջանի նյութական մշակույթի հուշարձաններից մեզ են հասել բերդի և միանավ եկեղեցու (23 x 10,75 մ) մնացորդները: Եկեղեցու չափերն իսկ վկայում են տեղի բնակավայրի բազմամարդ լինելու հանգամանքը, իսկ բերդի ամրակուռ

11 Ըստ Ս. Ավագյանի՝ Կետան Աշոտ Գ արքայի և Խոսրովանույշ թագուհու դուստրն է (**Ավագյան Ս.**, նշվ. աշխ., էջ 285): Ի դեպ, անհայտ է՝ ունեցե՞լ են այս անունով դուստր, թե՞ ոչ: Հ. Մելքոնյանն ու Գ. Սարգսյանն էլ ենթադրում են, որ կարող էր լինել արքայական ընտանիքի երրորդ զավակի՝ Գուրգենի (Կյուրիկե Ա) անվան փաղաքշական ձևը կամ գրչի շփոթ (**Kalantar A.**, նշվ. աշխ., էջ 61):

12 Սալուք՝ ռամիկ, շինական (**Ավագյան Ս.**, նշվ. աշխ., էջ 283-287):

1 ԺԵԱ, էջ 368:





դիրքն ու խոշոր քարերով շարված և ատամնաշար բուրգերով հզորացված պարսպապատը շեշտում են պաշտպանական այդ շինության ռազմավարական նշանակությունը:

Մեզ է հասել նաև պաշտամունքային երեք հուշարձանախումբ ևս: Դրանցից արևմտյանը, որը գտնվում է Խոսրով գետի աջակողմում, կիսաբոլորակ չորս աշտարակներով ամրացված հզոր շրջապարսպի ներքո գտնվող, համակ սրբատաշ քարերով կառուցված միանավ եկեղեցին է: Ըստ հյուսիսային պատին ներքուստ փորագրված արձանագրության՝ *«...[եղբայր]աբար բնակեցայ ի Տափս»*, կառուցվել է ԺԳ դ. վերջին: Գրավոր աղբյուրներում հիշատակվում է Տափի բերդ ձևով, մինչդեռ մերձակա գյուղերի բնակիչներին հայտնի է Գևորգ Մարզպետունու բերդ անվամբ[2]: Տափի վանքը՝ որպես գրչօջախ, վկայված է Բարսեղ գրչի 1495 թ. ստեղծած Սաղմոսարանի հիշատակարանում. «...ի գեղայքաղաքիս, որ կոչի յՈւրծ, ի սուրբ ուխտս, որ կոչի Տափի վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբիս...»[3]:

Երկրորդ եկեղեցին՝ հարավից կից մատուռով, գտնվում է Տափի բերդ-եկեղեցու դեմ հանդիման՝ 1 կմ արևելք: Սա նույնպես կառուցված է եղել համակ սրբատաշ քարերով, սակայն գտնվում է ավերակ վիճակում:

Երրորդ անանուն և դարձյալ ավեր եկեղեցին Ուրծ գյուղաքաղաքի արևելյան եզրին է: Արևմուտքից կից ունի նույնպես ավերակ գավիթ, իսկ շուրջը՝ խաչքարերով ու տապանաքարերով գերեզմանոց:

Գյուղաքաղաքում ԺԵ դարում ստեղծված ձեռագրերից հնագույնը վերաբերում է 1427 թ. «...ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբիս, ի վանս, որ կոչի Ուրծայ, առ ոտն վարժապետիս մերոյ Սարգսի, և այլ միեղէն եղբարցս, որ աստ են հաւաքեալ...»[4]:

1491 թ. Վրթանես կրոնավորը հեղինակել է մի ձեռագիր Հայսմավուրք և հիշա-

2 Տափի բերդ-եկեղեցին վերանորոգվել է 2008-2009 թթ.:

3 ԺԵԳ, էջ 211:

4 ԺԵԱ, էջ 368:

տակարանում նշել. «...ի գաւառս Արարադեան, ի յանապատիս յՈւրծայ, որ կոչի Արջառէրեկ, ընդ հովանեաւ սուրբ Սարգսի և սուրբ Յակոբի...»[5]:

Հնավայրի տարածքում պահպանվել են նաև բազմաթիվ շինությունների մնացորդներ:

ԱՂԱՍԻՊԱԿԵՐ

39.979389 N, 44.877889 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 8,5 կմ հյուսիս-արևելք՝ Վեդի գետի Խոսրով վտակի միջին հոսանքի շրջանում՝ լեռնային տեղանքում:

Հայտնի է նաև Աղասիպեկլու, Աղասիբեկլու անվանաձևերով (վերջին ձևով՝ նաև 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում):

Որպես հայաբնակ գյուղ՝ գոյատևել է մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դարի կեսերին հայաթափ գյուղատեղին բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1873 թ. մտնում էր Վեդիբասարի կազմում և ուներ 100 բնակիչ[1]: 1908 թ. Երևանի գավառի IV Ոստիկանական տեղամասի Վեդիչայի գյուղական համայնքի բնակավայրերից էր և ուներ 208 քուրդ բնակիչ[2]: Ի դարի կեսերին լքվել է բնակավայրերի խոշորացման հետևանքով:

Գյուղատեղիում պահպանվել են տնատեղերի մնացորդներ և կոտրատված մի քանի խաչքարեր:

ԱՂՍ

39.917139 N, 45.008472 E

Այս անվամբ հայտնի գյուղատեղին գտնվում է Ուրցաձոր գյուղից 16 կմ արևելք՝ Վեդի գետի Արմիկ վտակի աջափնյա սարահարթին:

Հայտնի է նաև Ախիս, Ախիս Մեծ, Հախըս, Հախս, Հաղս, Դաշնով և Ջղին Դաշնով[1] անվանաձևերով:

Երբեմնի գյուղի անցյալի մասին տեղեկություններ հայտնի չեն: Սակայն տարածքում պահպանված նյութական մշակույթի տարաբնույթ հուշարձանները փաստում են, որ հայաբնակ է եղել առնվազն Թ դարից (առավելապես նշյալ դարաշրջանով թվագրվող խաչքարերը) և Ուրծ գավառի հնագույն բնակավայրերից էր: Հայաթափվել է ԺԷ դարի սկզբին, իսկ ԺԹ դարի կեսերից՝ դարձել մահմեդաբնակ: 1829-31 թթ. հիշատակվում է Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի ավերակ գյուղերի շարքում[2]: ԺԹ դարի կեսերից բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1873 թ. արդեն ուներ 242[3], 1908 թ.՝ 928 մահմեդական բնակիչ[4]: Նշված է նաև 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Ապաբնակեցվել է 1940-ական թթ.:

Աղս գյուղատեղիի արևելյան կողմում պահպանվել են հիմնավեր եկեղեցու, հարավային կողմում՝ ջրաղացի ավերակներ և հնաոճ խաչքարերով հարուստ գերեզմանոց: Տեղահանված խաչքարեր և տապանաքարեր կան նաև հյուսիսային կողմում՝ տնատեղերի մոտ, որտեղ էլ հայտնաբերվել է հնավայրի միակ արձանագիր հուշարձանը՝ ԺԳ դարով թվագրվող գեղաքանդակ մի խաչքար:

ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔ

40.017306 N, 45.010417 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 20 կմ հյուսիս-արևելք՝ Վեդի գետի Խոսրով վտակի աջ ափին՝ անտառապատ տեղանքում:

---

5 ԺԵԳ, էջ 169:

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

2 ПКЭГ. 1908. Отд. III. С. 16-17.

1 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 311:

2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 512:

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 511:

4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 16-17.



Պատմական անունը մոռացության է մատնվել: Պահպանված հուշարձանները թեև քիչ են, սակայն բավարար են վկայելու, որ բնակավայրը գոյություն է ունեցել առնվազն միջնադարից և գոյատևել մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դարի կեսերին բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1873 թ. մտնում էր Վեղիբասարի կազմում և ուներ 111[1], 1908 թ.՝ 563 մահմեդական բնակիչ[2]: Նշված է 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Լքվել է 1940-ական թթ. վերջերին:

Հնավայրում պահպանված կիսավեր եկեղեցին թվագրվում է ԺԲ-ԺԳ դդ.: Վասակ Խաղբակյան իշխանի որդիներից Պապաքի թողած նվիրագրի առկայությունը փաստում է վերջինիս՝ մինչև 1222 թ. կառուցված լինելը, քանզի հայտնի է, որ Պապաքը հերոսաբար զոհվել է Գանձակի ճակատամարտում նշյալ թվականին՝ Ջալալեդդինի արշավանքների ժամանակ: Միանավ թաղածածկ բազիլիկ է (արտաքին չափ.՝ 9,00 x 5,40 մ)՝ շարված սրբատաշ և կոպտատաշ քարերով: Մուտքը բացված է հարավից: Լուսավորությունն արևելյան և արևմտյան մեկական պատուհանների միջոցով է: Ամբողջությամբ պահպանվել է միայն աբսիդի հատվածը: Շրջակայքում առկա են ճարտարապետական բեկորներ, եկեղեցու մոտ տարածվող գերեզմանոցում՝ մի քանի խաչքար (երկուսը՝ արձանագիր) և համարյա ամբողջությամբ հողածածկ տապանաքարեր:

Եկեղեցու որմերին ևս պահպանվել է շինարարական և նվիրատվական բնույթի՝ ԺԱ-ԺԳ դդ. 4 վիմագիր, որոնք վերծանել և հրատարակել է Գ. Հովսեփյանը[3]:

ԱՐՄՈՔ

39.922194 N, 44.993528 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 15 կմ արևելք՝ Վեղի գետի Արմիկ վտակի ձորահովտում:

ԺԹ դարից գյուղանունը հայտնի է փոքր-ինչ աղավաղված Արմիկ ձևով, ինչպես էլ արձանագրվել է քարտեզագրության և գրականության մեջ:

Մատենագրական տեղեկություններ թեև հայտնի չեն, սակայն գյուղատեղիի զբաղեցրած տարածքն ու պահպանված հուշարձանները (կիսավեր վանք, գերեզմանական հուշարձաններ, արձանագրություններ) վկայում են, որ եղել է Ուրծ գավառի հնագույն, ընդարձակ և բարգավաճ գյուղերից: Պատմական Արմոք անունը գրված է հնավայրի ավերակներում գտնվող 1348 թ. կանգնեցված բազալտե կոթողի (210 x 78 x 23 սմ) վրա, որի ընդարձակ՝ 44-տողանոց արձանա-

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

2 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

3 **Հովսեփյան Գ.**, Խաղբակյանք..., Գ, էջ 9, Յաւելուած Ա, արձ. 11: **Նույնի**՝ Հաւուց թառի Ամենափրկիչը և նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 71:

գրությունը կարևոր է նաև աբգան ջրահարկից[1] գյուղն ազատելու գործարքի վավերացման և Տարսայիճ Օրբելյանի թոռան՝ Ջալալի և Գոնցայի որդու՝ Էլիկումի անվան հիշատակության առումով: Այս արձանագրությունը փաստում է, որ Արմոքը մտել է Ուրծի և Վեղու շրջակայքում դեռևս Սմբատ իշխանի (Օրբելյանների իշխանական տունը գլխավորել է 1253-1273 թթ.) ժամանակաշրջանից տիրույթներ ունեցող Օրբելյանների իշխանության սահմանների մեջ և ժառանգաբար անցել Էլիկումին:

Արձանագրությունն է.

Կամաւն ա(ստուծո)յ ամենակալին | առաջնորդութ(եամ)ք ս(ուր)ք Ա(ստուա)ծ/ածնին ողորմու/թ(եամ)ք եւ պարոնու/թ(եամ)ք պար(ոն) Էլիկում/ին: Որ պարոնն | մեզ ողորմած | էր: Այս մեր | գիր է Գր(ի)գորայ որդեց/ս, Արղունիս և Առուծիս, | որ տվաք: Մեր որդեցովս | Ամիրովն եւ Չրքընովս | մեր գերեզմանատանն վա/նացն թարխանութե(ան) համ/ար առաջնաքարին մեր | գեղս՝ Արմոք մեր աբգան/ատուէր մեր մեք զաբգանն գ/եղին թողաք և գեղին մի/աբանութ(եամ)ք Գր(ի)գորոյ և այլ | տանուտէրացովն մեծ/ի և փոքեր, որո զգեղին աբգան | հանե ոչ վանացս մալ, ոչխար: // Թաթ/արի մեր հա/ստատ գրիս կատար/ոխքն ա(ւր)հնին | ա(ստուծո)յ մեր/ոց և աւտար/աց: | Թվ(ին) ՉՂ/Է (1348): Վանակ/անին | առաջն/որդութ(եամ)ք կատար/եցաւ էն | բանս:

Հրատ. առաջին անգամ:

---

1 Աբգան ջրահարկի մասին մանրամասն տե՛ս **Թարխուդարյան Ս.**, Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ, «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ. I, Երևան, 1964, էջ 276-283: Ի դեպ, այս հարկը հիշատակվում է նաև Խոսրովի արգելոցի տարածքում՝ Սակռաբերդ (Մանկուկ) գյուղատեղիում գտնվող խաչքարի բազմատող արձանագրության մեջ:

ԺԹ դ. սկզբներին հայաթափ գյուղում հանգրվանել են թյուրքական խաշնարած ցեղեր: 1829-1831 թթ. մտնում էր Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի կազմում և ուներ 9 ընտանիք՝ 44 մահմեդական բնակիչ[2]: 1873 թ. նրանց թիվն արդեն կազմում էր 312[3], 1908 թ.՝ 156[4]: Ապաբնակեցվել է 1949 թ.:

Ընդարձակ գյուղատեղիի տարածքում պահպանվել են ԺԳ-ԺԴ դդ. թվագրվող Արմոքի վանքի (բաղկացած է եկեղեցուց և կից մատուռից) և նույն ժամանակաշրջանին բնորոշ մեկ այլ մատուռի ավերակներ, տապանաքարերով և գեղաքանդակ խաչքարերով հարուստ հինգ գերեզմանոց: Եկեղեցին կապտավուն սրբատաշ բազալտից ուղղանկյուն շինություն է (7,0 x 4,50 մ), որն ունի ինքնատիպ՝ անխորան հորինվածք: Խորանի հատվածն արտահայտված է սոսկ նրանով, որ փոքր-ինչ բարձրությամբ զատված է աղոթասրահից: Եղել է թաղածածկ: Միակ՝ արևմտյան մուտքի երկու կողմում ագուցված են նրբակերտ խաչքարեր: Շարվածքը պահպանվել է մինչև 1 մ բարձրությամբ: Եկեղեցուն հարավից կից մատուռը թաղածածկ, կիսաշրջանաձև աբսիդն արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ ներառված, սրբատաշ բազալտից կառուցված, 3,60 x 2,35 մ չափերի փոքր շինություն է: Շրջակայքում առկա են ճարտարապետական բազմաթիվ բեկորներ, այդ թվում՝ քանդակազարդ և արձանագիր: Գյուղատեղիի մյուս մատուռն ամբողջովին ավերված է: Ընդգծվում են միայն վերջինիս հիմքերը:

Եկեղեցու որմերին, գեղաքանդակ խաչքարերին պահպանվել է նվիրատվական և հիշատակագրային բնույթի ԺԲ-ԺԴ դարերին վերաբերող 10 վիմագիր:

ԱՐՁԱՆՈՑ

39.958944 N, 45.039722 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 19,5 կմ հյուսիս-արևելք՝ Ջերմանիս հնավայրից 1 կմ հյուսիս-արևմուտք՝ բարձրադիր լեռնալանջին:

Պատմական անունը մոռացության է մատնվել: Հայտնի է Մահմեդաբաղ, Մեհմեդ անուններով: Արջանոցը տարածքի նոր ժամանակաշրջանի անվանումն է:

Ուրծ գավառի երբեմնի հայաբնակ գյուղը գոյատևել է մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դ. կեսերին բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1873 թ. ուներ մահմեդական 34 բնակիչ (6 տուն)[1]: Խորհրդային տարիներին ամայացել է:

Հնավայրում պահպանվել է միայն միջնադարյան ավերված փոքր գերեզմանոցը, որի տապանաքարերից երկուսը և խաչքարերից մեկն արձանագիր են: Վերջինիս վիմագիրը վկայում է, որ 1551 թ.

2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 555-558:
3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:
4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

ոմն Ներսես Երևանցի, ունենալով հողատիրական իրավունք[2], «շինել» է գյուղ[3]: Կարծում ենք, որ «շինել» բառը պետք է հասկանալ ոչ թե հիմնադրել իմաստով, այլ վերաշինել, քանի որ գերեզմանոցում առկա են առավելապես հին խաչքարեր և տապանաքարեր: Բազալտից կերտված խաչքարի (130 x 83 x 20 սմ) քիվին, ստորին մասում և կողին 16 տող փորագրված արձանագրությունն է.

Ս(ուր)բ խաչս բար(է)խա(ւս) Նէրսէսի հոգոյ(ն): Նէրսէս Էր(է)վէնէցի եկի, գեղս շի(ն)եցի, Սաւուլդար, թվ(ին) Ռ (1551 թ.) ես՝ Ներսէս:

Հրատ. առաջին անգամ:

ՊԱՐՏԻԶԱԿ

39.947000 N, 45.031694 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 18,5 կմ արևելք՝ Վեղի գետի վերին ավազանի շրջանում:

Պատմական անունը մոռացության է մատնվել: ԺԹ դարի կեսերից ստացել է Բախչաջուղ օտար անունը, որը հայերեն Պարտիզակ անվան բառացի թարգմանությունն է: Այդ է վկայակոչում նաև Ղ. Ալիշանը. «Ի միջոցի խառնըրդոց երկոցուն վտակացն 'ի Վետի, առ ափին սորին կայ Պաղչէճիկ, ըստ անուանն պարտիզաւէտ...»[1]:

Ուրծ գավառի երբեմնի մարդաշատ գյուղի անցյալի մասին տեղեկություններ հայտնի չեն, սակայն տարածքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները, հիմնականում Թ դ. վերաբերող խաչքարերը հաստատում են, որ այն զուտ հայաբնակ է եղել առնվազն տվյալ դարաշրջանից և գոյատևել մինչև շահաբասյան բռնագաղթը: 1829-31 թթ. հիշատակվում է Հայկական մարզի Երևանի գավառի Վեղիբասարի մահալում՝ ի շարս ամայի և ավերված գյուղերի[2]: ԺԹ դարի կեսերին հայաթափ գյուղատեղիում բնակություն են հաստատում թյուրքական ցեղերը: 1873 թ. արդեն ուներ 236[3], 1908 թ.՝ 618 բնակիչ[4]: Նշված է 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Ապաբնակեցվել է 1959 թ.:

Հնավայրում պահպանվել են հողով և փլատակներով ծածկված եկեղեցու հիմքեր (կառուցված է եղել սրբատաշ բազալտից, արտաքին մոտավոր չափ.՝ 12 x 8 մ) և խաչքարերով հարուստ գերեզմանոց: Արձանագիր հուշարձաններ չեն հայտնաբերվել:

ԲՆՈՒՏ (ՊՆՈՒՏ)

39.932014 N, 45.070531 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 21,5 կմ արևելք՝ Քարկապան գետի վերին հոսանքի շրջանում՝ բարձրադիր վայրում:

Հայտնի է Պյունյուտ, նաև օտար Գարաթոփրագ անուններով: Կարաթորփախ (թարգ.՝ Սևահող) ձևով նշված է 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում:

Ուրծ գավառի երբեմնի բարգավաճ գյուղի մասին մատենագրական տեղեկություններ չունենք, սակայն տեղում պահպանված և ԺԲ դարից հայտնի նյութական մշակույթի հուշարձանները վկայում են առնվազն նշյալ դարաշրջանից

---

2 Հողատիրության պարգևատրման ձև է, որին արժանացած ավատատերերը դառնում էին իրենց տրված տարածքի ինքնիշխան տերեր՝ պարտավորվելով միայն զորքով օգնել պատերազմների ժամանակ (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 18: Պարսկական աղբյուրներ. Միրզա Սամիա, Թազքիրթ ալ-Մուլուք (Արքաների հիշատակարանը), թարգմ.՝ **Ք. Կոստիկյանի**, **Ժ. Մեշքանբարյանսի**, Երևան, 2019, էջ 249):

3 Արգելոցի Կարակոյին գյուղատեղիում պահպանվել է նույն թվականին վերաբերող և նման բովանդակությամբ ևս մեկ խաչքար:

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 444:

2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 512:

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

նրա՝ հայաբնակ լինելու մասին: Հայաթափվել է Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով: 1829-31 թթ. դեռևս ավերակ էր և մտնում էր Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի կազմում[1]: ԺԹ դ. կեսերից բնակեցվել է թյուրքական ցեղերով: 1873 թ. ուներ 138[2], իսկ 1908 թ.՝ 397 բնակիչ[3]: Լքվել է 1920-ական թթ.:

Հնավայրի տարածքում առկա են եկեղեցատեղիի և խաչքարերով գերեզմանոցի մնացորդներ:

Գյուղում հաստատված մահմեդականները, ցավոք, նախքան հեռանալը հասցնում են իսպառ անհետացնել Սբ. Աստվածածին եկեղեցին: Տարածքում սոսկ պահպանվել են ճարտարապետական առանձին բեկորներ, այդ թվում՝ արձանագիր: Առավել արժեքավոր է եկեղեցու ճակատակալ քարը, որին փորագրված է.

Ի թվ(ին) ՈԿԴ (1215 թ.) նորոգեց ...:

Միջնադարյան ավերված գերեզմանոցում պահպանվել են տապանաքարեր և տեղահանված ու ջարդոտված մի քանի խաչքար (մեկը՝ արձանագիր): Արձանագիր հուշարձանները վերաբերում են ԺԲ-ԺԳ դդ.:

ԵՐԱՆՈՍ

39.929361 N, 44.942667 E

Այս անվամբ հայտնի գյուղատեղին գտնվում է Ուրցաձոր գյուղից 11 կմ արևելք՝ Վեդի գետի միջին հոսանքի շրջանում՝ լեռնային տեղանքում:

Հայտնի է նաև Երանիս, Կերանիս անվանաձևերով: Գյորանիս անվամբ հիշվում է 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում:

Ուրծ գավառի երբեմնի հայահոծ գյուղի պատմության վերաբերյալ տեղեկություններ չունենք, սակայն տարածքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները վկայում են, որ այն հայաբնակ է եղել առնվազն Թ դարից և գոյատևել մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դարի կեսերից հայաթափ գյուղատեղիում բնակություն են հաստատել թյուրքական խաշնարած ցեղերը: 1873 թ. ուներ 13 տուն՝ 113[1], իսկ 1908 թ.՝ 184 մահմեդական բնակիչ[2]: Լքվել է 1930-ական թթ. վերջերին:

Հնավայրի արևմտյան կողմում՝ բլրալանջին, պահպանվել են հիմնավեր եկեղեցին և խաչքարերով ընդարձակ գերեզմանոցը: Եկեղեցու շուրջ առկա են ճարտարապետական բեկորներ, իսկ Թ-ԺՁ դդ. վերաբերող գերեզմանոցում՝ տապանաքարեր և բազմաթիվ խաչքարեր: Պահպանվել են նաև սակավաթիվ արձանագրություններ:

ՁԻՄՄԻ

39.998306 N, 44.968611 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 16 կմ հյուսիս-արևելք՝ Վեդի գետի վերին ավազանի շրջանում:

Ուրծ գավառի հնամենի բնակավայրերից է, որի պատմական անունը մոռացվել է: Թյուրքական եկվոր ցեղերից ստացել է Ձիմմի օտար անվանումը, որն ունի իսլամական պետության հպատակ ոչ-մուսուլմաններ նշանակությունը[1]:

Գյուղի պատմությանն առնչվող մատենագրական որևէ տեղեկություն չունենք, սակայն հնավայրում պահպանված սակավաթիվ խաչքարերը փաստում են, որ այն զուտ հայաբնակ է եղել առնվազն Թ

1 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 511:
2 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551, 444:
3 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551: Ի դեպ, հիշատակում է նաև Երանիս ձևով (նշվ. աշխ., էջ 444):
2 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

դարից: Իսպառ ամայացել է 1604 թ. շահաբասյան բռնագաղթի հետևանքով: 1829-31 թթ. հիշատակվում է Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի ամայի և ավերակ բնակավայրերի շարքում[2]: ԺԹ դ. կեսերից անմարդաբնակ գյուղի տարածքում բնակություն են հաստատում թյուրքական ցեղերը: 1873 թ. արդեն ուներ 29 տուն՝ 184[3], իսկ 1908 թ.՝ 259 մահմեդական բնակիչ[4]: Զիմմի անվամբ նշված է 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Լքվել է 1940-ական թթ. վերջերին (բնակիչները տեղափոխվել են Աղրբեջան):

Գյուղատեղիի տարածքում պահպանվել են հիմնավեր եկեղեցու մնացորդներ և խաչքարերով փոքր գերեզմանոց: Հայտնաբերված միակ արձանագրությունը կրում է 1161 թ. կերտված մի խաչքար:

ԻՆԳԱԼԱ (ԱՂՍ ՓՈՔՐ)

39.929139 N, 45.011583 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 16,5 կմ արևելք՝ Վեդի գետի վերին ավազանի շրջանում՝ Աղս գյուղատեղիից հյուսիս:

Ուրծ գավառի երբեմնի այս փոքր գյուղի պատմական անցյալի մասին մատենագրական տեղեկություններ չունենք, սակայն պահպանված նյութական մշակույթի սակավաթիվ հուշարձանները և զբաղեցրած տարածքը վկայում են, որ այն առնվազն միջնադարից եղել է հայաբնակ և գոյությունը պահպանել մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դարի երկրորդ կեսին հայաթափ գյուղատեղիում հաստատվել են թյուրքական ցեղերը, որոնք էլ բնակավայրին տվել են Ինգալա (Ինկալա) օտար անունը: Վիճակագրական տվյալներ հայտնի են՝ սկսած 1886 թ.-ից (ուներ 113 մահմեդական բնակիչ)[1]:

Հնավայրում պահպանվել են եկեղեցու ավերակներ և խաչքարերով գերեզմանոց: Հայտնաբերված միակ վիմագիրը փորագրված է եկեղեցու հյուսիսային պատին.

... արդենց գնած այգին ի ս(ուր)ք ... արդոյն այս եկեղեցու մերո ի ...ես՝ Մարգարէ աշակերտ Մխիթարա ...միայբանքս ըստացան Դ (4) պատարագ զԱռաքելոց տաւնին՝ Ա (1) Մխիթար(ա), Ա (1) Բախտաւո(րա), Ա (1) Մարգա(րա), Ա (1) ..., խափանինք, դատի յԱ(ստուծո)յ:

Հրատ. առաջին անգամ:

ԽՆՈՒՏ

39.945944 N, 45.062583 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 21 կմ արևելք՝ Վեդի գետի վերին ավազանի շրջանում՝ գեղատեսիլ սարահարթին:

Վկայվել է նաև Խեմուտ ձևով: Ուրծ գավառի երբեմնի այս բնակավայրի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չունենք, սակայն տեղում պահպանված և առնվազն մինչև Ժ դ. հասնող նյութական մշակույթի հուշարձանները փաստում են, որ այն, բազում դարեր զուտ հայաբնակ լինելով, գոյատևել է մինչև 1604 թ. շահաբասյան բռնագաղթը: 1829-31 թթ. Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի ամայի և ավերակ գյուղերից էր[1]: ԺԹ դ. կեսերից բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1873 թ. ուներ 114[2], 1908 թ.՝ 315 մահմեդական բնակիչ[3]:

---

1 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, Երևան, 1961, էջ 357:

2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 512:

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

1 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 522:

1 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 512:

2 **Ալիշան Ղ.**, էջ 551:

3 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

Գրանցված է 1911 թ. Կովկասի հինգ-վերստանոց քարտեզում: Լքվել է 1920-ական թվականներին:

Խնուտ գյուղատեղիի տարածքում պահպանվել է ավերված փոքր գերեզմանոց, որը, ըստ առկա խաչքարերի և տապանաքարերի, թվագրվում է Ժ-ԺԶ դդ.: Արձանագրություններ չեն հայտնաբերվել: Նկատելի են նաև դամբարանադաշտի հետքեր:



ԽՈՍՐՈՎ

40.016889 N, 44.913583 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 13,5 կմ հյուսիս-արևելք՝ Վեդի գետի Խոսրով վտակի վերին հոսանքի շրջանում՝ անտառապատ տեղանքում. «...գիւղն Խոսրով, թերեւս յանուն որդւոյն Տրդատայ տնկողի մայրեաց, զի և տեղին անտառային է...»[1]:

Ուրծ գավառի հնամենի հայահոծ բնակավայրերից է, որի պատմական անցյալի վրա ևս լույս են սփռում տարածքում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանները: Ըստ դրանց ժամանակագրական ընդգրկման՝ այն առավել ծաղկուն և բարգավաճ է եղել զարգացած միջնադարում: Որպես հայաբնակ գյուղ՝ գոյությունը պահպանել է մինչև 1604 թ. շահաբասյան բռնագաղթը: 1829-31 թթ. հիշատակվում է Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի կազմում և դեռևս ամայի ու ավերակ էր[2]: ԺԹ դարի կեսերին հայաթափ գյուղատեղին բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1873 թ. ուներ 15 տուն՝ 155[3], 1908 թ.՝ 35 տուն՝ 199 մահմեդական բնակիչ[4]: Գրանցված է 1911 թ. Կովկասի հինգ-վերստանոց քարտեզում: Բնակավայրերի խոշորացման հետևանքով 1950-ական թթ. ապաբնակեցվել է:

Խոսրով գյուղատեղիում և նրա մերձակայքում առկա են երկու եկեղեցի, վիմափոր մատուռ, խաչքարերով գերեզմանոց, ժայռախաչեր:

Հնավայրի կենտրոնում է գտնվում ԺԳ դ. թվագրվող ավերակ եկեղեցին (17,90 x 14,60 մ), որը պատկանում է զարգացած միջնադարում հայ պաշտամունքային ճարտարապետության մեջ լայնորեն տարածված ներքուստ խաչաձև, արտաքուստ՝ ուղղանկյուն, չորս անկյուններում ավանդատներով կենտրոնագմբեթ կառույցների տիպին: Միակ մուտքը հյուսիսից է: Շարվածքն իրականացված է սրբատաշ բազալտից՝ կրաշաղախի միացությամբ: Համեմատաբար լավ վիճակում է մինչև 1,5 մ բարձրությամբ պահպանված հյուսիսային պատը: Շրջակայքում առկա են ճարտարապետական բազմաթիվ բեկորներ, իսկ գերեզմանոցում՝ գեղաքանդակ և արձանագիր խաչքարեր:

Խոսրով գյուղատեղիից 2 կմ հյուսիս-արևմուտք՝ համանուն գետի աջափնյա ուղղաձիգ ժայռերում, փորված է ԺԲ-ԺԳ դդ. բնորոշ փոքր մատուռ (4,35 x 2,45 մ), որի հորինվածքային առանձնահատկություններն են ուղղանկյանը մոտ խորանն ու հարթ առաստաղը: Վերջինից ոչ հե-

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 444:
2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 512:
3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:
4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

ռու՝ Խոսրով տանող արահետի եզրին, պահպանվել են նաև ժայռախաչեր, իսկ 4 կմ հյուսիս-արևելք՝ անտառի եզրին՝ լեռան ստորոտում՝ ԺԲ-ԺԳ դդ. թվագրվող թաղածածկ, կիսաշրջանաձև աբսիդն արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ ներառված, սրբատաշ տուֆից կառուցված եկեղեցու ավերակներ (5,25 x 3,92 մ):

Հնավայրում և նրա մերձակայքում պահպանվել է շինարարական, նվիրատվական և հիշատակագրական բնույթի ԺԳ-ԺԴ դդ. 6 արձանագրություն՝ փորագրված եկեղեցու երեսպատի քարերին և խաչքարերին:

Գյուղատեղիից արևելք՝ հարավահայաց ժայռերի ստորոտում, առկա են բնական այրեր, որոնք հարմարեցվել և օգտագործվել են որպես կացարաններ (երկհարկ են):

ԿԱՐԱԿՈՅԻՆ (ՁՂԻՆ ՂԱՐԱՂՈՅՈՒՆ)

39.954667 N, 45.022917 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 18 կմ հյուսիս-արևելք՝ Վեղի գետի վերին հոսանքի աջակողմյան շրջանում՝ ձորակներով հատվող սարահարթի վրա՝ հրաշագեղ վայրում:

Գյուղի պատմական անունը մոռացության է մատնվել: ԺԹ դարի երրորդ քառորդից հանդիպում է եկվոր թյուրքական ցեղերից ժառանգված Ջղին Ղարաղոյուն, Ճիղին Գարագոյուն կամ Կարակոյունլու, Ղարաղոյուն օտար անվանումներով:

Ուրծ գավառի երբեմնի բարգավաճ և մարդաշատ գյուղի սկզբնավորման ժամանակաշրջանի մասին տեղեկություններ հայտնի չեն, սակայն հնավայրի ընդարձակ տարածքում պահպանված նյութական մշակույթի բազմաքանակ հուշարձանների ուսումնասիրությունը վկայում է, որ այն զուտ հայաբնակ է եղել

առնվազն Թ դարից և գոյատևել մինչև շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դարի կեսերից հայաթափ գյուղատեղին բնակեցվել է թյուրքական ցեղերով: 1873 թ. մտնում էր Վեղիբասարի կազմում և ուներ 376[1], իսկ 1908 թ.՝ 551 մահմեդական բնակիչ[2]: Գյուղերի խոշորացման հետևանքով Ի դարի կեսերին ապաբնակեցվել է:

1 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:
2 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

Մոտ 1500 x 500 մ տարածք զբաղեցնող ընդարձակ հնավայրում պահպանվել են հիմնավեր եկեղեցու մնացորդներ, միջնադարյան 6 գերեզմանոց, շուրջ 100 խաչքար (13-ն արձանագիր են և վերաբերում են ԺԲ-ԺԳ դդ.), խաչքարերի բեկորներ, բազմաթիվ տապանաքարեր, ջրաղաց և ձիթհան:

ՋԵՐՄԱՆԻՍ

39.954861 N, 45.053139 E

Այս անվամբ հայտնի գյուղատեղին գտնվում է Ուրցաձոր գյուղից 20 կմ արևելք՝ Վեդի գետի վերին ավազանի շրջանում:

Ջիրմանիս տարբերակով նշված է 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Ավելի ուշ ստացել է Քյոլանլու օտար անունը:

Մատենագրական տեղեկություններ թեև հայտնի չեն, սակայն մոտ 1 x 1,5 կմ տարածք զբաղեցնող հնավայրում պահպանված բազմաթիվ խաչքարերն ու տապանաքարերն արձանագրում են Ջերմանիսի գոյությունն առնվազն ԺԱ դարից, իսկ զարգացած միջնադարում՝ փաստում ընդարձակ, մարդաշատ և ծաղկուն բնակավայր լինելը:

Ուրծ գավառի հայաբնակ այլ գյուղերի նման Ջերմանիսը ևս գոյատևել է մինչև ԺԷ դարի սկիզբը՝ շահաբասյան բռնագաղթը: ԺԹ դ. սկզբին հայաթափ գյուղատեղին բնակեցվել է թյուրքական խաշնարած ցեղերով: 1829-31 թթ. հիշատակվում է Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի կազմում՝ 24 տուն՝ 105[1], իսկ 1873 թ.՝ 55 տուն՝ 545 մահմեդական բնակչով[2]: 1908 թ. Երևանի գավառի ոստիկանական IV տեղամասի Արմիկի գյուղական հասարակության նստավայրն էր և ուներ 726 խաշնարած թուրք և 2 քուրդ բնակիչ[3]: Լքվել է 1940-ական թթ.:



Հնավայրում պահպանվել են սրբատաշ բազալտից կառուցված եկեղեցու, ձիթհանի, ջրաղացի ավերակներ, գեղաքանդակ խաչքարերով և պատկերաքանդակներով հարդարված տապանաքարերով հարուստ ընդարձակ գերեզմանոց:

1 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 555-558:
2 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:
3 ПКЭГ. 1908. Отд. III. С. 16-17.

ՁՂՈՒՆ

39.985806 N, 45.001556 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 17 կմ հյուսիս-արևելք՝ Վեդի գետի Մանկուկ վտակի աջափնյա բարձրադիր սարալանջին՝ անտառապատ, աղբյուրաշատ, լճակներով շրջապատված գեղատեսիլ վայրում:

Փոքր-ինչ հնչյունափոխված Ջիղին ձևով նշված է 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Հայտնի է նաև Ջղինգյոլ և Գյոլջղին անուններով:

Ուրծ գավառի հնագույն, հայահոծ և ծաղկուն բնակավայրերից էր, որը ԺԳ դարում եղել է Վեդիի վերին ակունքների շրջանում հաստատված Մամիկոնյան իշխանական տոհմի ճյուղավորումներից մեկի կալվածքը: ԺԸ դարում նշվել է Խորվիրապի վանքին պատկանող գյուղերի շարքում[1]: Գոյությունը պահպանել է մինչև 1604 թ. շահաբասյան բռնագաղթը և միառժամանակ ամայի մնալուց հետո՝ ԺԹ դ. սկզբին, բնակեցվել թյուրքական ցեղերով: 1829-31 թթ. մտնում էր Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի մեջ և ուներ 37 տուն՝ 178[2], 1873 թ.՝ 20 տուն՝ 160[3], 1908 թ.՝ 559 խաշնարած թուրք բնակիչ[4]: Վերջիններս գյուղը լքել են 1949 թ.:

Ջղուն գյուղատեղիում պահպանվել է միջնադարյան երկու ավերված գերեզմանոց: Առաջինը, որտեղ առկա են հիմնականում տապանաքարեր, նաև՝ արձանագրվածներ, գտնվում է հնավայրի հարավարևմտյան կողմում՝ բարձունքի վրա: Առանձնապես ուշագրավ է Մարգար սարկավագի հիշատակին 1317 թ. կերտված տապանաքարը:

Երկրորդ գերեզմանոցը տարածվում է գյուղատեղիից 0,5 կմ հյուսիս՝ «Խաչի ձոր» տանող ճանապարհին՝ ավերակ մատուռի շուրջ: Տեղահանված վիճակում պահպանվել են միմյանց կից շարված տասնյակից ավելի խաչքարեր: Դրանցից եզակի է Թ-Ժ դդ. թվագրվող մի խաչքար, որի կողին նկատելի են հազարամյակների վաղեմության ժայռապատկերներ (իծագրեր): Տարբեր ժամանակաշրջանների մշակութային կնիքը կրող այս խիստ ուշագրավ հուշարձանը[5] փաստում է բնակավայրի՝ վաղնջական ժամանակներից գոյություն ունենալը:

Գյուղից 0,5 կմ հյուսիս՝ ավերակ մատուռի շրջակայքում է գտնվել նաև ներ-

1 Ջամբռ, էջ 280:

2 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 555-558:

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

4 ПКЭГ. 1908. Отд. III. С. 18-19.

5 **Կարապետյան Ս.**, Ջղուն գյուղի պատմությունից, «Արարատ» օրաթերթ, 1987, № 5, էջ 3:

կայումս Մայր տաճարի հյուսիսային պարսպապատի խաչքարերի շարքում ցուցադրվող բարձրարժեք խաչքարերից մեկը՝ 1279 թ. կերտված «Ամենափրկիչը»[6], որը ծնողների՝ Գրիգորի և Մամքանի հիշատակին կանգնեցրել է Մամիկոնյանների տոհմից իշխան Մամիկոնը: Նրբակերտ խաչքարն աչքի է ընկնում պատկերագրական յուրօրինակ լուծումներով: Դիմային երեսին խաչելության տեսարանն է, ինչպես նաև Մարիամի, Հովհաննես Ավետարանչի, Հովսեփ Արեմաթացու, Նիկոդիմոսի բարձրաքանդակները, արեգակի և լուսնի դիցաբանական պատկերները: Չափազանց հետաքրքիր է նաև ձիու վրա նստած Մամիկոն իշխանի և հովազի քանդակներով որսի տեսարան ներկայացնող պատվանդանը[7]: Բոլոր բարձրաքանդակներն ունեն անձը կամ պատկերը հավաստող համապատասխան բացատրագրեր: Փորագիր և ելնդագիր ընդարձակ արձանագրությունը վկայում է.

Տ(է)ր ա(ստուա)ծ ողորմի պարոն Գրիգորոյ եւ / Մամքանա՝հաւր եւ մաւր Մամիկոնին: / Սայ է թագ/աւոր հրէից: Արեգ/ակն, / լուս/ին: Աջ տ(եառ)ն / հոգ/ի ա(ստուծո)յ / Յ(իսուս) Ք(րիստո)ս: / Ձեռք, որ զերկինս արարին, տ/արածեցեր ի խաչիս: / Ա(ստուա)ծածին, (Յոհան)նէս: / Մ(ուր)ք եւ / հզաւր ս(ուր)ք եւ ան/մահ, որ խ(ա)չեց/ար ող/որմեայ պար/ոն Մամիկոն/ին:

Պատվանդանի վրա.

[Ես]՝ Մամիկոն, ծ[առա ա(ստուծո)յ], կանկնե/ցի զԱմենափրկիչս ի բարէ-//խա(ւ)սութ(իւն):

Հրատ. **Հովսեփյան Գ.**, Հաւուց թառի Ամենափրկիչը..., էջ 69-70: **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ, էջ 101-102: Արձանագրության 1-2, 12-19 տողերը և պատվանդանի վրա փորագրված հատվածը հրատարակել է նաև **Գ. Կարախանյանը** («ԼՀԳ», 1974, № 3, էջ 74-75):

Ծանոթ. Գ. Հովսեփյանը հնավայրում տեսել է նաև տարեթիվը («ի թվիս կամ թվին ՉԻԸ») կրող քարը, որը, ըստ ամենայնի, չի փոխադրվել Էջմիածին:

ՍԱԿՌԱԲԵՐԴ

40.006444 N, 45.004278 E

Սակռաբերդն Ուրց գավառի բերդերից մեկն է: Առաջին անգամ հիշատակում է Ղազար Փարպեցին Սագրայ բերդ ձևով: Նրա նշանակության կամ կատարած դերի մասին տեղեկություններ հայտնի չեն: Բազմավաստակ գիտնական Հ. Մանանդյանը ենթադրում է, որ նախարարական իշխանություններն ունեցել են սեփական ամրոցներ ու բերդեր, որոնք ծառայել են որպես ապաստարան պատերազմների, ապստամբությունների և այլ աղետների ժամանակ[1]: Նման եզրահանգում է կատարվել՝ հիմք ընդունելով պատմիչների հաղորդած որոշ տեղեկություններ: Փարպեցու վկայությունը վերաբերում է Սակռաբերդին. «Եւ սեպուհ մի ուրծացի, որում անուն էր Վարազներսեհ, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ, որ էր յէրդմանն ընդ նախարարսն Հայոց, նենգեալ ուխտին սրբոյ՝ երթեալ աւերէր զշահաստանն Բռնավիժի[2], և առեալ զամենայն

6 Մանրամասն տե՛ս **Հովսեփյան Գ.**, Անհետ կորչում են, «Հովիտ», 1912, № 43, էջ 679: **Նույնի՝** Խաղբակյանք..., Ա, էջ 82: Հաւուց թառի Ամենափրկիչը..., էջ 68-70: **Պետրոսյան Հ.**, Խաչքար, էջ 188-190: Ի դեպ, խաչքարը երկատված վիճակում 1968 թ. Էջմիածին է փոխադրել Ս. Բարխուդարյանը:

7 Պատվանդանի պատկերաքանդակի մասին տե՛ս **Մնացականյան Ստ.**, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակները IX-XIV դարերում, Երևան, 1976, էջ 163: Նաև՝ **Կարախանյան Գ.**, Որսի տեսարանները XIII դարի պատկերաքանդակներում, «ԼՀԳ», 1974, № 3, էջ 74-75:

1 **Մանանդյան Հ.**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երկեր, Դ, Երևան, 1981, էջ 230:

2 Տեղն անհայտ է: Հիշատակում է միայն Փարպեցին: Տե՛ս նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 739:

կարասի շահաստանին՝ դիմեալ ամրանայր ի բերդն որ անուանեալ կոչի Սագրայ բերդ, որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց»[3]:

Սակռաբերդը կրկին հիշվում է միայն ութ դար անց՝ ԺԳ դարում Ուրցաձոր գյուղից 19 կմ հյուսիս-արևելք՝ Վեդի գետի Մանկուկ վտակի վերին հոսանքի հովտում գտնվող նույնանուն՝ Մանկուկ գյուղատեղիում պահպանված, ջարդոտված մի խաչքարի վիմագրում, որն արձանագրում է Սակռաբերդը ջրահարկից ազատելու փաստը: Քանի որ ջրի հարկից կարող էր ազատվել ոչ թե բերդը, այլ բնակավայրը, ուրեմն խոսքն այստեղ, անկասկած, Սակռաբերդ գյուղի մասին է, որի գոյության ապացույցն է Վրթանես կրոնավորի՝ 1491 թ. «Ուրծայ անապատում» ստեղծած Հայսմավուրքում գրի առած հետևյալ հիշատակությունը. «Եւ տուաք ընծայ սուրբ Ստեփանոսի նախավկայիս ի գեղոյս Սակռաբերդոյ...»[4]: Վերջինիցս պարզվում է նաև, որ գյուղն ունեցել է Սբ. Ստեփանոս անունով եկեղեցի: Կասկածից վեր է, որ նույնանուն բնակավայրն ու բերդը գտնվել են իրար կից: Սակայն 1604 թ. բռնագաղթից հետո գյուղն ամայացել է, որի հետևանքով էլ մոռացվել են ինչպես վերջինիս, այնպես էլ արդեն ավերված բերդի և՛ անունը, և՛ տեղը:

Անդրադառնալով Մանկուկ[5] գյուղից արևմուտք պահպանված Հասան-Գալե բերդի ավերակներին՝ Ալիշանը ենթադրում է. «...միթէ սա՞ իցէ Սակռաբերդն»[6]: Բերդի տեղադրությանն են անդրադարձել նաև Մ. Հովհաննիսյանն ու Բ. Ուլուբաբյանը, որոնք, սակայն, հարցին սպառիչ պատասխան չեն տվել: Մ. Հովհաննիսյանը գրում է. «Սակրայ բերդը կը գտնուէր Այրարատեան Ուրց գաւառին մէջ, համանուն գիւղին մօտ, բլուրի մը կատարին վրայ, կոչուած նաեւ Սակրայ բերդ»[7]: Բ. Ուլուբաբյանն էլ միայն նշում է. «...այս բերդը Ուրցա իշխանի ամրոցն էր, ուրեմն այժմյան Վեդիի շրջանի տարածքում»[8]:

Կարծում ենք, որ եթե Ալիշանը տեղյակ լիներ Մանկուկ հնավայրի՝ ԺԳ դ. կեսերին վերաբերող խաչքարի վիմագրում Սակռաբերդի հիշատակության փաստին, ապա թերևս ոչ թե կասկածելով, այլ անվարան կպնդեր, որ Սակռաբերդը, իրոք, Մանկուկից արևմուտք գտնվող ավերակ բերդն է, իսկ Մանկուկ բնակավայրը՝ պատմական Սակռաբերդ գյուղը, որոնք գավառի շատ տեղանունների օրինակով ևս բռնագաղթից երկու դար անց տարածքում հանգրվանած մահմեդականների կողմից ստացել են պատահական, օտար անվանում՝ Հասան-Գալե (Հասանկալա, Հասանկալե):

Մեր համոզմամբ Սակռաբերդը համապատասխանում է Հասանկալա ամրոցին, իսկ պատմական Սակռաբերդ գյուղը՝ 1829-31 թթ. տվյալների հիման վրա Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի ավերակ գյուղերի շարքում Ի. Շոպենի հիշատակած Հասան-Գալա[9] գյուղին, որը հայտնի էր նաև Մանկուկ ձևով: 1873 թ. վերջինս (հիշատակված է

3 **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 292:

4 ԺԳ, էջ 170:

5 Ղ. Ալիշանը Մանկուկը հիշատակում է Մանկուք ձևով և նույնացնում Սիմեոն Երևանցու նշած Մանկուսին: Չի բացառում նաև վերոհիշյալ գյուղի նույնացումը Հավուց թառի արձանագրություններից մեկում (չի պահպանվել) հիշված Մոնկոկնի հետ: Նույնացումը սխալ է, քանի որ Սիմեոն կաթողիկոսի հիշատակած Մանկուսը գտնվել է Մազազ գավառում:

6 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 444:

7 **Յովհաննէսեան Մ.**, նշվ. աշխ., էջ 893:

8 **Ղազար Փարպեցի**, էջ 504, ծնթ. 98՝ ըստ Բ. Ուլուբաբյանի:

9 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 511:

Մանկուս, Մանկյուք ձևերով) արդեն մահմեդաբնակ էր, ուներ 100[10], 1908 թ.՝ 163 բնակիչ[11]: Մանգյուկ ձևով նշված է նաև 1911 թ. Կովկասի հինգվերստանոց քարտեզում: Լքվել է Ի դարի կեսերին:

Սակռաբերդը զբաղեցրել է գյուղից արևմուտք՝ գետի ձախափնյա խիստ դժվարամատչելի ժայռի գագաթը: Արտաքին աշխարհ-բերդ հաղորդակցումը հնարավոր է եղել իրագործել միայն բնակավայրի արևմտյան կողմից դժվարանցանելի ճանապարհով: Բերդից պահպանվել են միայն հետքերը՝ շաղախի միացությամբ երբեմնի շարվածքի որոշ քարեր, իսկ գյուղատեղիում՝ հնաոճ, ինչպես նաև գեղաքանդակ խաչքարերով ընդարձակ գերեզմանոցը: Տեղահանված խաչքարեր և տապանաքարեր են ցրված նաև հնավայրի ողջ տարածքով մեկ: Ինչպես նշեցինք, այստեղ է գտնվում Սակռաբերդի հիշատակությունը կրող բազմատող արձանագրությամբ խաչքարը[12], որը, ցավոք, տեղահանվել է և ջարդոտվել: Վերնամասը չի պահպանվել: Կերտված է բազալտից (խաչքար՝ 120 x 80 x 20 սմ, պատվանդան՝ 55 x 30 x 17 սմ): Անթվակիր է, կամ էլ տարեթվի հատվածը չի պահպանվել: Սակայն արձանագրության վերջում հիշատակված Բջնիի Գրիգոր եպիսկոպոսի անունը հուշում է խաչարձանի կանգնեցման մոտավոր ժամանակը՝ ԺԳ դ. երկրորդ կես: Վիմագիրը, որը փորագրված է դիմային երեսին, կողին և պատվանդանին, վկայում է.

... / ...մեր ... / Ք(րիստո)ս հա[ստատեցաք / եւ Դաւթի..., / զՍակռաբերդո զ...սակ, / որո աբգան թողաք ... ի / գալուստն Ք(րիստոս)ի, թէ ի մե[ր զ]աւակ է / կամ աւտարաց ել աբգան ուզե՝ / Ք(րիստոս)ի խաչէն ԳՃԺԸ (318) Հ[այր]ապետացն ս(ուր)ք առաքելոց [ն]զովե(ա)լ եղիցին: Ես՝ տ(է)ր [Գ]րիգո/ր Բջնո եպիսկոպոս, [վ]կա եմ:

Կողին.

.../ ... [Գ]Ճ[ԺԸ (318) հայ]ռապ/[ետ]աց նզով/ե(ա)լ եղիցի, ով ե/քն համ/եցո ե/ւ գալ/ուստն:

Պատվանդանի վրա.

[Ազգ]ով ծառա Գր/[իգորո] ...ց դաւ եմ: Գրող գր[իս] / ...:

Հրատ. առաջին անգամ:

ՔՍՈՒՋ

39.974611 N, 44.956944 E

Գտնվում է Ուրցաձոր գյուղից 13,5 կմ հյուսիս-արևելք՝ Վեդի գետի Մանկուկ վտակի ստորին հոսանքի շրջանում:

Ուրծ գավառի երբեմնի մարդաշատ ու բարգավաճ այս գյուղի պատմական անցյալի վերաբերյալ տեղեկություններ հայտնի չեն, սակայն պահպանված գերեզմանական բազմաթիվ հուշարձանները վկայում են, որ այն զուտ հայաբնակ է եղել առնվազն զարգացած միջնադարից և որպես այդպիսին՝ գոյատևել մինչև շահաբասյան բռնագաղթը: Թերևս ԺԹ դարի սկզբին բնակեցվել է թյուրքական ցեղերով: 1829-31 թթ. Հայկական մարզի Երևանի գավառի Վեդիբասարի մահալի գյուղերից էր և ուներ 39 տուն՝ 221 մահմեդական բնակիչ[1]: 1873 թ. նրանց թիվը հասնում էր 151-ի[2], 1908 թ.՝ 792-ի[3]:

Գյուղատեղիի հյուսիսային և հարավարևելյան կողմերում տարածվում են միջնադարյան գերեզմանոցներ, որոնցում առկա գեղաքանդակ խաչքարերի մի մասն արձանագիր է:

10 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

11 ՊԿԷԳ. 1908. Отд. III. С. 18-19.

12 Խաչքարի մասին տե՛ս **Քարխուդարյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 279:

1 **Шопен И.**, նշվ. աշխ., էջ 555-558:

2 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 551:

3 ՊԿԷԳ. 1908. Отд. III. С. 18-19.

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ԷԼԵՈՆՈՐԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Խոսրովի արգելոցն ապշեցնում է իր բուսական աշխարհով՝ այն անկրկնելի դարձնելով ողջ Անդրկովկասի տարածքում: Արգելոցում հաշվարկվում է բույսերի շուրջ 1800 տեսակ: Դա կազմում է Հայաստանի բուսատեսակների կեսից ավելին և 1/3-ողով ավելին է Բալթյան հանրապետություններից: Դրա պատճառներն արգելոցի ռելիեֆի, հողի, կլիմայի բարդությունն ու բազմազանությունն են:

Արգելոցը գտնվում է չորասեր և խոնավասեր բուսականության ներխառնման տեղանքների սահմաններում: Փոքր տարածության վրա հանդիպում են բավարար խոնավություն պահանջող ջերմասեր՝ խիտ հագեցված հնագույն երրորդական տարրերով և չորասեր բույսեր՝ հագեցված քսերոֆիլային տափաստանաանապատային տեսակներով: Այնուամենայնիվ, արգելոցի մեծ մասը գրտնըվում է չորային գոտում:

Խոսրովի արգելոցի բուսականությանը բնորոշ է լեռնային քսերոֆիտների (չոր տեղանքների բույսեր), էնդեմիկ, անհետացող հազվագյուտ տեսակների, դեկորատիվ սոխային, մշակովի բույսերի նախնիների ու մերձակա բույսերի առատությունը: Այստեղ պահպանվել են և մեր օրեր են հասել երրորդային դարաշրջանի ֆլորայի այնպիսի հնագույն վերապրուկներ, ինչպիսիք են գիհին (Juniperus), կաղնին (Quercus), խնկենին (Pistacia), աղտորը (Rhus) և այլն:

Բուսական ծածկույթի խայտաբղետությունը և խճանկարային տեղաբաշխումն անմիջական կախման մեջ են ռելիեֆի, հողի, կլիմայի բազմազանությունից, բարձրությունների մեծ տարբերությունից:

Արգելոցում գոտային կամ հատվածային տարբերակներում ներկայացված են համարյա բուսականության բոլոր չորային տիպերը: 850 մետրից մինչև 3000 մ բարձրության վրա կարելի է տեսնել այնպիսի բույսերի համակեցություններ, ինչպիսիք են՝ ավազային և օշինդրային կիսաանապատներ, ֆրիգանոիդ բուսականություն (տարբեր թփերից և կիսաթփերից, ինչպես նաև փշոտ և բարձիկային ձևերի համակեցությունների միասնություն), տափաստանների տարբեր ձևեր, գիհու կամ կաղնու նոսր անտառներ և սովորական անտառներ, բարձր լեռնային մարգագետիններ: Այստեղ կան նաև յուրօրինակ բուսական համակեցություններ, որոնք միակն են ողջ երկրագնդում, օրինակ, զառիվեր տեղակայված գիհու-տանձենու, ինչպես նաև տանձենու-ալոճենու, գիհու-արոսենու կամ գիհու-փռշնու նոսր անտառները:

Լեռնաքսերոֆիտային բուսականության հաջող զարգացմանը, բացի չոր կլիմայից, նպաստում են նաև բնական այլ գործոններ: Դրանց թվում են՝ լայնարձակ քարքարոտ, այսպես կոչված, կմախքային սարեր, ապառաժ, խճածածկ տարածքներ: Ահա այդ չոր, անբերրի լանջերը, որոնք հեռվից թվում են անկենդան անապատ, իրենց աննկատ, հազվագյուտ, գորշավուն բույսերով ապաստան են տալիս ահռելի քանակու-

թյամբ վայրի օգտակար բույսերին: Հենց այստեղ են հանդիպում մշակովի բույսերի վայրի մերձակիցները՝ եթերատու ամենաարժեքավոր դեղաբույսերը, ներկատու, դաբաղային, սննդային, դեկորատիվ, վայրի բույսերը: Դրանք բոլորն էլ համարվում են լեռնային քսերոֆիտներ:

Լեռնաքսերոֆիտային բուսականության բազամազանությունը հիմնականում կախված է այն լեռնապարների բաղադրությունից, որտեղ դրանք աճում են:

Լեռնային քսերոֆիտների խիստ տարբեր կազմին կարելի է հանդիպել հրաբխային կամ նստվածքային ապարների, կրային, ավազային, աղային և այլ հողատարածքներում:

Արգելոցի մակերեսի ընդամենը 16 %-ն են կազմում թավ անտառները, 20 %-ը՝ թփուտներով բացատները, մնացած 64 %-ը՝ լեռնային քսերոֆիտների տարբեր համակեցություններ: Սակայն, եթե հաշվի առնենք, որ Հայաստանի այն մասը, որտեղ գտնվում է Խոսրովի արգելոցը, գրեթե անտառազուրկ է, ապա անտառային մակերեսի տոկոսը զգալի կթվա:

Հարկ է նշել, որ արգելոցի գիհու նոսր անտառային զանգվածները, որոնք հատկապես լավ են մաքրում աղտոտված օդը, առավել մոտ են Երևանին: Այդ պատճառով էլ իրավացիորեն դրանց անվանում են մեր քաղաքի թոքերը: Գիհու տարբեր տեսակներ, ինչպես նաև փշատերևային ներկայացուցիչներ (սոճի, եղևնի ևն) բնորոշվում են բուրումնավետ եթերային յուղերի առատությամբ, որոնք այնպիսի չոր կլիմայում, ինչպիսին մերն է, հեշտ են գոլորշիանում՝ հագեցնելով մթնոլորտը: Չնայած եթերային յուղերի նշանակությունը նշյալ բույսերի համար վերջնականապես հայտնի չէ (ենթադրում են, որ գոլորշիանալով դրանք կանխում են բույսի գերտաքացումը ցերեկը և գերսառեցումը գիշերը, նաև նվազեցնում են գոլորշիանալը կամ պաշտպանում են մակաբույծներից), սակայն հայտնի է, որ փշատերևների եթերային յուղերը դրական, ֆիզիոլոգիական ազդեցություն ունեն կենդանի օրգանիզմների, մասնավորապես՝ մարդու վրա:

Արգելոցի բուսականության առավել արժեքավոր ընտանիքներից են բարդածաղկավորները, հացազգիները, խաչազգիները, շրթնածաղկազգիները, մեխակազգիները, վարդազգիները, հովանոցազգիները, խլածաղկազգիները, գաղտրիկազգիները և շուշանազգիները:

Արգելոցի տարածքում գերակշռող տեսակներից են բազմապտուղ գիհին, կաղնին, նշենին, արոսենու, տանձենու, փրռընշենու, փետրախոտի, գազի տարբեր տեսակները, Կոչիի ուրցը և այլն:

Միայն այս արգելոցում են աճում էնդեմիկներ՝ հազվագյուտ և անհետացող տեսակներ, որոնց թվում են Թախթաջյանի ալոխրուզան, խոսրովյան, Սոսնովսկու և Թամամշյանի տանձենիները, հազվագյուտ միջերկրածովյան, ընդհատվող տարածում ունեցող տեսակ՝ Տուրնեֆորի փռշնին, հազվադեպ հանդիպող յուրահատուկ Շովիցի խոնդատը, որի ծաղկաբույլը կարող է հասնել մինչև 100 սմ բարձրության: Արգելոցի սահմաններում գտնվում են մի շարք տեսակներ, որոնք առաջին անգամ նկարագրվել են հենց տեղում (locus classicus), ինչպես, օրինակ, Թամամշյանի արոսենին՝ Մանկուկ, Զվարթի խլածաղիկը՝ Ազատ, խոսրովյան տանձենին՝ Խոսրով գետերի հովիտներում և Ուրցի լեռնաշղթայից մի շարք ուրիշ լոկալ էնդեմիկներ: Այդ տեղերը պետք է խստագույնս պահպանել:

Շատ տեսակներ, որոնք աճում են արգելոցում, գրանցված են Հայաստանի և ՍՍՀՄ-ի Կարմիր գրքերում, ինչպես, օրինակ, օշակ մերկը, Օշեի կղմուխը, Թախթաջյանի կաթնուկը, Թամամշյանի աշանը, արտասովոր գազը, անատոլիական սիսեռը, նրբագեղ և գայլային հիրիկները:

Ինչպես արդեն նշեցինք, արգելոցում բավական հստակ է արտահայտված ուղղահայաց գոտիականությունը բույսերի տեղաբաշխման մեջ: Նախալեռնային (850 մ) և ցածրլեռնային (1300-1500 մ) գոտում ներկայացված են կիսաանապատներ և տարբեր ֆրիգանոիդ համակեցություններ: Հողն այստեղ կավախճաքարային է կամ ավազոտ, հա-

ճախ՝ աղակալված՝ ծածկված ուժեղ կամֆորային բույր ունեցող բուրավետ օշինդրով, աշանի տարբեր տեսակներով, ինչպես նաև թելուկազգիների այլ ներկայացուցիչներով: Սրանց հետ միասին աճում են արծաթափայլ երևանյան տերեփուկը, յասամանագույն անմեռուկի տարբեր տեսակներ (ծաղկման շրջանում գորշ լանջերն ընդունում են վարդագույն երանգ), նրբագեղ ատրպատականյան էնդեմիկ Սոսնովսկու և խոշոր գեղեցիկ մուշկային ամբերբոան, չափազանց հազվագյուտ, դեկորատիվ, բուրավետ, խոշոր ծաղիկներ ունեցող լիբանանյան մեխակը: Գարնան վերջին և ամռան սկզբին օշինդրի միապաղաղ մոխրագույն երանգն աշխուժացնում է Հայկական լեռնաշխարհի էնդեմիկ հմայիչ մակաբույժ Տուրնեֆորի դիֆիլիպեան: Էվոլյուցիայի ընթացքում նրանց մոտ առաջացել է բզեզների միջոցով փոշոտման հատուկ հարմարանք: Այդ գեղեցիկ ծաղկի ստորին շուրթի կենտրոնական մասում առկա է թավշե ծալքերով փքվածք, որը զարմանալիորեն հիշեցնում է ամֆիկոմա էգ բզեզի փորիկը: Դիֆիլիպեայի նուրբ բուրմունքը, ամենայն հավանականությամբ, պարունակում է նաև այնպիսի նյութեր, որոնք գրավում են արուներին: Այդ զարմանալի բույսը սովորաբար մակաբուծում է օշինդրի արմատներին, սակայն կարող է աճել նաև բարդածաղկավորների ազգակից ուրիշ խմբերի վրա:

Օշինդրի համակեցություններում գերակշռում են միամյա խոտաբույսերը: Ձմռանը և վաղ գարնանը համարյա ողջ հողը ծածկված է դաշտավլուկով: Վաղ գարնանը՝ մինչև օշինդրի վեգետացիան, հողը ծածկվում է մանր էֆեմեր բույսերով: Այդ ժամանակ են սկսում ծաղկել նաև սոխուկային էֆեմերոիդները:

Փետրվարի վերջին, մարտի սկզբին սկսում են ծաղկել գարնան առաջին ավետաբերները՝ հայկական առաջին ձընծաղիկը, մեղրային բուրմունքով մերենդերը (ծաղիկները բաց վարդագույնից մինչև մուգ վարդագույն), մանր ծաղկավոր վարդակակաչը, խայտաբղետ ծաղիկը՝ ներսից սպիտակավարդաղեղնա-

գույն, իսկ արտաքինից՝ վարդամանուշակագույն: Նույն ժամանակ են ծաղկում քրքումը, կապույտ, երկնագույն, ծիրանագույն, ցանցավոր հիրիկը: Քիչ ավելի ուշ հայտնվում են սպիտակ աստղաշուշանը (Ornithogalum) և սագասոխի ոսկեդեղնագույն աստղիկները: Առավել քարքարոտ տեղերում քիչ ուշ ծաղկում է օշինդրային կիսաանապատի գեղեցկուհի նրբագեղ հիրիկը (Oncocyclus խմբից), որի խոշոր կրեմաշագանակագույն ծաղիկները հեռվից հիշեցնում են էկզոտիկ թիթեռներ: Նրբագեղ և գայլականջ հիրիկի զարմանահրաշ ծաղիկները հետաքրքիր են ոչ միայն իրենց արտասովոր գույնով, այլ նաև նրանով, որ գիշերատեղ են ծառայում մեղուների և այլ միջատների համար: Այս հիրիկների սոնակի տերևանման թևերը կարծես միջանցք են կազմում, և նրանց մուգ, համարյա սև գույնն օրվա ընթացքում կուտակում է արևի ջերմությունը, իսկ երեկոյան, երբ սարերում ցրտում է, այս միջանցքում օդի ջերմությունը մի քանի աստիճանով ավելի բարձր է մնում: Մեր լեռնային երկրում կլիման խիստ կոնտինենտալ է՝ շոգ ցերեկներով և ցուրտ գիշերներով: Ապրիլ ամսին տարբերությունը խիստ զգալի է:

Արտասովոր գեղեցիկ են նաև այստեղ վաղ գարնանային էֆեմերոիդները՝ իքսիոլիրիոնը, երկնագույն ծաղիկներով բելեվալիայի տարբեր տեսակները, պապլորները, որի կուժանման ծաղիկները հավաքված են խիտ ողկույզներով: Լինում են երկնագույն, վառ կապույտ, մանուշակագույն, անգամ՝ սևավուն:

Գարնան վերջին, ամռան սկզբին բուսականության արտաքին տեսքը դառնում է ավելի միապաղաղ: Հունիսի կեսերին, կապված տեղումների պակասի և ջերմության բարձրացման հետ, գարնանային բուսականությունը համարյա ամբողջությամբ չորանում է, և մնում են միայն բազմամյա քսերոֆիտները, որոնց ծաղկումը նույնպես դադարում է հունիսի կեսերին: Միայն աշնանը կիսաանապատը կյանքի է վերադառնում, և սկսվում է օշինդրի ու տարբեր թելուկազգիների ծաղկումը:

Օշինդրային կիսաանապատի անբաժան տարրերից է կապարը՝ փշոտ կիսա-

թուփ՝ փռված երկար ճյուղերով, խոշոր, գեղեցիկ, բուրավետ ծաղիկներով և մուգ կանաչ պտուղներով, որոնք քիչ ուշ պայթում են և իրենց կարմիր միջուկով, սև սերմերով հիշեցնում են փոքրիկ ձմերուկներ: Դրանց հետ աճում են տարբեր գազեր, ոզնաթփեր, տերեփուկներ, կուզինիան, Օշեի տոմանտեան, պարկանման խռնդատը և այլն: Այստեղ հազվադեպ կարելի է հանդիպել արտաքնապես նման, 2-5 սմ բարձրությամբ երկու բույսի՝ գլխիկավոր ծաղկաբույլով արևելյան ոիզոցեֆալուս և հովանոցազգիների յուրահատուկ ներկայացուցիչ անցողուն հոհենակերիա: Ուրցը և իշակաթնուկն ամենուրեք են:

Խոսրովի արգելոցին շատ բնորոշ են համակեցություններ, որոնք տարածված են ցածր սարերի վրա և բաղկացած են կրից և մերգելներից: Ինչպես արդեն նշվել է, դրանք այսպես կոչված կմախքային սարերն են, տիպիկ բեղլենդներով, որտեղ խիստ արտահայտված են հողմահարվածության, դենուդացիայի գործընթացներ: Դրանց շնորհիվ առաջանում են ռելիեֆի տարբեր էոլյան ձևեր (հին հունական դիցաբանության մեջ Էոլը (Aiolos) քամիների աստվածն է), որոնք քամու հետևանք են: Շատ գեղեցիկ են Երանոսի լեռնազանգվածի կիրճի էոլյան նուրբ վարդագույն, կրեմային, կարմրամանուշակագույն պատկերները: Չի կարելի անտարբեր մնալ՝ տեսնելով էոլյան սյուների, բուրգերի և երկնքի կապույտ ֆոնի վրա Գեղարդի շրջակա լանջերը՝ պատված վարդագույնի տարբեր երանգներով ծաղկող նշենիներով:

Այդ չոր, քարքարոտ լանջերին բնորոշ են ֆրիգանոիդ բուսականության քսերոֆիտային համակեցությունները:

Կմախքային սարերի լանջերի բուսական խմբավորումները բավականին շարժուն են՝ կապված ռելիեֆի չափազանց

Վարդակակաչ Յուլիայի

Դիֆիլիպեա Տուրնեֆորի

շարժունականության հետ: Բացի դրանից՝ բուսականությունը քսերոֆիտազացված է, լի է գաճաճ, փշոտ տարբեր թփերով և բարձիկային բույսերով, որոնք առավել լավ են համակերպված Հարավային Անդրկովկասի խիստ կլիմայական պայմաններին: Բուսական ծածկույթը գերխիտ չի լինում, առանձնանում է խայտաբղետությամբ և խճանկարայնությամբ:

Այստեղ կարող են աճել մանրատերև քսերոֆիտային թփեր, ինչպես, օրինակ, Ֆենցլի նշենին, քաղցր դժնիկը, ուռատերև տանձենին և այլ տեսակներ:

Միայն Ուրցի լեռնաշղթայի չոր, ժայռոտ հարավային լանջերին է հանդիպում նշանավոր, չափազանց յուրօրինակ արեցանման սապնարմատ: Այստեղով է անցնում այս տեսակի աշխարհագրական տարածման հյուսիսային սահմանը: Սա հազվագյուտ, ոչ փշոտ թուփ է, նշանավոր է նրանով, որ ճյուղերն ու մանր տերևներն այնքան խիտ են դասավորված՝ կազմելով կարծր, տձև բարձեր, որ հեռվից քարաքոսներով ծածկված քարեր կամ ժայռեր են հիշեցնում: Բարձանման աճի ձևը նպաստում է սակավ գոլորշիացմանը, որն առավել է վայրին հատուկ ուժեղ քամիների պայմաններում: Բարձիկների մեջ ջերմությունն առավոտյան ժամերին մի քանի աստիճանով ավելի բարձր է, քան մթնոլորտում և հողի վրա, և հակառակը, ցերեկվա տապին՝ ավելի ցածր: Ամուր և խոր արմատային համակարգը բույսին կայունություն է տալիս ուժեղ քամիների ժամանակ, ինչպես նաև ապահովում աճը լանջերի վրա հողի վերին շերտի բացակայության դեպքում:

Այս տեսակի բույսերը զարգանում են ծայրահեղ դանդաղ: Քիչ թե շատ խոշոր բարձերի համար անհրաժեշտ են մի քանի տասնամյակներ:

Կակաչ արևելյան

Հիրիկ նրբագեղ

Բացի բարձանման ձևերից՝ ֆրիգանայում հանդիպում են ուրիշ կիսաթփեր՝ եղեսպակ, բավեղ, աբեղախոտ, խեժավոր հիմենոկրատեր, մարիամախոտ: Դրանց թվում կան շատ եթերայուղային բույսեր:

Ֆրիգանոիդ խմբավորումներում բավականին շատ են միաշաքիլ գեոֆիտներ: Չոր կավախճաքարային լանջերին լայն տարածում ունեն մուգ մանուշակագույն թրաշուշանը, քրդական արքայածաղիկը, երկգույն վարդակակաչը և աստղաշուշանի տարբեր տեսակներ:

Չոր, կավախճաքարային, ավազոտ, քարքարոտ լանջերին կարելի է հանդիպել գեղեցիկ սապատավոր կնճիթաթերթիկի: Այդ տեսակի գլխահակ ծաղիկները հավաքված են ողկույզներով և, ի տարբերություն ազգակից արքայածաղկի, լայն բացված են, բաց կամ մուգ վարդագույն են, կենտրոնում՝ մուգ մանուշակագույն:

Ֆրիգանայի հատուկ տարատեսակներից են տրագականտնիկները, որոնց բնորոշ են տարբեր գազերը, ոզնաթփերը և եղջրակորնգանը:

Երկրորդ գոտին (1500-2400 մ) զբաղեցնում են լեռնային տափաստանները և տարբեր տիպի արիդային նոսր անտառները, որոնց մեջ հյուսիսային լանջերին հանդիպում են կաղնու անտառների կղզյակներ, իսկ արևմտյան և հարավային լանջերին՝ բուսականության այլ տիպեր:

1450-2100 մ բարձրության վրա ավելի հաճախ են հանդիպում գիհու նոսր անտառների բազմաթիվ տարբերակներ: Հյուսիսային լանջերին գիհին աճում է ավելի լավ ու խիտ: Հազվադեպ են հանդիպում դժնիկ, արևելյան խնձորենի, հունական և պարսկական արոսենի, մերկ փռշնի, ուռատերև տանձենի, վրացական թխկի, մահալեբի բալենին և այլն: Գիհու նոսր անտառների խոտային

Արքայածաղիկ բլրակային

Կնճիթաթերթիկ սապատավոր

ծածկույթում բացակայում են անտառին բնորոշ տեսակներ, և բուսականությունը կրում է խիստ քսերոֆիտային բնույթ: Խոտային ծածկույթը խիտ չէ:

Ազատ և Մանկուկ գետերի գեղատեսիլ կիրճերում, զառիվեր ավազուտային կամ քարքարոտ լանջերին կարելի է տեսնել գիհու-տանձենու նոսր անտառներ՝ վայրի տանձենու մոտ 20 տեսակներով:

Կաքավաբերդի տարածքում, Միլի և Խոսրով գետերի կիրճերում, ինչպես նաև Երանոս լեռան վրա և որոշ մասերում պահպանվել են միայն տանձուտներ՝ ամբողջովին կազմված վայրի տանձենու տարբեր տեսակներից:

Ազատ և Վեդի գետերի կիրճերում, Երանոս լեռան արևմտյան կարմրամանուշակագույն կամ վարդագույն լանջերը՝ շերտավորված կրակավի սալիկներից, Գեղարդի շրջակայքում, Ուրցի լեռնաշղթայի հարավային զառիվեր լանջերին, ծ. մ. 1500-1800 մ բարձրության վրա տարածված են նուշի նոսր անտառներ, որոնք անգին աղբյուր են սելեկցիոն աշխատանքների համար:

Խիտ կաղնու մացառուտները գտնվում են Խոսրով, Մանկուկ, Միլի գետերի կիրճերի լանջերին՝ 2300-2600 մ բարձրության վրա: Բացատներում են աճում արևելյան խնձորենին, հացենին, վրացական թխկին, սովորական արոսենին և ալոճենու տարբեր տեսակներ: Կաղնու խիտ անտառներում ցրված աճում են արոսենու մյուս տեսակները՝ պարսկական, Թախթաջյանի, Կուզնեցովի, հունական, լուրիստանյան, իսկ անտառի վերին սահմանում՝ ժայռերի մեջ՝ Թամամշյանի արոսենին: Առաջին անգամ այն հայտնաբերվել է արգելոցի Խաչաձորի տեղամասում: Վերջինս իր անունը ստացել է բազմաթիվ խաչքարերի առկայության պատճառով, իսկ Մանկուկ գետը՝ ի հիշատակ անցյալի դաժան ի-

Վարդ կիսագնդաձև

Ծուշան հայկական

ռադարձությունների, երբ վայրենաբարո թուրքերը մանուկներին նետում էին ժայռնիվար:

Լեռնային տափաստանները զբաղեցնում են լայն տարածք: Հունիս-հուլիս ամիսներին այստեղ ծաղկում են ռուսական տերեփուկը, Կոչու խեյրոլեպիսը, Օշեի և դարալագյազյան տոմանտեան և այլն:

Փետրախոտային տափաստանները տարածված են 1450-2200 մ բարձրության սահմաններում՝ Ազատ և Խոսրով գետերի կիրճերում, Խոսրով և Աղս գետերի սարահարթերում, Ուրցի լեռնաշղթայի ընդարձակ տարածքներում՝ զբաղեցնելով քիչ թե շատ հարթ, հանգիստ, թույլ քարքարոտ լանջեր: Հողն այստեղ շագանակագույն է կամ սևահող, հումուսային: Խոտածածկույթը շատ խիտ է, անգամ թույլ քամու դեպքում ամբողջ դաշտի հավասար ալեկոծությունը ստեղծում է արծաթի և բաց կանաչի երանգային շողշողման պատկերներ: Հանդիպում են նաև տափաստանների այլ տեսակներ:

Արգելոցի բոլոր հատվածներում սովորական են տրագականտային տափաստանները: Դրանք առաջանում են 1600-2400 մ էրոզիայի ենթարկված լանջերին, նախկին լեռնային տափաստանների տեղում, հատկապես՝ Ազատ, Խոսրով, Վեդի գետերի ավազաններում, Երևանոսի և Ուրցի լեռնաշղթաներում: Այստեղ հանդիպում են տրագականտային տափաստանների տարբեր տիպեր:

Տափաստանների ստորին գոտիներում գերակշռող տեսակներն են փշոտ գազերը, իսկ ավելի բարձր հանդիպում են եղջրակորնգանի խոշոր բարձերը և ոզնաթփի տարբեր տեսակների ավելի մանր բարձիկներ: Գարնանը կամ ամռան սկզբին, երբ կորնգանը խիտ ծածկված է վառ վարդագույն, բաց վարդա-

Ամբերբոա մուշկային

Հիրիկ արտասովոր

գույն, ծիրանագույն և ավելի հազվադեպ՝ սպիտակ խոշոր ծաղիկներով, տափաստանը հմայում է իր արտասովոր գեղեցկությամբ:

Խոսրովի արգելոցի երրորդ բուսական գոտին ընդգրկում է միայն չոր մարգագետիններ, որոնք ձգվում են նեղ հատվածով 2500-2600 (2800) մ բարձրության վրա: Այստեղ տեղումների քանակն ավելի շատ է: Լեռնային բազմատեսակ սևահողի հետ հանդիպում են նաև լեռնամարգագետնային հողեր: Ավելի բարձրում գտնվող խոնավ մարգագետինները և ժայռերի կուտակումները հայկական մուֆլոնի և բեզոարյան այծերի բնակավայրերն են: Գարնան վերջին այստեղ շատ գեղեցիկ է՝ շնորհիվ կարմիր կակաչի, վարդակակաչի, նրբագեղ արքայածաղկի, ոսկեգույն գորտնուկի, երկնագույն անմոռուկի, բազմազան խոլորձների, գնարբուկի և երփներանգ այլ ծաղիկների:

Խոլորձ կապկային

Հողմածաղիկ փնջային

Ֆիկարիա փնջային

ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՅԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ՄԱՐՏԻՆ ԱԴԱՄՅԱՆ, ՀՐԱՉՅԱ ՂԱՁԱՐՅԱՆ

Փորձենք Ձեզ հետ միասին շրջել արգելոցում և ծանոթանալ, թե ինչպիսի արժեքներ են թաքնված այս ոչ մեծ՝ ընդամենը 30.000 հեկտար կիսաանապատներից մինչև Արխաշիկ լեռան ձյունածածկ լանջերի տարածքում: Դրանք չափազանց հորասեր բուսականությամբ ավազուտներ են՝ քարքարոտ, ցածրահասակ թփուտների և թերզարգացած գաճաճ ծառերի առկայությամբ, օշինդրային կիսաանապատներ ու հոր լեռնատափաստաններ:

Արգելոցի հոր, ջրասակավ լեռնալանջերին փռվում են փշատերև, առավելապես գիհու նոսր անտառները: Մնացորդային տպավորություն թողնող սաղարթավոր անտառները հավանաբար դարեր շարունակ հատած հաստաբուն կաղնիների և այլ ծառատեսակների բներից հասակ առած շիվեր են: Անտառից վեր՝ դեպի Արխաշիկի լանջերը, ալպիական մարգագետիններ են՝ ծածկված երփներանգ բազում ծաղիկների կանաչ գորգով: Խոսրովի բնապատկերի անբաժանելի մասն են կազմում արագահոս գետերը, ժայռագոյացումները, քարացրոնները, որոնք քիչ թե շատ տարածվում են անապատներից մինչև ալպիական մարգագետինները:

Հայ մատենագրական աղբյուրներից հայտնի է, որ հին Հայաստանում բնագիտական մտքի զարգացման արշալույսին (IV-XVIII դդ.) ժամանակի բնափիլիսոփաները, մատենագիրները, մանրանկարիչները ոչ միայն քաջածանոթ են եղել կենդանական աշխարհին, մասնավորա-

պես թռչնաշխարհին, այլև հստակորեն ճանաչել ու տարբերել են դրանց տեսակները և մեզ փոխանցել այդ մասին ինչպես գրավոր, այնպես էլ գունազարդ պատկերների ձևով որպես տեղեկություն:

Խոսրով Կոտակ թագավորը IV դարում ձեռնարկում է արհեստական անտառի տնկման աշխատանքներ Արաքսի հովտում՝ Արմավիրից մինչև Երասխ: Թագավորի այս որոշումը, անշուշտ, բնապահպանական գաղափարի իրականացում է, որը մեր ժամանակների գնահատմամբ համազոր է արգելոցի գաղափարին: Պատմական անցյալի 1600 տարիներից ի վեր Խոսրովի պետական արգելոցում դեռ գոյատևում և պահպանվում է թռչունների ավելի քան 40 տեսակ (քարակաքավ, լորաճուռակ, հոպոպ, անտառային կաչաղակ, սպիտակ արագիլ, լոր, մոխրագույն կռունկ և այլն): Դրանցից շատերի պատկերները մենք տեսնում ենք X դ. մանրանկարչական աշխա-

տանքներում, իսկ գրավոր տեղեկությունները՝ IV դարի բնափիլիսոփա Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք» աշխատության մեջ:

Հայաստանի կենդանական աշխարհի մեծ գիտակ Ս. Դալի վկայությամբ Խոսրովի արգելոցի Ուրծի լեռնազանգվածի սահմաններում հայտնաբերվել են երկկենցաղների, սողունների, թռչունների և կաթնասունների 44 տեսակների ոսկորների մնացորդներ, և 2000 տարի առաջ այստեղ գոյություն են ունեցել ազնիվ եղջերուն, կուլանը (վայրի ավանակ), իսկ տարածքը ծածկված է եղել խիտ անտառով:

Արշավի մեկնելուց առաջ ստուգեք ձեր ճամպրուկը, արդյոք ուսապարկում կա՞ն բոլոր իրերը (համապատասխան հանդերձանք, հեռադիտակ, սնունդ և այլն), ինչ նախատեսել եք: Եթե ամեն ինչ կարգին է, մեկ անգամ ևս ծանոթացեք ձեր ընտրած կամ ձեզ առաջարկվող երթուղու պայմաններին, արգելոցի հսկիչների սահմանափակումներին (բարձր չխոսել, չաղմկել, իսկ կրակ վառել, նախաճաշել, վրան խփել միայն հատուկ ընտրված տեղերում, ընդհանուր խմբից չհեռանալ ավելի քան 50 մ, իսկ բաց տարածությունում՝ էքսկուրսավարի թույլտվությամբ՝ մինչև 100-150 մ), և մենք կմեկնենք Երևան-Խոսրով երթուղով: 40-50 րոպե անց կլինենք արգելոցի մատույցներում, որտեղից էլ կսկսենք մեր ծանոթությունը:

Խոսրովի արգելոցի մուտքն Արարատյան հարթավայրի հարավից հատող կենտրոնական ավտոխճուղին է՝ մինչև Վեդի ավանի անապատա-կիսաանապատային տարածքները: Դրանք բլրաշատ, առաջին հայացքից անկենդան թվացող քարքարոտ կամ ցածրահասակ գորշ մոխրագույնով աչքի ընկնող օշինդրի խոտածածկն ու թփուտներն են: Այստեղ սակավ է ջուրը, խղճուկ է բուսածածկը, իսկ ծառերը՝ թերաճ:

Կիսաանապատներն առավելապես զբաղեցնում են նախալեռների հարավային զանգվածը և ձգվում ծովի մակերեսից մինչև 1500 մ բարձրության վրա: Կենդանական աշխարհը՝ միջատներից մինչև ողնաշարավորներ, ներկայացված է անապատա-կիսաանապատային տեսակներով՝ հարմարված ավազուտային բնահողի սակավաջուր պայմաններին: Գունավորման և այլ հատկանիշներով այստեղ օժտված են բարձր ջերմաստիճանների ու դրանց կտրուկ տատանումների նկատմամբ մեծ դիմացկունությամբ, խամրած գուներանգներով: Մի շարք տեսակներ, որպես ցերեկային բարձր ջերմաստիճանից պաշտպանվելու հարմարանք, ընտրել են գիշերային կենսակերպը: Այստեղ թռչունների դայլայլն ու երգը լսելի են լուսաբացից՝ երեքից չորս ժամ տևողությամբ և նույնքան էլ՝ մայրամուտից առաջ:

Խոսրովի արգելոցի կենդանական աշխարհն ունի իրարից տարբերվող երկու ուղղվածություն՝ անողնաշարավոր և ողնաշարավոր:

Անողնաշարավորների տվորական ներկայացուցիչներից են ճանճերը, մլակները, մոծակները, մորեխները, բզեզները, մրջյունները, թիթեռները և այլն, իսկ ողնաշարավորներից՝ ձկները, գորտերը, օձերը, թռչունները, մկները, գայլերը, արջերը և այլն:

Անողնաշարավորներն իրենց բազմազանությամբ և թվաքանակով գերազանցում են ողնաշարավորներին: Այսօր Խոսրովի տարածքից մեզ հայտնի է ողնաշարավորների ավելի քան 250 տեսակ: Մասնագետների կարծիքով անողնաշարավորներն արգելոցում կարող են կազմել 7000 և ավելի: Այդ մասին տեղեկությունները չափազանց քիչ են: Դրանցից այսօր հայտնի են ընդամենը 1300-ը:

Չնայած դրան՝ փորձենք ծանոթանալ արգելոցում տարածված միջատների ամենահետաքրքիր և հայտնի մի քանի տեսակներին: Առանձին ջանք չի պահանջվում. միայն մի փոքր համբերություն, և գետի ափամերձ տարածքում դուք կտեսնեք թփից թուփ թռչող, թևերը՝ ինքնաթիռի, մարմինը՝ ուղղաթիռի կառուցվածքով կանաչաերկնագույն կամ ուղղակի մոխրագույն ճպուռին (Lestes):

Միջատներից առավել աչքի ընկնող և գունագեղ են ցերեկային թիթեռներն ու բազմաթիվ բզեզները: Պահպանվում են այնպիսի հազվագյուտ թիթեռներ, ինչպիսիք են պոդալիրիուսը (Papilio poda lirius), մաքաոնը (Papilio machaon), ապոլլոնը (Parnassius apolo), քրդական դեղնաթիթեռը (Colias chlorocoma): Բոլորն էլ նման են իրար դեղնագույն կամ սպիտակ դեղնավուն երանգով, սակայն տարբերվում են չափերով, թևերի ձևով և նախշերով: Քիչ չեն ցերեկային թիթեռների սովորական տեսակները, որոնք իրենց գրավչությամբ գայթակղում են նույնիսկ անտարբեր մարդկանց: Դրանցից են կաղամբաթիթեռը (Pieris birasicae), ավրորան (Colias awrorina), զաֆրանի թիթեռը (Colias crosea), սովորական սևուկը (Neptis rivalaris), արքայաթիթեռը (Vanessa antiopa), եղնջաթիթեռը (Vanessa urticae), սաղափաթիթեռը (Argynnis pandora), կաղնու զեփյուռը (Thecla quercus), ոսկեթիթեռը (Muschampiq proto) և այլն, արգելոցում տարածված ցերեկային ու գիշերային հարյուրից ավելի տեսակներ:

Արգելոցում տարածված ցանցաթևավորներից առանձին ուշադրության են արժանի անդրկովկասյան թելաթևավորը (Neopatere sinuata) և ասկալաֆը (Ascalaphus libelluloides. ինչ-որ տեղ նաև թիթեռի է նման), երկուսն էլ՝ գրանցված նախկին Խորհրդային Միության Կար-

միր գրքում: Սրանք արտաքին կառուցվածքով, թռիչքով այնքան ինքնատիպ են, որ չեն կարող բնասերի ուշադրությունը չգրավել:

Արգելոցում տարածված միջատների բազմաթիվ խմբերի տեսակային կազմն ամբողջությամբ բացահայտված չէ. ենթադրաբար մոտ 7000-ից հայտնի է միայն 1300 տեսակ: Ի դեպ, բզեզների որոշ տեսակներ ամբողջ աշխարհում հանդիպում են միայն Խոսրովի արգելոցում, որոնց անվանում են նաև էնդեմ տեսակներ: Դրանցից են Խոսրովի սվենոպտերան (Sphenoptera khosrovica) և Գեղարդի սվենոպտերան (Sphcnoptere gehardica):

Խոսրովի արգելոցում ամենաբազմազանն ու տարածվածը բզեզների տեսակներն են: Դրանք գույնե բոլորովին էլ հազվագյուտ չեն, սակայն իրենց կառուցվածքով և գույների բազմազանությամբ գեղագիտական մեծ արժեք են ցանկացած անձի համար, ինչպես ասենք ցեռամբիքսերից կաղնու բեղավորը (Cerambyx dux), կապնոդիսներից սև ոսկեբզեզը (Capnodis miliaris), հարթաբեղավորներից կովկասյան բրոնզաբզեզը (Netocia caucasica) և կոտոշավոր բզեզը (Lucanus iberius): Վերջինս հանդիպում է միայն Կովկասի տարածաշրջանում և համարվում է էնդեմ:

Մորեխներից ամենից հանրահայտն են իտալական պրուսը (Calliptamus italicus), անապատային (Schistocerca gregaria) և եգիպտական (Anacridium aegytium) մորեխները:

Զբոսաշրջության շրջանակներում մեծ հետաքրքրություն են առաջացնում մողեսներն ու օձերը: Խոսրովի արգելոցում բավարար հնարավորություններ կան ծանոթանալու կենդանիների այդ խմբերի առավել հետաքրքիր ներկայացուցիչներին:

Երթի ընթացքում դուք կտեսնեք ժայռի վրա կամ ժայռաբեկորի ճեղքերից գլուխը

դուրս ցցած, քարացած դիրքով ձեր շարժումներին հետևող կովկասյան ագամային (Agama caucasica), որը հանրապետության մողեսներից ամենախոշորն է, մարմինը՝ պատած գորշ կոշտուկներով:

Փորձենք ուղղություն վերցնել դեպի Գորովան ավանի ավազուտները: Անապատային այս ոչ մեծ տարածքում սողուններից բնորոշ է Արևմտյան վիշապիկը (Eryx jaculus), մողեսներից՝ երկարոտ սցինկը (Eumeces schneriderii):

Անապատներից դուրս՝ դեպի կիսաանապատների և չոր տափաստանների խորքը, երջանկություն կունենաք հանդիպելու բարեկազմ օձագլուխ մողեսին (Ophisops elegans), որդանման կուրաօձին (Typhlops vermicularis), ինչպես նաև ձիթապտղագույն սահնօձին (Columber najadum), հունական կրիային (Jestudo groeca), թունավոր օձերից՝ գյուրզային (Vipera lebetina), հայկական իժին (Vipera raddei): Անտառի տարածքում առիթ կունենաք հանդիպելու բավական գեղեցիկ նախշերով քառաշերտ (Elaphe qua-

tuorleineata) և բազմագույն սահնօձերին (Coluber ravergieri), թունավոր օձերից՝ տափաստանային իժին և այլ ավելի քան 45 տեսակների:

Որպես հակապատկեր կիսաանապատների՝ այս անջրդի տարածքում տեղ-տեղ բավական ընդարձակ կանաչ դաշտերն ու խաղողի այգիներն են, որ կարծես կենդանի շունչ են հաղորդում տեղանքին: Դրանց սահմանագծում, մի պահ լարելով տեսողությունդ ու լսողությունդ, ցորենի արտի տարբեր ծայրերից տեսանելի ու լսելի է դառնում սևագլուխ դրախտապանի (Emberiza melanocephala) արուի միալար սրնգային երգը և աչքի զարնում գլխի սև նախշի և մարմնի նարնջադեղինի ներդաշնակ համադրությունը: Քիչ այն կողմ մեծանուն գրող Վախթանգ Անանյանի նկարագրությամբ հասկերի միջից լորի՝ «պիդ-պդուկ» կանչն է լսվում, թաքստոցներից անսպասելի դուրս են թռչում կորեկնուկը (Emberiza calandra) և կանեփնուկը (Carduelis canabina): Սևագլուխ չքչքանը (Saxicola targuata), նստած թփուտի ծայրին, արուին հատուկ շքեղ փետրազգեստով և մեղմ չքչքոցով բարձր դիրքից սևեռուն հայացքով էգին է սիրահետում:

Ցորենի արտերից դուրս կիսաանապատի լայնատարած դաշտերն են: Այստեղ թռչունների և ողնաշարավոր ու անողնաշարավոր այլ կենդանիների գերակշիռ մասը գրանցված է Կարմիր գրքերում՝ որպես հազվագյուտ ու անհետացող տեսակներ: Ասենք, որ Հայաստանի թռչնաշխարհի բնադրող 237 տեսակից 85-ն ապրում ու բազմանում են կիսաանապատներում, իսկ Խոսրովի արգելոցում այդ թիվը համապատասխանաբար կազմում է 140 և 37: Դրանք հիմնականում բաց տարածությունների բնակիչներ են, բները տեղադրում են գետնին՝ գաճաճ թփուտների հարևանությամբ: Այդպես



են բնադրում նաև երկբծավոր (Melano caripha), փոքր (Calandrella rufescens) ու փուփուլավոր (Galerida cristata) արտույտները: Կիսաանապատներում արտույտների ձվերը կավագույն են կամ խամրած սպիտակ՝ պտավորված գորշ կետերով: Սովորաբար բաց տարածությունների թռչունները երգում են բնից հեռու ցածր ձայնով, ինչպես արտույտները, որոնք բույնը չմատնելու համար, գետնին աննկատ սահելով ու ճարպիկ սողոսկելով բույսերի արանքով, այնպես են թաքնվում, որ կարծես լուծվել են միջավայրի գույների մեջ: Դրա պատճառով դեռ հնագույն ժամանակներից հովիվները սրանց «հովիվ–խափուկ» անունն են կնքել: Արտույտները նաև գեղեցիկ երգիչներ են, երգում են սրնգի բազմաթիվ երանգներով գարնանը և ամռանը՝ հարսանեկան թռիչքների ընթացքում:

Կիսաանապատներին բնորոշ են նաև թռչունների թփուտաբնակ տեսակները, որոնցից որոշ ներկայացուցիչներ գրանցված են Կարմիր գրքում կամ հազվագյուտի և անհետացողի կարգավիճակներով կարիք ունեն դասվելու այդ շարքում: Այս տեսակներին պատկանող անապատային (Hyppolais languida) և դալուկ (Hyppolais pallida) մորեհավերը թխսակալման ու ձագերի խնամքի հետ կապված գործողությունները կատարում են առանձին զգուշությամբ՝ խիստ լռակյաց ու թաքնված՝ թողնելով համրի տպավորություն: Կարմիր գրքից ևս մի օրինակ. կարճամատ ճնճղուկը (Carpospiza brachydactila), որն այս վայրերի ամենաբնորոշ տեսակներից է, առօրյա հոգսերը թեթևացնելու համար երգը կատարելապես նմանեցրել է ճպուռի (Cicadatra hyalina) երգին, որի միջոցով շրջապատի ճպուռներին ներգրավելով բնի տարածք՝ սնվում է այս միջատներով և դրանցով

միաժամանակ կերակրում ձագերին՝ նման ձևով ապահովելով սննդի մի մասը:

Թռչնասեր զբոսաշրջիկներին կարող են հետաքրքրել կիսաանապատներին բնորոշ մի շարք տեսակներ՝ սևավիզ (Oenante phinschii), իսպանական (Oenante ispanic), պարող (Oenante isabellina) քարաթռչնակները, ժայռային դրախտապանը (Emberiza buchanani), շիկապոչ (Cercotrychas galactates), սպիտակաբեղ (Sylvia mistacea) և երգող (Sylvia hortensis) շահրիկները, սպիտակավիզ սոխակը (Irania gutturallis), անապատային (Rhodopechys githaginea) և մոնղոլական (Rhodopechys mongolica) խածկտիկը (Pyrrhula pyrrhula), կարմրաթև ոսպնուկը (Rhodopechys saguiniea), կարմրակատար շամփրուկը (Lanius senator), սիրիական փայտփորը (Dendrocopos siriacus) և այդպես շարունակ՝ 37 տեսակ, որոնք կազմում են Խոսրովի արգելոցի թռչնաշխարհի 33 %-ը, ճնճղուկանմանների ընտրանին ու սերուցքը:

Այստեղ ձեզ անակնկալի կարող է բերել կեր հայթայթելու նպատակով գիշատիչ մի շարք թռչունների հայտնվելը: Դրանցից այս տարածքների մշտական այցելուներն են տափաստանային (Falco naumannis) և սովորական (Falco tinnunculus) հողմավար բազեները, որոնց ուշագրավ հատկանիշներից են՝ հեռու տարածությունից նշմարելով սովորական դաշտամկանը (Microtus arvalis)՝ մեծ արագությամբ սլանալ և անվրեպ որսալ նրան գետնի վրա: Այս թռչունների համար որսի միջոց են ծառայում մկնակերպ կրծողներից փոքր ճագարամուկը (Allactega elater), մոխրագույն համստերիկը (Cricetulus migratoris), պարսկական (Meriones persicus) և հարավային

(Meriones meridianus) ավազամկները: Այս և այլ գիշատիչների համար որպես կեր կարող են ծառայել մանր միջատակերներից սովորական կուտորան (Neomys fodiens), Կովկասյան սպիտակատամ սրնչակը (Crocidura gueldenstaedtii): Ասենք, որ այստեղ հաճելի տրամադրության առիթ կարող է դառնալ թփերի միջից լայնականջ (Hemiechinus auritus) ոզնու հայտնվելը, որտեղ էլ նրա գետնափոր կացարանն է՝ 1-1,5 մ խորությամբ: Գուցե հաջողվի տեսնել նաև կատուներին բնորոշ ճկունությամբ վտանգից խույս տվող մանուլին (Felis manul)՝ Խոսրովում կատվազգիների ներկայացուցիչներից մեկին:

Անտառային գոտի հասնելու պարագայում կարող եք տեսնել նաև անտառին բնորոշ մանր կրծողներ և միջատակերների որոշ տեսակներ, ինչպիսիք են՝ անտառային քնամոլը (Dyromys nitedula), որն ինչ-որ չափով սկյուռ է հիշեցնում, սովորական անտառային մուկը (Apodemus sylvaticus), փոքր (Rhinolophus hipposideros) և մեծ պայտաքիթ (Rhinolophus ferrumequinum) չղջիկները, հանրածանոթ սովորական ոզնին, որ միշտ էլ զբոսաշրջիկների զվարճալի ուղեկիցն է եղել իր բազմազավակ շքախմբով:

Ուշադիր լինելու դեպքում արգելոցի սահմաններում դուք ականատես կլինեք օդում սլացող միջերկրածովյան բազեների (Falco biarmicus) և արտույտաբազեների (Falco subbuteo) որսին: Միջին չափի գիշատիչ այս թռչունները, ի տարբերություն հողմավար բազեների, որս են անում զոհին մագիլներով առավելապես օդում ճանկելու միջոցով, որի համար էլ ստացել են որսորդ թռչուն անվանումը: Դրանց շարքին է պատկանում նաև լոռաճուռակը, որը բնակավայրերում, որպես որսի հասու միջոց, տնային թռչուններից հատկապես աղավնուն է հալածում, դրա համար էլ լավ ճանաչված է աղավնապահների կողմից:

Վաղ գարնանը լեշի ու դիակների առատության դեպքում այստեղ կարող են հայտնվել բարձր սավառնող լեշակերներից սև և սպիտակագլուխ անգղերը, իսկ առանձին դեպքերում՝ նաև գառնանգղը:

Արգելոցի անապատային գոտում ժայռաբնակ թռչունների ամենահետաքրքիր ներկայացուցիչներից են մեծ և փոքր սիտեղները, ժայռային ու քաղաքային ծիծեռնակները: Սրանք բոլորն էլ բույնը ծե-

փում են ժայռերի կամ քարերի հսկա բեկորների պատերին, թքով շաղախված ցեխով՝ անմատչելի բարձրություններին: Ծիծեռնակների բները փոքրածավալ են: Փոքր և մեծ սիտեղների՝ կավաշեն և պուլիկի վզիկի նման բների քաշը 100-150 անգամ գերազանցում է թռչունի սեփական քաշին:

Մեր երթը դեպի Խոսրովի խորքերն ու բարձունքները շարունակենք ևս մեկ հետաքրքիր և արգելոցին շատ բնորոշ տարածքով՝ չոր լեռնատափաստաններով, որն աչքի է ընկնում դարավոր գիհիների նոսր անտառներով: Դրանք իրենց ծավալներով գերակշիռ են այլ տարածքների նկատմամբ, սակայն աղքատիկ են կենդանական աշխարհի բազմազանության տեսակետից: Չնայած դրան՝ հոգ չէ, դուք այստեղ կծանոթանաք հանրապետության ամենախոշոր թռչուններից մեկին՝ սև անգղին:

Գիհու նոսր անտառներում կերի և ջրի պակասի, թաքստոցների բացակայության և խոտաբույսերի աղքատիկ լինելու հետևանքով բնակություն են հաստատում հիմնականում թռչունների՝ ոչ այնքան խոնավասեր տեսակները՝ լեռնային դրախտապանը (Emberiza cia), կարմրաճակատ սերինոսը (Serinus pusillus), այծկիթը (Caprimulgus europaeus), իսկ անտառի հարակից բաց տարածքներում՝ նաև քարաթռչնակների մի քանի տեսակներ: Այս տարածքի վերին սահմանում գիհիները միաձուլվում են սաղարթավոր անտառին. ի հայտ են գալիս թփուտներ, քարքարոտ սարալանջեր ու ժայռամերկացումներ, որոնք անփոխարինելի միջավայր են քարակաքավների (Alectoris chukar), իսկ խիտ թփուտաշատ հատվածները՝ մոխրագույն կաքավի (Perdix perdix) երամների համար:

Այժմ երթը շարունակում ենք հետաքրքրություններով լի Խոսրով գետի հունով դեպի վեր՝ նրա ակունքները տանող արահետներով: Ի դեպ, Խոսրով գետը հոսում է արգելոցի համանուն ամենագեղատեսիլ ձորակներից մեկով և նրա սահմանագիծը հատում հյուսիս-արևմուտքից: Սարն ի վեր մեր երթուղին մի կողմից անցնում է գետափով, մյուս կող-

մից՝ անտառածածկ տարածքով: Գետի արագահոս ջրերի մեջ նկատելի են կարմրախայտը (Salmo), կողակը (Varicorhinus) և բեղլուն (Barbus goctschaicus):

Այստեղ ջրի մակերեսից մի փոքր բարձր թռչելիս կտեսնեք ջրաճնճղուկին (Cinclus cinclus), որը, հաճախ առափնյա կամ ջրում կիսասույզ քարերին նստած, սև ու սպիտակ փետրազգեստն է ցուցադրում՝ էգին գրավելու կամ ուղղակի աչալուրջ հետևում է զուլալ ջրում լող տվող մանր ձկներին ու միջատներին՝ հարմար պահին որսալու համար: Այս թռչունը որս է կատարում՝ սուզվելով մինչև ջրի հատակը, այնուհետև հատակում արագ ու ազատ քայլելով՝ հետապնդում է ձկնիկներին, միջատներին, թրթուրներին և որսում նրանց՝ անցնելով բավական տարածություն:

Քիչ անց, պոչն անհանգիստ վերուվար շարժելով, գետափի կամ ջրի մեջ կիսով չափ սուզված քարերի վրա կարող են հայտնվել լեռնային խաղտտնիկը (Motacilla cinerea), մշտապես վեր պահած պոչով մատնաչափ եղնջաթռչնակը (Troglodytes troglodytes), լացող ուռենու խոնարհված ճյուղից կախված ճոճահավի (Remiz pendulinus) հրաշք ձեռնոցանման բույնը՝ գործած տասնյակ հազարավոր բուսաթելերից ու սարդոստայնից: Ջրափի ծանծաղուտներում և մարմանդ հոսող ջրերում իրենց ծարավն են հագեցնում անտառաբնակ բազմաթիվ միջատակեր ու երգեցիկ տեսակներ՝ մեծ (Parus major), երկնագույն (Parus caeruleus), փոքր (Parus ater) երաշտահավերը, երկար պոչով, փոքր գնդանման մարմնով և թավշանման փետրածածկով երկարագի երաշտահավը (Aegithalos caudatus), արշալույսիկը (Erithacus rubecula), սովորական կարմրատուտը (Phoenicurus phoenicurus), սև (Turdus merula) և երգող կեռնեխները (Turdus philomelos), սոսնձակեռնեխը (Turdus viscivorus), սևագլուխ շահրիկը (Sylvia atricapilla), ամուրիկը (Fringilla coelebs), կանաչ սերինոսը (Carduelis chloris). բոլորն էլ անտառի լուսաբացի երգչախմբի երգիչներն են, որոնք շուրջը լցնում են խնդությամբ և ակամա ստիպում ունկնդիր լինելու և ճաշակելու այդ հրաշք «սիմֆոնիան»: Անտառային «համերգի» բազմահազար հնչյուններին են խառնվում գետի ափամերձ ուռենիների վրա կտուց կտցի տված անտառային աղավնիների (Columba livia), տատրակների (Streptopelia turtur) ամուսնական զույգերի մեղմ ու միալար գվգվոցները:

Հարևան բացատում սովորական կկուն (Cuculus canorus) իր ներկայությունն է հաստատում չոր ու կտրուկ կու-կու-ով՝ համբերատար հետևելով, թե հերթական ձուն ում բնում կդնի՝ շահրիկի՞, ճանճորսի՞, թե՞ կեռնեխի: Չէ՞ որ կկուն մակաբույծ թռչուն է, բույն չի հյուսում, ձվերը դնում է սրա-նրա բներում:

Շարժվելով դեպի անտառի խորքը՝ արշավախումբը կհայտնվի գիշատիչ թռչունների տիրույթում, որը տարածվում է գիհու սաղարթավոր անտառներից մինչև ժայռերով պատնեշված ու քարացրոնոներով սահմանազատված բարձրադիր բացատներն ու կածանները: Անտառի հանդիպակաց հսկա զառիթափերը սապատավոր ուղտերի քարավան հիշեցնող ժայռակոներ են: Քարակույտերի ու ժայռերի ճեղքերից թփուտների դուրս պրծած ընձյուղները գաճաճ ծառերի համադրությամբ հարմար միջավայր են երգեցիկ թռչունների և այլ կենդանիների բնակության համար: Այստեղ ամեն ինչ շունչ է առնում շահրիկի դայլայլով, սիտեղի և եղնջաթռչնակի սուլոցներով, քարակաքավի՝ ձորից արձագանքող կվկվոցով և երկնքում քարարծվի (Aquila chrysaetos) ճիչով:

Վերջին տարիներին գիտնականներն ապացուցեցին, որ Խոսրովի արգելոցում

տարածված է գիշատիչ թռչունների 28 տեսակ (22-ը՝ ցերեկային, իսկ 6-ը՝ գիշերային): Այս վայրերը լավագույնն են համարվում որպես գիշատիչների բնադրատեղեր՝ Աղավնաժայռերից մինչև Հանդ, Մանկուկ, Բերդատակի լեռնաբազուկները: Անտառաբնակ գիշատիչ թռչուններից բնորոշ են սովորական ճուռակը (Buteo buteo), կրետակերը (Pernis apivorus), օձակեր արծիվը (Circaetus gallicus), սև ցինը (Milvus migrans), լորաճուռակը (Accipiter nisus), ցախաքլորարորը (Accipiter gentilis) և այլն: Սրանք բնադրում են ծառերին, դնում 2-4 ձու, սնվում մկնակերպ կրծողներով և այլ մանր կենդանիներով: Հավանաբար կերի պակասության հետևանքով այսօր սև ցինի բնադրագաղութը մի քանի անգամ կրճատված է արգելոցում:

Անտառի բացատի կամ հարևան հարթ սարալանջի երկնակամարում հզոր թևերով սավառնող օձակեր արծվի, կրետակերի, սև ցինի, քարարծվի, ցախաքլորի և գիշատիչ թռչունների այլ տեսակների հայտնվելը սովորական երևույթ է, իսկ զբոսաշրջիկի համար՝ անակնկալ և բավականություն: Ի դեպ, այդ անակնկալն առավել տպավորիչ է դառնում, երբ տեսնում ես, թե ինչպես օձակեր արծիվը, ճանկերի մեջ թունավոր գյուրզան կամ իժը օդում ճոճելով, շտապում է դեպի բույնը՝ կերակրելու ձագերին: Գիշատիչ թռչուններից քարարծիվը (Aquila chrysaetos), գիշանգղը (Neophron percnopterus), գառնանգղը (Gypaetus barbatus), սպիտակագլուխ անգղը (Gyps fulvus) և այլն ժայռաբնակներ են և իրենց հսկա թևերի երկարությամբ և մարմնի հզորությամբ չափազանց մեծ հետաքրքրությամբ են ներկայանում դիտողին:

Գիշատիչների այս տեսակները բնադրման համար գերադասում են զառիթափ ժայռերի քիվերն ու խորշերը: Սև անգղը (Aegypius monachus) 225 սմ տրա-

մագծով հսկայածավալ ծանր բույնը տեղադրում է դարավոր գիհու խիտ ու փլռված սաղարթի վրա:

Որպես լեշակերներ՝ այս թռչունները տարածքը հետազոտում են հսկայական բարձրություններում սավառնելու ընթացքում: Ի դեպ, դրանցից յուրաքանչյուրը դիակի մասերից յուրովի է օգտվում: Սև անգղն աշխատում է հզոր կտուցով պոկոտել մկանային հյուսվածքները, սպիտակագլուխ անգղը, գլխով մտնելով որովայնի մեջ, դուրս է բերում աղիները, թոքերը և այլ օրգաններ: Գիշանգղը հավասարաչափ օգտվում է դիակի բոլոր մասերից, իսկ գառնանգղը՝ որպես կեր, գերադասում է մկանային համակարգը և կենդանու վերջույթների հատվածները՝ ազդրը, սրունքը և այլն: Գառնանգղը սընվում է նաև կաքավներով և այլ մանր կենդանիներով: Նրա արտաթորանքը մաքուր կալցիում է (կավիճ), քանի որ գերադասում է սնվել ոսկորներով:

Նման տեսարանի ներկա լինելն այնքան էլ հավանական չէ, սակայն երջանիկ պատահականության դեպքում դուք այն եզակի ականատեսը կլինեք, թե ինչպես են փետրավոր այս հսկաները կռիվ տալիս լեշի յուրաքանչյուր պատառի համար:

Լեշակերների բազմացման դժվարությունները, ցավոք, բազմաթիվ են, դրանցից ամենաառաջնայինը համարվում է նրանց ձվերի ու ձագերի նվազագույն քանակը՝ մեկ, հազվագյուտ դեպքում՝ երկու: Այս թռչուններն օժտված չեն կենդանի որս բռնելու հատկությամբ և ապրում են՝ հույսը դնելով դիակների գոյության վրա: Պատկերացրեք, թե ինչ կկատարվի, եթե բնության մեջ չլինի բավարար քանակությամբ դիակ կամ լեշ: Սովորաբար լեշակեր թռչուններն ընդունակ են քաղցին դիմանալ 30-40 օր, իսկ առատ լեշ գտնելու դեպքում այնքան են ուտում, որ վտանգի ժամանակ ծանրությունից

ազատվելու համար փսխում են կերի մի մասը, ապա թեթևացած օդ բարձրանում:

Արգելոցի գիշատիչ թռչուններից 6-ը՝ բվեճը (Bubo bubo), եվրոպական (Otus scops), տնային (Athene noctua), թավշավոտ բվիկները (Aegolius funereus), ականջավոր բուն (Asio otus), անտառաբուն (Strix aluco) բվերի ընտանիքը կազմող գիշերային թռչուններ են: Որոշակի փորձ ունենալու դեպքում կարելի է ճանաչել՝ գիշերային ժամերին դրանց ձայները լսելով: 2-3 անգամ լսելուց հետո հնարավոր է դառնում հստակ տարազատել մեկը մյուսից: Դրանք հիմնականում խուլ, միատարր, կարճ ընդհատումներով, ողջ գիշերվա ընթացքում չդադարող ձայներ են: Գիշերը բվերին հանդիպելիս կարող եք օգտվել ձեռքի լապտերից: Ցերեկը նրանք ակտիվ չեն, և ուշադիր լինելու դեպքում կարելի է տեսնել մոտ տարածությունից ծառերի ճյուղերին, փլատակների պատերին, ժայռաքիվերին նստած կամ կարող են ձեզ հանկարծակիի բերել՝ շփոթված թռչելով մոտակա բնից: Բվերի տեսողությունը տասնյակ անգամ գերազանցում է մարդու տեսողությանը: Նրանք տեսնում են թե՛ ցերեկը և թե՛ գիշերը: Բվեճը գիշերային մթության մեջ 500-600 մ տարածությունից նկատում է մկնիկին և սլանալով որսում:

Հաճույքի հոգնածությունը ուսերին, հետճաշյա հանգստից հետո ամրապնդված, շրջապատի գեղատեսիլ համայնապատկերից նոր լիցքեր ստացած արշավականը նոր հաճույքներ փնտրելու, չտեսածը տեսնելու գայթակղությամբ երթը կշարունակի դեպի ալպիական մարգագետիններ՝ ձյունածածկ գագաթների ստորոտը, որտեղ ձնծաղկի սպիտակ ու կարճացողուն, կապույտ ու դեղին այլ ծաղիկների գորգեր են:

Այստեղ ամեն ինչ հարաբերվում է փոսուտներում պահպանված ձյան լեզվակ-



ների սպիտակի, սևահողի և քարակույտերում ձնհալից լվացված քարերի՝ խիստ հակադիր, սակայն ալպիական գոտուն բնորոշ պարզ ու կուսական գեղեցկությանը: Այն հայրենիքն է վայրի հնդկահավի (Tetraogallus caspius), ամեն անգամ նրան տեսնելիս այցելուի համար կրկին ու կրկին նոր հայտնություն է: Հայտնություն են ալպիական ճայի (Pyrrhocorax graculus) բնադրագաղութը, կարմրաոտ ճայը (Pyrrhocorax pyrrhocorax), ալպիական նրբագեղիկը (Prunella collaris), եղջերավոր արտույտը (Eremophila alpestris), ձյան ճնճղուկը (Fringilla nivalis): Ժամանակ առ ժամանակ գիշատիչներից այստեղ են այցելում գառնանգղը, գիշանգղը, սև և սպիտակագլուխ անգղերը, քարարծիվը: Սա զբոսաշրջիկի համար ևս մի հնարավորություն է Խոսրովի արգելոցում՝ ծանոթանալու թռչունների հազվագյուտ այս տեսակներին:

Արգելոցի 44 կաթնասուններից 13-ը (օրինակ՝ բեզոարյան այծը, գորշ արջը, կովկասյան ընձառյուծը) գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Կաթնասուններից է գայլը, որը մշտապես հայտնվում է այնտեղ, որտեղ առատ է որսը: Նրանք սովորաբար որս են անում ոհմակներով՝ շուրջկալի միջոցով:

Թփուտների անանցանելի մացառները թաքստոց են ծառայում գորշ արջի, լուսանի, քարակզաքիսի և այլ մանր մկնակերպ կրծողների համար: Այստեղ կերն առատ է, և արջի սննդի մեջ զգալի տեղ են զբաղեցնում հատկապես հատապտուղները, միջատները և այլ կենդանիներ: Հասուն արջի քաշը տատանվում է 190-ից մինչև 300 կգ: Գարնանը՝ մարտին, մայր արջը սովորաբար լույս աշխարհ է բերում 2 ձագուկ:

Դեպի Ուրցասարի լանջերը ձգվող տարածքներում հողմահարումից մաս-

նատված լեռնաժայռազանգվածներ են, որոնց ժայռաքիվերի վրայով ձգվող նեղլիկ արահետներն ընտրյալ վայրեր են բեզոարյան այծերի, հովազի, իսկ սարավանդները՝ հայկական մուֆլոնի համար՝ որպես ծնարաններ, ձմեռոցներ, ապահով թաքստոցներ: Բեզոարյան այծը տեղանքի խիստ մասնատված, քարքարոտ ու զառիթափ պայմաններում զարգացնում է վազքը ժամում 50 կմ արագությամբ: Զարմանք են պատճառում այծերի զսպանականման հեռահար թռիչքները՝ վտանգի պահին՝ 7-8 մ:

Մուֆլոնների համար նախընտրելի են բարձրավանդակ հարթավայրերը: Երկար տեղաշարժերից հետո նրանք հանգրվա-



նում են Ուրցասարի հարթ, թույլ թեքություններով բլրաշատ տարածքներում:

Հովազին բնորոշ են ճարպիկ ցատկերը, ծառ մագլցելը, անաղմուկ քայլվածքը, անսպասելի ու վճռական դարանակալած հարձակումը:

Արգելոցի կատվազգիներից է լուսանը, որը հովազին զիջում է միայն չափերով: Բնակվում է ժայռաճեղքերում, քարանձավներում, նույնիսկ եղեգների մացառներում: Կատվային գերազանց հատկանիշներով օժտված այս կենդանին նախապատվությունը տալիս է զոհին ճանկել թաքստոցից նրա վրա ցատկելով: Ոտքերը երկար են, պոչը՝ կարճ, գլուխը՝ մեծ:

Ամենախոշոր կճղակավորներից վարազի գոյությունն արգելոցի տարածքում պայմանավորված է անտառի՝ առավել խոնավ խիտ թփուտածածկ գետահովիտների, մացառների թաքստոցներով, կերի առատությամբ, կաղնու, հաճարի գոյությամբ, ցեխի լոգանքի հնարավորությամբ և այլն: Թե՛ վարազները և թե՛ էգ մայր խոզը կատաղի են, վտանգի պահին պատրաստ հարձակման և ուժգին հարվածի: Մարդու հետ դեմ դիմաց հանդիպելիս մայր խոզը մի քանի զգուշացնող խռպոտ մռնչոցով ուշադրությունն իր վրա է հրավիրում, մինչև կթաքնվեն ձագերը:

Բնության և կենդանական ինքնատիպ աշխարհի բազմազանությունն արշավականին անթաքույց հիացմունքի, հետաքրքրությունն ավելացնելու, բնության հրաշքները գնահատելու, բուսական և կենդանական աշխարհը պահպանելու, բնագիտական գիտելիքները խորացնելու, իսկ նմանատիպ ճանաչողական արշավները՝ առողջ ապրելակերպ վարելու և առողջությունն ամրապնդելու հնարավորություն են տալիս:



ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿ	**ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ	**ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ** **ՄԱՌԼԵՆ ՍԱԹՅԱՆ** **ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ** **ԷԼԵՈՆՈՐԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ** **ՀՐԱՉՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ** **ՄԱՐՏԻՆ ԱԴԱՄՅԱՆ**
ԽՄԲԱԳԻՐ	**ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ**
ՍՐԲԱԳՐԻՉ	**ԱՆԺԵԼԱ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ	**ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ** **ՄԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆԻ**
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔԸ	**ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ**
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ	**ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ** **ԱՐՄԵՆ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ** **ԷԼԵՈՆՈՐԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ** **ՄԱՐՏԻՆ ԱԴԱՄՅԱՆ** **ՀՐԱՉՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ** **ԿԱՐԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ** **ՀՐԱՅՐ ԲԱԶԵ-ԽԱՉԵՐՅԱՆ** **ՐԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ** **«ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ**
ԱՂՅՈՑ ՎԱՆՔԻ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ	**ԳԱՐԵԳԻՆ ԿՆՅԱԶՅԱՆԻ** (ԵՃՇՊՀ)
ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ	**2002** Թ.

ՎԵՐԱԽՄԲԱԳՐՎԵԼ Է	**2022** Թ.
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ	**ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ** **ՐԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ** **ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏՊԱԳՐՎԵԼ Է «**ԶԱՆԳԱԿ**» ՏՊԱՐԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2022

ISBN 978-9939-843-52-0
9 789939 843520

1978 Թ., ԽՈՍՐՈՎԻ ԱՐԳԵԼՈՑ
ԿԱՏԱԿ-ԻՆՔՆԱԼՈՒՍԱՆԿԱՐ
ՍՏՎԵՐԸ՝ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ